Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ-ՄԱՆԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

(2-րդ՝ բարեփոխված հրատարակություն)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1934

29 JAN 2018

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ-ՄԱՆԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հաստատված է
Հ.Ս.Խ.Հ. Լուսժողկոմատի Կողմից

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

(2—րդ՝ բարեփոխված հրատարակություն)

1. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
2. ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ
3. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
4. ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
5. ՊՈԼԻՏԵԽՆԻԿ ԱՇԽԱՏԱՆՔ (քաղաքի վարիանտ).
6. ՊՈԼԻՏԵԽՆԻԿ ԱՇԽԱՏԱՆՔ (գյուղի վարիանտ).
7. ԿԵՐՊԱՐՎԵՍՏ
8. ՅԵՐԳ-ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ
9. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1934

Տեխ. խմբ. Գ. Զենյան
Լեզվ, խմբ. յեվ Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տարրական դպրոցների ծրագրերի առաջին հրատարակությունը կազմված եր Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1931 թ. սեպտեմբերի 5-ի և 1932 թ. օգոստոսի 25-ի վորոշումների հիման վրա:

Ներկա՝ յերկրորդ հրատարակության մեջ վորոշ լրացումներ և ճշտումներ են կատարվել, հիմք ընդունելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի 1934 թ. մայիսի 16-ի վորոշումը և ռուսական կայուն ծրագրերի 1934 թվի լրացումները: Ծրագրերը վորոշ չափով թեթևացել են ավելորդ նյութերից, այնուհետև ստուգվել և ճշտվել են առարկաների միջև յեղած բնական կապն ու պատմականության սկզբունքի պահպանումը:

Ներկա հրատարակության մեջ ավելանում են՝ ֆիզկուլտուրայի ծրագիրը, գեղագրության ծրագիրը և ռուսաց լեզվի ռուսերեն ծրագիրը, վորոնք առաջին հրատարակության մեջ չեն յեղել:

Այս հրատարակության մեջ չի մտցված հասարակագիտության ծրագիրը, վոր առանձին կհրատարակվի:

ՀՍԽՀ-Ի ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

Հանձնված է արտադրության 8 օգոստոսի 1934
Ստորագրված է տպագրության համար 8 Սեպտեմբերի 1934

Գլավլիտ 8673, հրատ. 4006, պատվեր 1247, տիրաժ 5000

Պետհրատի տպարան—Յերևան

ՀԱՄԱՐ
II-27920գր

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Կ Ա Ն

«Լեզուն ռեալ գիտակցություն է» (Կ. Մարքս), «մարդկային փոխհարաբերության կարևորագույն միջոցը» (Լենին), «դասակարգային պայքարի կարևորագույն զենքը, աշխատավոր մասսաների կուլտուրական բարձրացման հզորագույն գործիքը, և առաջ է յեկել, ինչպես և գիտակցությունը, մարդկանց հաղորդակցվելու անհրաժեշտությունից» (Կ. Մարքս)։ Խորհրդային իշխանության լենինյան ազգային քաղաքականության պայմաններում, դասակարգային պայքարի ներկա էտապում այսօրվա գրական հայերենն իր արժեքով վերոհիշյալ մոմենտների խտացումն է, և մասսաների կողմից այդ գրական հայերենին տիրապետելը դասակարգային պայքարի, կուլտուրական հեղափոխության և սոցիալիստական շինարարության գործ է հանդիսանում։ Այս իսկ պատճառով՝ մայրենի լեզվի ավանդումը դպրոցում պահանջում է նյութի սիստեմավորում, մշակվածություն և հաջորդական դասավորություն. «մայրենի լեզվի ծրագիրն իսկապես պետք է ապահովի սիստեմատիկ և ճշտորեն սահմանագծված գիտելիքների մի ամփոփ շրջանի յուրացում, ինչպես և անթերի ընթերցանության, գրավոր ու բանավոր խոսքի կայուն ունակություններ» (Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1932 թ. օգոստոսի 25-ի վորոշումից)։

Այս իսկ պատճառով՝ ուսման յուրաքանչյուր տարվա ծրագրային նյութը դասավորված է ըստ հետևյալ հիմնական բաժինների.

ա). բանավոր խոսքի զարգացում.

բ). ձեռագրի ուսուցում և գրավոր խոսքի զարգացում.

գ). ընթերցանություն.

դ) քերականություն և ուղղագրություն։

Բացի այդ, տրվում է նաև գեղագրության ծրագիր:

Սակայն նյութի այսպիսի դասավորումը չի նշանակում, թե հենց այդ կարգով էլ պետք է անցնել. բոլոր բաժինների պարապմունքները պետք է գնան զուգահեռաբար և միմյանց հետ կապակցված ձևով. մասնավորապես խոսքի զարգացումը, վորպես աշխատանքի հիմնական մաս, լեզվի աշխատանքի բոլոր բաժիններում ամբողջ տարին տեղ պետք է գտնի:

Նույնը պետք է ասել նաև ընթերցանության վերաբերյալ. խոսքի զարգացման ձևերից շատերը կապված են ընթերցանության հետ: Քերականության աշխատանքի մեծ մասը նույնպես տեքստերը կարդալու հիման վրա յե կատարվում: Լեզվի դասավանդության հատկացրած ժամերը զանազան բաժինների միջև բաշխելիս նկատի պետք է ունենալ, վոր ցածր դասարաններում ժամանակի մեծ մասը հատկացվում է կարդալուն և գրելուն, իսկ բարձր դասարաններում ժամանակը համեմատական չափով բաշխվում է կարդալու, քերականության և խոսքի զարգացման աշխատանքների միջև:

Գրագիտության ուսուցումը պետք է սկսել տպագրով ու ձեռագրով և առաջ տանել կապակցված ձևով: Առանձին ուշադրություն պետք է դարձնել թե գեղագրության և թե ուղղագրության վրա: Ուղղագրության ուսուցումը պետք է տանել հաջորդական կերպով, ըստ հնարավորության կապելով քերականության հետ: Քերականության դասընթացն սկսվում է 3-րդ դասարանից: 1-ին և 2-րդ դասարաններում աշակերտներին պետք է սովորեցնել պարզ նախադասություն ճանաչելն ու կառուցելը՝ առանց տերմինների: 3-րդ դասարանում աշակերտները սովորում են «յենթակա» և «ստորոգյալ» տերմինները, իսկ նախադասության մյուս անդամները ընդհանուր առմամբ կոչվում են «լրացումներ»: Այդ դասարանում պետք է անցնել գոյական անվան հոլովումը, բայի ժամանակների պարզ ըմբռնումը, անձնական դերանունների ճանաչումը և ածականների մասին գաղափար տալը:

4-րդ դասարանում պետք է ավանդել հիմնական հոլովումները: Այս դասարանում աշակերտները տերմինավորված գաղա-

փար են ստանում նաև թվականների, դերանունների, կապերի, շաղկապների և ձայնարկությունների մասին:

Այսպիսով ամփոփվում է տարրական քերականության դասընթացը:

Տարրական դպրոցում նախադասության գիտական սահմանում չպետք է տալ: 1-ին և 2-րդ դասարաններում «նախադասություն» բառը գործածել կարելի յե, իսկ 3-րդ դասարանից պետք է տալ նաև նրա հիմնական հատկանիշները: 4-րդ դասարանում պետք է գաղափար տալ բարդ նախադասության մասին և սովորեցնել միվորյալ նախադասություն կառուցելը:

Տարրական դպրոցում աշակերտությունը ծանոթանում է կետադրության բոլոր նշաններին, վերջակետի և առոգանության նշանների գործածության բոլոր դեպքերին, իսկ ստորակետի, միջակետի, չակերտի և մյուս նշանների՝ պարզագույն դեպքերին:

Բանավոր խոսքի զարգացման բաժնում առանձին ուշադրություն պետք է դարձնել բարբառային լեզուն գրականով փոխարինելուն, և խոսելիս, պարզ ու բարդ նախադասությունները կանոնավոր կառուցելուն: Բանավոր խոսքի մեջ կանոնավոր բարդ նախադասություններ կառուցելու խիստ պահանջ պետք է ներկայացնել՝ սկսած 3-րդ դասարանից:

Ընթերցանության բաժնում առանձին ուշադրություն պետք է նվիրել բառերը վերլուծելու և հնչյուններն ու վանկերը համադրելու ունակությունների զարգացմանը, մի բան, վոր չպետք է դժվարացնի ամբողջական բառերով գրագիտություն անցնելը:

Բառակազմության հին ձևերը սովորեցնելուց հետո 4-րդ դասարանում յերեխաներին պարզ ու հասկանալի կերպով պետք է սովորեցնել նաև բառակազմության նոր ձևերը՝ նորագույն հապավումները, այն կապելով մեր ժամանակակից լեզվաշինարարության դյուրըմբռնելի խնդիրների հետ:

I ԴԱՍԱՐԱՆ

1. **Բանավոր խոսքի զարգացումը**.—Յերեխաներին վարժեցնել բարձր, պարզ, առանց շտապելու խոսելուն և իրենց տպավորությունների, ապրումների, կատարած աշխատանքների ու դրոսանք-էքսկուրսիաների մասին պատմելուն:

Պատմել պարզ նկարների բովանդակությունը:

Ուղղել մանկական խոսքի պակասավոր կողմերը՝ վերջավորությունները կուլ տալը, խոսելու ժամանակ շնչառության անկանոնությունը, կակազելը և այլն:

Հիշողությունը զարգացնելու համար՝ ուսուցչի պատմածից կամ ասածից յուրացնել տալ գեղարվեստական մատչելի հատվածներ և փոքր ոտանավորներ:

Ոտանավորների և լոզունգների խմբային ու անհատական արտասանություն:

Աշխատանքի ընթացքում պարզել յերեխաների ունեցած բառապաշարը և ստուգել բառերի ըմբռնումը. աշակերտների բառարանը հարստացնել ստացած գիտելիքների հետ կապ ունեցող նոր բառերով: Բարբառից աստիճանաբար անցնել գրական լեզվին:

Յերեխաներին սովորեցնել հարցերը լրիվ լսել և ապա պատասխանել:

Աստիճանաբար վարժեցնել հարցերին լրիվ և ամբողջական պատասխաններ տալուն:

2. Ձեռագրի ուսուցումն ու գրավոր խոսքի զարգացումը.— Նախքան գրաճանաչության անցնելը, վորպես գրել սովորեցնելու նախապատրաստություն, մի քանի որ հատկացնել տառերի ելեմենտներ պարունակող գրաֆիկ նկարչական վարժություններին:

Ընտելացնել գրելու տեխնիկային (գրիչ և մատիտ բռնելուն և այլն):

Ուսուցչի անմիջական հսկողությամբ սովորել կանոնավոր, մաքուր, պարզ և վոչ շատ խոշոր (միջին մասը 5 մմ, իսկ ամբողջ տառը՝ 17 մմ, օրինակ՝ կ, ի և այլն) տառերով գրել: Առանձին ուշադրություն դարձնել գեղագրության վրա, պահպանելով տառերի համաչափությունը (միանման ելեմենտների հավասար մեծություն, հեռավորության համաչափություն տառերի և բառերի միջև):

Գրատախտակից առանց տառ բաց թողնելու կարողանալ բառերով, իսկ յերկար բառերը՝ վանկերով (բայց յերբեք տառ-տառ) գիտակցորեն և ճիշտ արտագրել:

Կարողանալ գրել ուսուցչի արտասանած՝ ուղղագրական տեսակետից հեշտ բառեր և համառոտ նախադասություններ: Այս աշխատանքի ժամանակ պետք է պահպանել դժվարության աստիճանականությունը, խուսափել այնպիսի բառերից, վորոնց գրությունը չի համապատասխանում արտասանությանը (գրելու ունակությունների մեջ զարգացնել դիտողա-մոտորային հիշողությունը): Տարեվերջին, նախապես վարժ կարդալ սովորելուց հետո, կարողանալ դասագրքի տպագրից արտագրել և գիտակցական թելադրությամբ կարճ նախադասություններ գրել: Կարողանալ գրել իր անունն ու ազգանունը:

3. Ընթերցանություն.—Կարողանալ առանց տառեր բաց թողնելու և կրկնությունների կարդալ նկարների տակը գրած ամբողջական բառերը, պարզ և մատչելի բառերից կազմած համառոտ նախադասությունները, գրատախտակի վրա ուսուցչի գրած բառերն ու կարճ գրությունները, դասագրքի մատչելի հոդվածներն ու ոտանավորները, ինչպես և իր ձեռագիր տեքստը:

Հետևել, վոր իր կարդացածն ու արտասանածը լինեն կանոնավոր՝ կետադրության և առոգանության նշանների համաձայն:

Սովորեցնել դասագրքում հանդիպող վերջակետի, ստորակետի և առոգանության նշանների նշանակությունն ու գործածությունը:

Վարժեցնել փոքրիկ պարզ հոդվածների բովանդակությունն ինքնուրույն կերպով պատմելուն՝ սկզբում հարցերի միջոցով, հետո՝ առանց հարցերի: Ուսուցչի ղեկավարությամբ դերերով վերարտադրել դասագրքի և մանկական ընթերցանության գրքի համապատասխան հոդվածներն ու ոտանավորները:

4. Քերականական և ուղղագրական նախնական գիտելիքներ.— Աշակերտների կանոնավոր ու լրիվ պատասխանը օգտագործել վորպես պարզ նախադասության օրինակ: Սովորեցնել պարզ նախադասության կառուցելը:

Գիտենալ վերջակետի, վորպես նախադասության վերջին նշանի, գործածությունը: Կարողանալ ուսուցչի կազմած պարզ նախադասությունները գրել՝ սկսելով մեծատառով և վերջում դնելով վերջակետ:

Կարողանալ նախադասությունը բառերի բաժանել, բառերը՝ վանկերի, վանկերը՝ հնչյունների։ Կարողանալ նախադասության մեջ գտնել մտքով իրար հետ կապ ունեցող բառերը։

Գիտենալ մեծատառի գործածության հետևյալ պարզագույն դեպքերը. վերնագիրը գրվում է մեծատառով, նոր գրությունն սկսվում է մեծատառով, վերջակետից հետո բառն սկսվում է մեծատառով, մարդկանց անուններն ու ազգանունները գրվում են մեծատառով։

Գիտենալ, որ գրության վերջում վերջակետ պետք է դրվի։

Գիտենալ, որ գրելիս լուսանցքը չի կարելի անցնել, և որ տողադարձ անելիս տողադարձի նշան պետք է դնել։ Գիտենալ, որ միավանկ բառերը չի կարելի տողադարձ անել։

II ԴԱՍԱՐԱՆ

1. Բանավոր խոսքի զարգացումը.—Յերեխաներին սովորեցնել պարզ, բարձր, ազատ և առանց շտապելու պատմել իրենց դիտողությունների, տեսածների, ապրումների և կատարած աշխատանքների մասին։

Հետևել գրական լեզվի մաքրության և աշխատել աստիճանաբար վերացնել բարբառային ձևերը։

Շարունակել յերեխաների վոճի պակասավոր կողմերն ուղղելու աշխատանքները։ Յերեխաներին սովորեցնել պարզ կերպով պատմել կարդացած հոդվածի համառոտ բովանդակությունը՝ հարցերի ոգնությամբ կամ առանց հարցերի։ Անգիր անել տալ դասագրքի վոտանավորները։

Փոքրիկ հոդվածների բովանդակությունը վերարտադրել ինսցենիրովկայի միջոցով՝ ուսուցչի ղեկավարությամբ։

Հարցերի միջոցով պարզ և արտահայտիչ նկարների մասին բանավոր շարադրություններ կազմել։ Շարունակել աշակերտի բառարանի հարստացման աշխատանքը. պայքարել դասակարգայնորեն խորթ բառերի գործածության դեմ։

2. Ձեռագրի ուսուցումն ու գրավոր խոսքի զարգացումը.—Նախորդ տարվա համեմատությամբ, յերեխաների մեջ զարգացնել

ավելի դժվար բառեր և նախադասություններ պարզ և կանոնավոր գրելու ունակություն։

Աշակերտների տպավորությունները, ապրումներն ու դիտողությունները մշակել և դարձնել գիտակցական արտագրության, դիտողաբացատրական թելադրության և ուղղագրական տեսակետից մշակված շատ կարճ շարադրության նյութ։

Կանխապես ապահովելով դրվելիք դժվար բառերի ուղղագրությունը գրատախտակի վրա՝ սովորեցնել կատարած աշխատանքների մասին որագիր կազմել, 5—6 հարցից բաղկացած անկետ, պարզ հասցե և կարճ նամակ գրել։

Պատի թերթի համար փոքրիկ հոդվածների և տեղեկությունների մշակում դասարանում։

Ուսուցչի հսկողությամբ, ուղղագրական և շարահյուսական տեսակետից նախորոք մշակելուց հետո, գրավոր շարադրել նկարների բովանդակությունը։ Հարցերին գրավոր պատասխաններ տալով՝ հոդվածի շուրջը կապակցված շարադրություն կազմել։

3. Ընթերցանություն.—Փոքրիկ հոդվածի, վոտանավորի, լողունգի ընթերցում՝ ազատ, կապակցված, արտահայտիչ և կանոնավոր արտասանությամբ, պահպանելով առոգանության և կետադրության կանոնները։

Իր և ընկերների ձեռագիր-տեքստը կարդալու վարժություն։

Կարդացածի քննարկում՝ հարցերի ոգնությամբ։ Հոդվածները մասերի բաժանելն ու վերնագրելը։

Կարդացածից անհասկանալի բառերը կամ նախադասություններն առանձնացնելու հմտություն։

Կարդալ բարձրաձայն, յերբեմն նաև լուռ։

Ծանոթանալ գրքի անվանը, հեղինակին։ Ցանկի միջոցով գտնել պահանջված հոդվածը։

Ուսուցչի տված առաջադրանքով և ցուցմունքներով ապահովել տանը կարդալու ճիշտ ընթացքը, և պարբերաբար ստուգել արդյունքները։ Զանազան մանկական գեղարվեստական մատչելի գրվածքներից ու «Հոկտեմբերիկ»-ից առանձին պարզ պատմվածքների և կարճ վոտանավորների ընթերցում։

4. Քերականական և ուղղագրական նախնական գիտելիքներ.—Կրկնել և խորացնել առաջին դասարանում անցածը։

Նախադասություն.— Շարունակել պարզ նախադասություն կառուցելու վարժությունները: Գիտենալ վերջակետի գործածությունը նախադասության վերջում: Գիտենալ, թե նախադասություններից ինչպե՞ս է շարադրություն կազմվում:

Բառեր.— Շարունակել նախադասությունը բառերի բաժանելու վարժությունները. գիտենալ բառերի կապակցությունը նախադասության մեջ. կարողանալ լրացնել նախադասությունների մեջ բաց թողած կամ հարցերով փոխարինված բառերը, օրինակ՝ աշակերտները սովորում են... աշակերտները վերադարձան (վո՞րտեղից) և այլն:

Շարունակել I դասարանում սովորած մեծատառի գործածության դեպքերը. գիտենալ, որ մարդկանց, քաղաքների, գյուղերի, գետերի, լեռների և փողոցների անունները նույնպես գրվում են մեծատառով:

Վանկ և բառի տողադարձ.— Շարունակել բառերը վանկերի բաժանելու վարժությունները: Գրելիս բառերը ճշտությամբ տողադարձ անել:

Հնչյուններ և տառեր.—Հնչյուն և տառ. ձայնավոր և բաղաձայն հնչյուններ. գիտենալ տառերի այբուբենական կարգը. կարողանալ այբուբենական կարգով փոքրիկ ցուցակներ կազմել: Յերկհնչյուններ. և-ը, վորպես սղագրության նշան. գիտենալ, վոր և նշանը ձայնավորից հետո կամ առանձին գործածելիս յեահնչյուն (յեվ) վանկի նշան է, վոր և սղագրության նշանը մեծատառ ձև չունի, գրվում է լրիվ տառերով (Յեվ). գրության և արտասանության անհամապատասխանության դեպքերը. ը ձայնավորը տողադարձի ժամանակ. հոգնակի եր, ներ, վերջավորությունները: Ուղղագրական վարժություններ՝ ակ, իկ, ուկ, ուհի մասնիկներ ունեցող բառերով:

Կարողանալ օգտվել թե՛ դասագրքի և թե՛ պատի ուղղագրական բառացուցակներից:

Առոգանության նշաններ.—Գիտենալ հարցական, բացականչական և շեշտ նշանների գործածությունը:

III ԴԱՍԱՐԱՆ

1. Բանավոր խոսքի զարգացում.—Վոտանավորների և գեղարվեստական հոդվածների արտասանություն՝ դպրոցական հանդեսներում:

Կարողանալ պատմել կարդացած գրքույկների համառոտ բովանդակությունը և իր տպավորությունները:

Կարողանալ կազմել լոզունգներ:

Տրված մի քանի բառ հիմք ծառայեցնելով՝ բերանացի պատմություն կազմել:

Ուսուցչի սկսած պատմությունը յերևակայությամբ շարունակել և վերջացնել:

Կարողանալ լսածի և տեսածի մասին ազատ պատմել:

Աշակերտի պոլիտեխնիկ բառարանի հարստացում՝ գյուղում կոլտնտեսական մեքենայացված արտադրության, իսկ քաղաքում՝ գործարանի, ռադիոյի և հեռախոսի տեխնիկայի կապակցությամբ:

2. Ձեռագրի ուսուցում և գրավոր խոսքի զարգացում.— Շարունակել մաքուր, գեղեցիկ և կանոնավոր գրելու վարժությունները: Գրի առնել դասարանում նախօրոք մշակված հոդվածների համառոտ ծրագիրը:

Ուսուցչի օգնությամբ մի քանի պարզ նախադասություններով օրագիր կազմել և գրի առնել յուրաքանչյուր օրվա կատարած աշխատանքներն ու բնության դիտողությունները:

Կարողանալ գրավոր պատասխանել տրված պարզ և նախօրոք մշակված հարցերին. շարադրել համաձայն առաջուց կազմված գրավոր ծրագրի:

Գիտակցական արտագրության, դիտողաբացատրական թելադրության և շարադրության նյութ դարձնել դասագրքի հոդվածները, նկարները, էքսկուրսիաների տպավորությունները և այլն:

Ուսուցչի օգնությամբ և տրված հարցերի օժանդակությամբ շարադրություններ գրել:

Կարողանալ անկետ լրացնել, նամակ և ստացական գրել, պատի լրագրին լուրեր և փոքրիկ հոդվածներ տալ:

3. Ընթերցանություն.—Դասագրքի հոդվածների ընթեր-

ցում՝ ճիշտ առոգանությամբ և տրամաբանական վորոշակի շեշտադրությամբ վոտանավորներ անգիր անել: Ուսուցչի ցուցմունքով դյուրըմբռնելի փոքրիկ բրոշյուրների և «Հոկտեմբերիկ» մանկական հանդեսի ու մանկական գրքերի ինքնուրույն ընթերցանություն:

Գրքով աշխատանք կատարելու խորացում (տիրաժ, հրատարակչություն, ցանկ, առաջաբան):

Ծանոթություն «Պիոներ Կանչ»-ին:

Լուռ կարդալու վարժության խորացում:

Դերերով կարդալը:

Հոդվածի ծրագիրն ըստ հարցերի կազմելը:

Տրված հարցերին բնագրում համապատասխանող հոդվածներ գտնելը:

Կարողանալ նշել և հարցնել անհասկանալի և անծանոթ բառերը և արտահայտությունները:

4. Քերականություն և ուղղագրություն.—Գաղափար նախադասության, վորպես միտք արտահայտող ամբողջության, մասին: Նախադասության գլխավոր անդամները՝ յենթական և ստորոգյալը. նրանց համաձայնությունը դեմքով և թվով: Նախադասության մյուս անդամները վորպես այդ յերկուսի լրացումներ:

Համառոտ և ընդարձակ նախադասություն:

Յենթակայի արտահայտումն առարկայի անունով: Գաղափար գոյական անվան մասին. հատուկ և հասարակ անուն, մեծատառի գործածության բոլոր դեպքերը. գոյականների թիվը. վորոշող հոդը (ը և ն) և նրա գործածությունը:

Գաղափար ուղղական հոլովի մասին, յենթակայի կապակցությամբ: Հարցերով սովորեցնել մնացած հոլովները (սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական): Գաղափար ածականի մասին: Գաղափար անձնական դերանունների մասին: Ստորոգյալի արտահայտումը գործողություն և դրություն ցույց տվող բառերով. գաղափար բայի մասին. բայի խոնարհումը, բայի դեմքը և թիվը, յենթակայի գործողությունը կամ դրությունը ժամանակի կապակցությամբ՝ ներկա, անցյալ, ապառնի:

Գաղափար բայի խոնարհման բացասական ձևի մասին:

Գաղափար բայի հրամայական ձևի մասին. «մի» արգելականի ուղղագրությունը:

Գաղափար բայի անորոշ ձևի մասին:

Նույնանիշ և հականիշ բառեր:

Գաղափար արմատի և ածանցի մասին՝ պարզագույն բառերի ոգնությամբ. պարզ և բարդ բառեր:

Կարողանալ ոգտվել ուղղագրական ավելի մեծ բառացուցակներից:

յ ձայնակապի գործածության վերաբերյալ ուղղագրական վարժություններ:

յ-ով յերկհնչյուն կամ յերկձայն ունեցող բառերի ուղղագրությունը:

ը ձայնավորը բառասկզբում և սկ, սպ, ստ, սթ, զբ, զգ, շտ, կապակցություններից առաջ. ը ձայնավորը բառավերջում:

Ոժանդակ բայի առանձին գրելու վարժություններ:

IV ԴԱՍԱՐԱՆ

1. Բանավոր խոսքի զարգացում.—Հոդվածի բովանդակությունը պատմելու վարժություններ: Մասնակցություն դպրոցական բեմադրություններին, ինսցենիրովկաներին և հանդեսներին թե դպրոցում և թե դպրոցից դուրս:

Կարողանալ պատմել կարդացած գրքերի համառոտ բովանդակությունը և իր տպավորությունները:

2. Ձեռագրի ուսուցում ու գրավոր խոսքի զարգացում.— Ավելի արագ և ազատ, ավելի մաքուր ու պարզ գրելու վարժություն թե մի տողանի և թե, յերբեմն, անտող թղթի վրա:

Պատմվածքի, զրույցի, եքսկուրսիայի և խնդիրների մասին (սկզբում ուսուցչի ոգնությամբ, ապա ինքնուրույն կերպով) կազմել շարադրության պլանը և գրել բովանդակությունը: Անուղղակի խոսքով համառոտ շարադրություն գրելու վարժություն:

Կապակցված կերպով գրել իր համառոտ կենսագրությունը և իր առաջիկա անելիքները:

Ընտրած թեմայով ինքնուրույն պարզ նկարագրություններ գրել:

III դասարանում սովորած գործնական նշանակություն ունեցող ավելի բարդ գրավոր վարժություններ՝ դիմում, հեռագիր, հայտարարություն, հաշիվ, անկետ և դրամի փոխադրագիր:

Վարժեցնել մանկական և պատի թերթերին թղթակցելու ունակության:

3. Ընթերցանություն.—Դասագրքի հոդվածները, բրոշյուրները, գրքեր և «Պիոներ կանչ»-ը արտահայտիչ կերպով կարդալու վարժություններ. դրանցից օգտվելու ունակություններ. ա) հետաքրքրող հարցերի պատասխաններն ուսուցչի օգնությամբ գրքերում ու լրագրերում փնտրելը, բ) կարդացածի մասին տպավորություններ հաղորդելը, գ) գրքում դուրս բերած դեպքերի ու անցքերի գնահատական տալը:

Գրքերի և հոդվածների տնային և դասարանական ինքնուրույն և լուռ ընթերցում: Ըստ պահանջի՝ բնագրից կարևոր հոդվածների ու մտքերի ընտրություն և արտագրություն:

Գրքով և լրագրով կատարվող աշխատանքի խորացում. ծանոթանալ մանկական և մյուս պարբերականների տեսակներին և նրանց բաժիններին:

Քերականություն և ուղղագրություն. Նախադասության տեսակները.— *Միավորյալ նախադասություններ (նախադասություններ մի քանի ենթականերով և մի քանի ստորոգյալներով): Նախադասություններ մի քանի համադաս լրացումներով: Ուղղակի խոսք:*

Խոսքի մասեր.—*Գոյականի* ի, ու *և* ան *հոլովումները. անձնական, հարցական (միայն ո՞վ, ի՞նչ), և ցուցական դերանունները ու նրանց հոլովումը. գաղափար դիմորոշ և ստացական հոդերի մասին: Բայերի անցյալ անկատար, վաղակատար և հարակատար ժամանակները: Թվական անուն. քանակական և դասական. նրանց ուղղագրությունը: Նախադրություններ և հետադրություններ: Շաղկապ: Ձայնարկություն:*

Բառակազմություն. Բարդ բառեր.—ա *հոդակապ. ե՞րբ է գրվում և ե՞րբ չի գրվում: Գիտենալ, որ բարդ բառերի առաջին բաղադրիչ մասն* ի*-ով վերջանալու դեպքում—*ի*-ն* ա *հոդակապի հետ դառնում է* ե: Հնչյունափոխություն: Ու *և* ի *ձայնավորների փոխվելը* ը*-ի (ջուր և ջրաղաց, կիր—կրաքար, կամ բոլորովին ղեղչվելը (ամիս—ամսավերջ, անասուն—անասնապահ),* ե *ձայնավորի փոխվելը* ի *ձայնավորի (հանդես—հանդիսի):* Ածանցավոր բառեր, *նախածանց՝* ան, ապ, դժ, տ, չ, գեր, արտ *և այլն. վերջածանցներ՝* ատ, ոց, արան, ստան, եղեն *և այլն. ածանցները փոխում են բառի իմաստը՝ նրան ուրիշ վորակ տալով (ածուխ—առարկա յե ցույց տալիս, իսկ ածխային՝ հատկություն): Գոյականացնող և ածականացնող մի քանի ածանցներ և նրանց ուղղագրությունը:* Գաղափար հիմքի և վերջավորության մասին: Նորագույն հապավումներ *(գյուղխորհուրդ, շրջկոմ, շրջգործկոմ, ՀՍԽՀ, ՄՈՊՐ, ՀամԿԿ և այլն) և նրանց ուղղագրությունը:*

Բառերի իմաստը.—*Հոմանիշ և նույնանուն բառեր: Բառերի առումները:*

Կետադրության նշաններ.—*Վերջակետի, միջակետի, ստորակետի և բութի գործածության ամփոփում և լրացում: Առոգանության նշանների գործածության ամփոփում. կետադրության մյուս նշանների գործածության վերաբերյալ կրկնողական վարժություններ: Նախադասության տեսակներն ու խոսքի մասերն անցնելիս սովորեցնել ստորակետի գործածությունը բարդ, միավորյալ, համադաս լրացումներով, կոչական բառերով, ձայնարկություններով նախադասությունների մեջ, բութի գործածությունը համադաս լրացումներ ունեցող նախադասությունների մեջ՝ թվարկության ժամանակ. միջակետի և չակերտի գործածությունն ուղղակի խոսքի մեջ գիտենալ միացման և անջատման գծերի գործածությունը:*

Քերականական և ուղղագրական գիտելիքների ամփոփում, լրացում և սիստեմավորում.— *Քերականական վերլուծության վարժություններ: Ուղղագրական վարժություններ.* ռ *և* ը, ղ *և* խ, ք *և* կ *տառերի ուղղագրություն:*

Գրավոր աշխատանքների ժամանակ բառագրքույկից օգտվելու վարժություն:

Ուղղագրական տետրակ պահելը և այնտեղ այն բառերը նշանակելը, վորոնց գրությունը դժվար է:

ԳԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

I ԴԱՍԱՐԱՆ

1. Գրելու համար. կանոնավոր դիրք ընդունելու, մատները կանոնավոր բռնելու և գրելու ունակություններ. իրանի, ձեռքերի, վոտքերի, մատների, ինչպես և թղթի կանոնավոր դրվածք:

2. Նախնական վարժություններ՝ ձեռքի, մատների և աչքաչափի զարգացման համար. աջից ձախ և ձախից աջ աղեղնաձև գծերի գրություն՝ բարակ գծիկներով. Մեծ մատը ցուցամատը և միջին մատը ծալելու և բացելու վարժություն. Նույնը՝ հավասարաչափ սեղմելով. աջից ձախ և ձախից աջ ձվաձև գծիկների գրություն՝ ուղղահայաց և հորիզոնական ուղղությամբ: Հորիզոնական և ուղղահայաց ուղիղ գծեր:

3. Տառերի և թվանշանների գծագրերի ուսումնասիրություն. տառերի հիմնական էլեմենտները՝ ուղիղ գիծ (1), ուղիղ գիծ՝ բոլորքով դեպի ցած (2), ուղիղ գիծ բոլորքով դեպի վեր (3), ուղիղ գիծ բոլորքով դեպի ցած և դեպի վեր (4), կիսաձվաձև գծեր աջից ձախ, ձախից աջ (5), ձվաձև գիծ՝ ուղղահայաց (7), դեպի ձախ՝ հորիզոնական (8), ուղղահայաց գծի ներքևում աջից և ձախից անկյուն կազմող ուղիղ գծեր (⌊), տառերի լրացուցիչ էլեմենտներ, կետ, հանգույց (9), պտուտակավոր գիծ (10), ալիքավոր գիծ (11) և այլն:*

*) (Նմուշները տես ստորև բերված ձեռագիր նկարում):



4. Տառերի գծագրական խմբեր:

ա) Տառերի առաջին գծագրական խումբ՝ ուղիղ գիծ բոլորքով, ու, տ, պ, ս, փ, խ, ի, ղ, ե, կ, լ, դ:

բ) Տառերի յերկրորդ գծագրական խումբ՝ ուղիղ և անկյունավոր գծեր՝ գ, ւ, ռ:

գ) Տառերի յերրորդ գծագրական խումբ՝ ձվաձև գծիկներով. ժ, թ, ջ, յ, ց, ծ, ք:

դ) Տառերի չորրորդ գծագրական խումբ՝ այլաձև գծիկներով՝ ձ, ճ, չ:

Ծանոթություն.—Տառերի գրությունն ուսուցվում է նույն կարգով, ինչ կարգով վոր տրված են նրանք գրաճանաչության գրքում: Սակայն յուրաքանչյուր տառ սովորեցնելիս դասատուն պետք է մանրամասն բացատրի թե ի՛նչ մասերից է բաղկացած տառը, ի՛նչպես է գրվում, վո՛ր էլեմենտից է սկսվում գրությունը, յերկտողի նկատմամբ ի՛նչ դիրք ունի, ի՛նչպես միացնել մեկ գիծը մյուսին, ի՛նչպես միացնել հաջորդ տառին և այլն:

Բացատրելու ընթացքում գրատախտակի վրա տառը պարզ և խոշոր պետք է գրվի:

Փոքրատառերից զգալի չափով տարբերվող մեծատառեր:

5. Տառերի դիրքը.

ա) Յերկտողի միջում գրվող տառեր՝ ա, ո, ռ, ս, ու:

բ) Յերկտողի միջում և դեպի վեր գրվող տառեր՝ ե, ժ, ծ, հ, ճ, մ, ն:

գ) Յերկտողի միջում և դեպի ցած գրվող տառեր՝ բ, գ, դ, զ, ը, թ, լ, ձ, ղ, յ, շ, չ, պ, ջ, ւ, ր:

դ) Յերկտողի միջում և դեպի վեր ու ցած գրվող տառեր՝ ի, խ, կ, վ, փ, ք, Փ:

6. Մեծատառեր.

ա) Փոքրատառերի նման մեծատառեր. Ա, Զ, Ջ, Ց, Ծ, Ձ, Չ, Պ:

բ) Փոքրատառերից քիչ տարբերվող մեծատառեր. Ը, Ժ, Լ, Մ, ՈՒ, Տ, Ք:

II ԴԱՍԱՐԱՆ

1. Մարմնի, գիրքը, ձեռքը, մատները վարժեցնելու նպատակով.

1-ին դասարանում կատարվող վարժությունների կրկնողություն և շարունակություն:

2. Տառերի յերկտողի մեջ գրվող մասերի համաչափության պահպանություն և կարևորության բացատրություն.

3. Մեծատառերի գրության և ուսումնասիրության վարժություններ.

ա) Փոքրատառերի նման գրվող մեծատառերի առանձնահատկությունների ուսումնասիրություն:

բ) Փոքրատառերից տարբեր ձևով գրվող մեծատառերի ուսումնասիրության խորացում և վարժություններ:

4. Գրության արագացում և աշակերտական ձեռագրերի պակասությունների վերացում:

Ծանոթություն.—Վեցօրյակում 50 րոպե տրամադրվում է գեղագրության. 1-ին դասարանի առաջին կիսամյակում գեղագրության պարապմունքները կապվում են գրաճանաչության ուսուցման հետ, յուրաքանչյուր անգամ տրամադրելով 6—10 րոպե, ապա՝ 10—15 րոպե (II կիսամյակում): 1-ին դասարանի 2-րդ կիսամյակում և 2-րդ դասարանում վեցօրյակում 2 անգամ է գեղագրության դաս լինում, վորի համար դասի կեսն է տրամադրվում:

———

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ

ՑՈՒՑԱԿ

III ՅԵՎ IV ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աճող սերնդի դաստիարակության գործում հսկայական նշանակություն ունի գեղարվեստական գրականությունը:

Բանաստեղծությունների և պատմվածքների ընթերցանությունը, գեղարվեստական արձակի վերապատմումը, անգիր անելը—այս բոլորը պետք է ընդարձակի յերեխաների մտահորիզոնը, մի շարք կոնկրետ պատկերներ տա թե անցյալից և թե ներկայից, ու հարստացնի նրանց բառապաշարը:

3-րդ և 4-րդ դասարանների ծրագրի մշակման արդյունքն այն պետք է լինի, վոր յերեխաները յուրացնեն գրականագիտության հետևյալ տարրերը:

1. Հասկանալ գեղարվեստական յերկերի տեքստը, նրա իդեական և գեղարվեստական արժեքը:

2. Կարողանալ տարբերել գեղարվեստական յերկերի վորոշ ձևեր (պատմվածք, բանաստեղծություն, առակ, հեքիաթ):

3. Գեղարվեստական լեզվի առանձնահատկությունների տարրական յուրացումը (մակդիրներ, համեմատություններ, ալլիգորիա—հանգ):

4. Տարրական գաղափար գրականության դերի ու նշանակության մասին՝ հասարակական կյանքում և առանձնապես սոցիալիստական շինարարության գործում: 3-րդ և 4-րդ դասարանում մշակման համար գրական նյութն ընտրելիս պետք է առաջադրվեն հետևյալ սկզբունքները:

1. Յերկի իդեոլոգիական և գեղարվեստական արժեքը:
2. Տեքստի լեզվական արժեքը:
3. Մանկական հետաքրքրության և փորձին մոտ լինելը:

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱ-ՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

III Դ Ա Ս Ա Ր Ա Ն

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ

1. Աղայան Ղ.—Ամառը (վոտ.), Յերկու ընկերներ (առակ), 2. Անանյան—Վոչ մի գայլ մեր հանդերում (հոդված), Կարմրախայտի վորսը, «Կրակե ողակի մեջ», Արմեն Մ.—Պատմվածք տրամվայի մասին (կիրճ). 3. Բակունց Ա.—Նամակ ռուսաց թագավորին (վերջին մասը), Տ. Արազի—Լույսերը (հատվածներ՝ Հակոբի վիրավորվելն ու յերազը), 5. Դարբինյան Մ.—Փոքրիկ Լուիզայի մահը, 6. Դեմիրճյան Դ.—Բարհատներ (վերամշակած). 7. Զարյան Ն.—Ալեքսանի վերադարձը, Սերմի գտումը (հատվածներ «Ռուշանի Բարալի»-ից), 8. Զորյան Ստ.—Կարմիր արագիլը (սկիզբը սեղմել), 9. Թումանյան Հ.—Կաքավի յերգը, Կոխը, Գելը (յերկու հատված), Զարի վերջը, Սուտլիկ վորսկանը, Հսկան, 10. Թոթովենց Վ.—Լա-հո-հո. 11. Խնկոյան Ա.— Ագռավն ու աղվեսը, Կկուն ու աքլորը, Ճպուռն ու մրջյունը, Մկների ժողովը, Գայլն ու շները, 12. Հակոբյան Հ.—Աշխատանքի յերգը, Կաթսավար, 12. Մանվելյան Մ.—Ջրանցքի բացումը («Անապատը կծաղկի»-ի վերջը), 14. Միրաքյան Հ.—Գառը մեր տալիս, 15. Մեսյան Գ.—Վասիլ աղան (կրճ.), 16. Մահարի Գ.—Կոմունան, 17. Նորենց Վ.—Գարուն (վոտ.), 18. Չարենց Ե.—Ընկերները, Լենին քեռին (կրճ.), 19. Պռոշյան Պ.—Գարնան գալը, 20. Սարյան Գ.—Բերքի յերգը, 21. Վշտունի Ա.—Փոքրիկ լրագրավաճառը:

ՌՈՒՍ ԿԼԱՍԻԿ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐ

1. Գնյինա Գ.— Հասանը, 2. Գարշին Վ.—Թշնամիները, 3. Գրոզզեվ—Մաքսիմ Գորկու կյանքն ու արկածները (յերկու հատված), 4. Գորկի Մ.—Պարմա քաղաքի յերեխաները, 5. Զամոյսկի—Նամակ Լենինին (հատված), 6. Զգորիչ—Ուղիղ

ժամը չորսին: 7. Իլին—Մեծ պլանի մասին (հատվածներ 5-րդ հրատարակությունից), 8. Կասիլ—Հեքիաթ Բելոմոր պապի և Ալյոշա Այազանի մասին: 9. Զեվերով—Միշկա Դոդոնով (հատված սկզբից), 10. Շկուլեվ—Մենք դարբիններ ենք, 11. Շոլոխով—Շչուկար պապի մանկությունը («Հերկված Խոպանը»), 12. Ուլյանովա—Լենինի մանկական և դպրոցական տարիները (հատվածներ), 13. Չեխով Ա.—Վանկա Ժուկով (կրճ.), 14. Տոլստոյ Լ.—Յերկու պատմվածք կենդանիների մասին:

ՕՏԱՐ ԳՐՈՂՆԵՐ

1. Դոդե Ա.—Կորնել պապի գաղտնիքը (կրճ.), 2. Վյուգո Վ.—Բարիկադի վրա, 3. Սետոն.—Տոմպսոն Արնո (կրճ.):

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

IV Դ Ա Ս Ա Ր Ա Ն

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԿԼԱՍԻԿ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ)

1. Աղայան Ղ.—Հին դյուղը («Արութին և Մանվել»), Սև վեզարը, Եշն ու սոխակը (առակ), 2. Աբովյան Խ.—Ամառը Երևանում, Ձմեռը (ըստ Աբովյանի), 3. Ալազան—Ջանդուլի յերգը, Հիդրոշեն, 60-րդ հորիզոնում (հատված) պղնձարդյունաբերութ. տեսարան), 4. Արմեն Մ.—Ուր սկսվում է Աշնելքը, Մի կտոր արևը, 5. Արազի—Մուքելը (հատված), Արևը, Խալիչայի յերգը, 6. Բակունց Ա.—Միրանի տափը, Ջորբան, 7. Դեմիրճյան Դ.—Նիգյարը (հատված), 8. Զորյան Ս.—Զալանկը (կրճ.), Յերկաթուղի (կրճ.), 9. Զարյան Ն.—Վեճ կոլխոզի մասին, Սեղանի տունը (հատվածներ «Ռուշանի քարափից»), 10. Թումանյան Հ.—Դավթի մանկությունը, Գիքորը (կրճ.), Գութանի յերգը (առաջին տունը վերամշակած), Ահմադը, Գելը (կրճ.), 11. Խնկոյան Ա.—Գայլն ու գառը, Կատվին ու ակնոցները, Գայլն ու կատուն, 12. Ծատուրյան Ա.—Բանվորուհու որորը, 13. Հակոբյան Հ.—Մե՛կ էլ, մե՛կ էլ, 26-ի յեր-

գը, Եռաայը լուսաբացին, Գարնանամուտին, 14. Ծուղուրյան Հ.—Զաթոյի բախտի անիվը, 15. Միրաքյան.—Քոչը, 16. Մախարի Գ.—Աղաղակ (վերջին հատվածը), 17. Մուրացան.—Վաչխառուն, (Առաքյալը—մշակված), 18. Նար-Դոս.—Պառավ Հեղնարի ընտանիքը (թե ինչ յեղավ, յերբ չաքարամանից...), 19. Նորենց Վ.—Նամակ գյուղից (կրճ.), Տարեդարձի յերգը, 20. Շիրվանզադե.—Հրդեհ նավթահանքերում, 21. Զարենց Յե. Գարունը, Բալլադ Լենինի և մուժիկի մասին (հատված), 22. Լենին, 23. Պռոշյան Պ.—Խ. Աբովյանի մասին, 24 Սարյան Գ.—Սիբիրում, Քարտաշներ, Դամբանական, 25. Վշտունի Ա.—Մայիսական, Լենինին, 2. Տարոնցի Ս.—Աքաղաղ, իմ բալիկս, 27. Տերյան Վ.—Գարնանամուտ, Նոր կյանք, 28. Փափազյան Վ.—Արտը, 29. Հեքիաթներ՝ Քաջ Նազար, Տերն ու ծառան (Թումանյանի մշակմամբ), Կատուն ու աղավը, Առյուծը (ժող.), 30. Ժողովրդական յերգեր—Լուսնյակն անուշ:

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԼԱՍԻԿ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բեդնիյ Դեմ.—Մինչև եստեղ, 2. Գարշին Վ.—Ագդանըշան (կրճ.), 3. Գորկիյ Մ.—Հունվարի 9-ը, Սեմյլոնի տոնելը, Մայիսի 1-ը, Պեսլե, 4. Իսրալս.—Լենինն ու Լի-Զանը (կրճ.), 5. Պոլումորդվինով.—Զրանցքի բացում (Անտալոգիայից), 6. Կանախիչ.—Որբերը գյուղում, 7. Կրուպսկայա.—Հիշողություններ Լենինի մասին (հատվ.), 8. Շոլոխով.—Ծերունիները Դավիդովի մոտ («Հերկված Խոպան»), 9. Ուլյանովա.—Լենինի մանկ. և դպրոց. տարիները (հատվ.), 10. Չեխով.—Կաշտանկա (կրճ.), 11. Չֆվիանի.—Ալազանի դաշտն ու բամբակը (վրաց գրական անտոլոգիա), 12. Պուշկին.—Ձմռան գիշեր, Կալանավորը, 13. Վլադիմրսկի.—Ջմրուխտի հանքը, Վանյայի մահը, 14. Տուրգենեվ.—Գյուղացիների դատը, 15. Քուաչիշվիլի—Իվանեն:

ՕՏԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զոլա Է.—Միտինգ:

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

III ԴԱՍԱՐԱՆ

1. Ակճիվցեվ.—Հեքիաթ կոմինտերնի մասին, 2. Ալազան.—Խորհուրդների համար, 3. Աղաբաբ.—Զալոյի եշը, 4. Անանյան Վ.—Վոչ մի դայլ մեր հանդերում, 5. Յեսս Գ.—Ջորջի Տելնի, 6. Գարշին.—Արջերը, Ազդանշան, 7. Դանցիգեր.— Թե Վանյան ինչո՛ւ դարձավ ողաչու, 8. Դմիտրեվ.—Մանչուկն ու Կուտիկը, 9. Զամոյսկի.—Նամակ Լենինին, 10. Զորին.—Ինչպես Պետիկը Լենինի մոտ գնաց, 11. Թոքովենց.—Լառ-չո, 12. Թումանյան Հով.—Արջավորս, Քաջ Նազար, Գելը, 13. Մայակովսկի.—Ի՞նչ դառնալ, 14. Մանուկյան.—Գելի խաղը, 15. Մինդել.—Կրասինը սառույցների մեջ, 16. Միտչել.—Ինչո՞վ կարելի յե ճամբորդել, 17. Նորենց Վ.—Կարմիր հերոսը, 18. Նեվերով.—Ինչպես եյին ապրում տիկնիկները, 19. Զվարը.— Յերեք հանդիպում, 20. Պուշկին.—Վոսկե ձկնիկը, 21. Պերովսկայա.—Մեր վագրիկը, 22. Լոու.—Ջինաճետեր, 23. Սերին.—Միխել Անվախ տղան, 24. Սիբիրյակով Մամին.—Վորդեգիրը, 25. Սլիվիցկի.—Խորամանկ աղվեսը, 26. թարգմ. Վաhունի.—Անդրե Մարտի, 27. Որլովեց.—Ճամբորդություն աերոպլանով:

IV ԴԱՍԱՐԱՆ

1. Անանյան Վ.—Կրակե օղակի մեջ, 2. Առուսլենդեր.—Փոքրիկ խոն, 3. Գաբրիելյան Ո.—Ոմկյանի Թագավորը, 4. Գարշին.—Զորս որ պատերազմի դաշտում, 5. Դոդե.—Գեղեցիկ Նիվերնեզա, 6. Դորոխով.—Բալշևիկի տղան, 7. Գումիլեվսկի.—Մամոնտների գերեզմանը, 8. Դուրգարյան Մ.—(կազմող)՝ Պատանի հեղափոխականներ, 9. Թումանյան Հ.—Գիքորը, 10. Լեոնի.—Ցերաժիշտ Դանիկը, 11. Խավին.—Նավթ, 12. Կիպլինգ.—Ռիկի-Տիկի-Տավի, 13. Կորալենկո.—Գետնափորի յերեխաները, 14. Կուտյուրե.—Ժան անհայտ, 15. Հյուգո Վ.—Գավրոշը, 26. Մուլտատուլի.—Սայիդ և Ադինդա, 17. Նազարով.—Յերեխաներն ինչպես ավտոմոբիլ վարել սովորեցին, 18. Զարենց.—Մաճկալ Սաքոյի պատ-

մությունը, 19· Չեխով.—Կաշտանկա, 20· Պիսկունով.—Գիգանտ, 21· Պոկրովսկի.—Ունգարկա, 22· Սենկևիչ.—Երաժիշտ Յանկոն, 23· Ստանյուկովիչ.—Պստիկ նավաստին, 24· Վլադիմիրսկի.—Զմրուխտի հանքը, 25· Տուրգենեվ.—Մումու, 26· Որլովեց.—Բիմիկոս կուզման, Պետիկի գիրը, 27· Ֆոկս.—Մինիստր մեկ ժամով, 28· Ուիլդյա.—Փոքրիկ հերոսուհին:

Програма русского языка

ВВЕДЕНИЕ

1. Место русского языка в армянской (начальной) школе, задачи и цели его изучения.

Русский язык в наших школах согласно принятой основной установке вводится, как правило, с начала третьего года обучения.

Время, отводимое на преподование этой дисциплины по годам обучения, определяется учебной часовой сеткой.

Наша начальная школа может дать только предварительное знакомство с русским языком, усвоение которого может быть затем расширено и укреплено в средней школе, а также путем пользования русскими газетами, книгами, общения с русскими.

Отсюда в результате изучения русского языка в начальной школе учащиеся должны овладеть: а) умением понимать несложную устную речь культурно-бытового, политико-экономического и технического содержания; б) умением понимать такую же несложную печатную и письменную речь, т. е. читать легкую брошюру и нетрудную газету (например типа «План. пр.» и др.); в) умением написать несложную деловую бумагу, заявление, расписку, с соблюдением элементарных требований русской речи, г) наконец овладеть элементарными сведениями из грамматики русского языка.

В соответствии с указанными выше целями и задачами, программа русского языка для начальных школ должна содержать следующие разделы:

1. Развитие устной речи (работа по овладению устной русской речью): а) предварительный устный курс; б) последующая работа по развитию устной речи и работа над словарем; в) все виды бесед, связанные с другими занятиями по русскому языку (чтением, письмом, грамматикой и т. д.).

2. Работа по усвоению русской грамоты и развитию письменной речи: а) усвоение русской грамоты; б) упражнение в пользовании письменной русской речью; в) усвоение дограмматического правописания.

3. Работа с русской книгой: а) упражнение в беглом и сознательном чтении по русски; б) работа с учебной книгой по русскому языку, в) знакомство с произведениями русской литературы.

Все эти виды занятий вводятся в курс в известной последовательности, которая должна быть освещена в объяснительной записке к программе.

ПРОГРАММА РУССКОГО ЯЗЫКА

Настоящая программа составлена для армянских начальных школ, в которых русский язык вводится как отдельная учебная дисциплина на положении второго языка.

Надо иметь ввиду, что русский язык в школах ССРА может занимать и место третьего языка в неармянских школах, где вторым языком изучения становится армянский язык.

Обём знаний по годам обучения в настоящей программе определен в соответствии с количеством отводимого на этот предмет времени по учебной сетке часов, утвержденной Наркомпросом, которая представляется в следующем виде:

Программа должна состоять из следующих разделов:

I. Развитие устной речи

1. Предварительный устный курс.
2. Упражнения в развитии устной речи и работа над словарем.

3. Все виды бесед, связанные с другими занятиями по русскому языку (чтением, письмом, грамматикой и т. д.).

II. Чтение и письмо по русски

1. Усвоение русской грамоты.
2. Упражнение в пользовании письменной русской речью.
3. Усвоение дограмматического правописания.
4. Орфография.

III. Работа с книгой

1. Упражнение в беглом и сознательном чтении по русски.
2. Работа с учебной книгой по русскому языку.
3. Работа с популярной русской книгой массового характера.

IV. Грамматика русского языка

1. Первоначальные навыки в пользовании оборотами речи и формами русского языка.
2. Предварительный курс грамматики русского языка с усвоением главнейших отличий от родного (первый грамматический концентр в объеме курса начальной школы).

Все эти виды занятий вводятся в курс в известной последовательности.

Программа русского языка для армянских школ, кроме сведений об обеме знаний и навыков по всем этим разделам работы заключает в себе также и объяснительную методическую записку.

Программа разделяется на две части:

1. Обём знаний и навыков каждого года обучения.
2. Методические указания.

Первый год обучения русскому языку. III класс

ПРЕДВАРИТЕЛЬНЫЙ УСТНЫЙ КУРС

1. Практическое усвоение первых разговорных фраз. Приветствия (здравствуйте, прощайте, будь готов, всегда го-

тов и т. д.). Простые вопросы и ответы на них (кто ты?— Я ученик. Как тебя зовут? и т. п.).

Распоряжения, связанные с классной работой (сядьте, встаньте, подойди сюда, открой дверь, запри дверь, окно и т. п.).

Положительные и отрицательные ответы (Это-стол? Да это стол. Нет, это не стол).

Вопросы и ответы, необходимые для выяснения названий предметов (Что это? — Это... Вот... Где... Тут... Там...).

2. Беседы (лекцические уроки) по русски об окружающих предметах, с целью усвоения новых слов и оборотов речи.

Беседы могут касаться: учебных предметов, классной обстановки, частей комнаты, частей здания, видов школьной работы, главных частей тела: головы, лица, туловища, рук и т. д. человека и его одежды, членов семьи (отец, мать, брат, сестра и т. д.), времени (вчера, сегодня, завтра, сейчас и т. д.), счета до 100, вождей рабочего класса.

3. Практическое усвоение построения из знакомых слов простых предложений на руском языке (подлежащее, сказуемое и управляемое слово — без грамматических названий).

ЧТЕНИЕ И ПИСЬМО

1. Постепенное усвоение чтения и письма по-русски в связи с работой по учебнику и письма, прочитанных слов и кратких предложений.

2. Упражнение в пользовании словами и короткими предложениями, прочитанными в учебнике.

3. Работа над дидактическим материалом, связанным с учебником.

Виды работ:

1) Предварительная устная беседа для усвоения слов урока чтения.

2) Урок чтения по учебнику русского языка.

3) Письмо слов и коротких предложений по учебнику.

4) Устное упражнение в пользовании короткими предложениями — словами по учебнику.

5) Работа над дидактическим материалом.

6) Чтение плакатов и надписей под картинами и рисунками.

7) Чтение лозунгов и заучивание важнейших из них («Пролетарии всех стран, соединяйтесь!» и др.).

8) Заучивание наизусть текстов революционных песень, прочитанных в книге. Пение их.

9) Заучивание наизусть коротких стихотворений из учебника, хоровая декламация.

РАЗВИТИЕ УСТНОЙ РЕЧИ

(Паралельно с прохождением алфавита и последующей работой до конца года).

Темы для бесед: Счет по русски. Названия месяцев. Метрические меры. Продукты питания. Название предметов одежды и обуви, мебель, посуда, огород, поле. Домашние и дикие животные. Занятия трудящихся. Все это на материале предметов и их изображений при помощи дидактических пособий.

Норма новых слов, подлежащих усвоению на урок как разговорной речи, так и чтения по начальной русской книге, определяется учителем (примерно около 5). Учитель может вводить в свою речь и большее число новых слов, поясняя их значение, но не требуя их усвоения (пассивный запас слов).

ПИСЬМЕННАЯ РЕЧЬ

1. Практика списывания с письменного и печатного русского текста прочитанных и разобранных слов и предложений.

2. Письменные ответы на вопросы из книги и написан-

ные на доске, когда все элементы ответа имеются в вопросе, кроме одного, хорошо знакомого слова, которое может быть написано также в стороне вместе с другими для выбора (к канцу года).

3. Умение написать по-русски свое имя, фамилию, название своей школы, деревни, города, района.

4. Составление простых предложений из данных элементов.

5. Письмо лозунгов и надписей к плакатам (к концу концу года).

Употребление «ь» в конце по слуху. Употребление «ы» Употребление «э» в начале слов по слуху (в отличие от «е»).

ПРАКТИЧЕСКОЕ ЗНАКОМСТВО С ГРАММАТИЧЕСКИМИ ФОРМАМИ

1. В курс первого года обучения (III класс) никаких грамматические правил еще не вводится.

Практическим путем должны быть приобретены следующие навыки:

Составление простых вопросов и умение отвечать на них сначала одним словом, а потом короткими предложениями, составленными из элементов вопроса (Это что? — Это стол. — Что стоит тут? — Тут стоит стол).

Понимание приказаний (встань, сядь, иди сюда). Понимание вопросов: что это?, кто это?, сколько тут? где? и ответы на них.

Усвоение личных местоимений (я, ты, он, она, мы, вы, они).

Построение предложения: 1) из личного местоимения и существительного (я ученик, ты учитель);

2. Из личного местоимения «я» или «он» и глагола (я беру, он дает);

3. Из указательного местоимения и существительного (это стол, это книга);

4. Из существительного и глагола в третьем лице с наречием (тут стоит стол, там лежит книга).

5. Из глагола в повелительной форме и двух дополнений (дай мне книгу);

6. Из местоимения или существительного и глагола в форме прошедшего времени и дополнения или наречий (я был дома, я учил урок);

7. Изменение формы прошедшего времени в зависимости от пола говорящего (я был, я была);

8. Пользование местоимением «наш» и «ваш», «наше», «ваше» с изменением родового окончания в зависимости от пола лица, к которому это слово присоединяется (наш учитель, наша учительница);

9. Формы падежей (в простейших случаях): родительный с предлогом **у**, дательный с предлогом **к** и при глаголах даю (кому).

Винительный — прямое дополнение и с предлогом **в**, **на** (куда?).

Творительный — орудие действия (рубить топором, пишу пером).

Предложный — с предлогом **в** и **на** (где?).

ВТОРОЙ ГОД ОБУЧЕНИЯ РУССКОМУ ЯЗЫКУ—IV КЛАСС

Устная речь: а) Наша школа, б) описание времен года.

1. Разговорные уроки на темы: а) труд в колхозе и совхозе, б) орудия и машины, обработка земли, в) связь деревни с городом, г) организация снабжения города продуктами питания, д) фабрика и завод, машинная обработка сырья, е) гигиена и санитария в школе, ж) гигиена и санитария в домашней жизни.

Домашние и дикие животные. Птицы. Описан. животных и птиц по картинам и по вопросам.

2. Упражнения с дидактическим материалом (беседа по картинкам на проработанные темы).

3. Систематическое расширение русского словаря уча-

щихся путем пополнения его словами вспомогательными (предлоги, союзы), наречиями и прилагательными.

4. Расширение навыков пользования вспомогательными словами в разных случаях.

ЧТЕНИЕ

1. Чтение и разбор статей по учебнику.

2. Проработка новых оборотов речи, слов и форм их, встречающихся в статьях.

3. Проработка содержания статей (объяснительное чтение и беседы по вопросам по содержанию статей).

4. Заучивание наизусть стихотворений, басен, лозунгов.

5. Чтение некнижного материала (объявлений, распоряжений, плакатов и т. п.).

6. Заучивание наизусть революционных песень. Чтение в лицах.

ПИСЬМО

1. Списывание выбранных мест из текста прочитанных статей.

2. Письменные ответы на вопросы.

3. Составление надписей под рисунками.

4. Написание адреса.

5. Составление словаря русских слов по категориям.

6. Уменье записать заданный урок и проделанную классную работу.

7. Составление простых предложений по учебному материалу.

ПРАВОПИСАНИЕ

Усвоение правил графического изображения сочетания русских звуков, при которых буквы произносятся различно. Это касается букв **е, ё, я, ю** (ехать, ёлка, телега, тёлка, яма, моя, юбка, люблю, мою).

Обозначение мягкости согласных по слуху, при помощи **ь** (быть, плеть, сколько).

Необозначение мягкости согласных перед **й, е, ё, я, ю**, (лицо, тень, лён, дядя, ключ).

Употребление **ъ** и **ь** в середине слова, как знака разделительного (сел, съел, семя, семья). Употребление и произношение **э**.

Навык отчетливого произношения и соответствующего написания букв, которые в речи армянских учеников звучат по-иному (щ, ы, и др.).

ГРАММАТИКА

Грамматические навыки

Закрепление навыков, приобретенных в первом году.

Построение предложений из четырех слов.

Полный ответ на вопрос (Где ты был вчера? — Я был вчера дома).

Согласование прилагательных в краткой форме и существительных в предложении.

Построение предложений с существительными в различных падежах и названиями предметов в разных положениях.

Пользование вспомогательными словами: **у, для, без, около, впереди сзади, посреди, к, в, на, с, под, за.**

Изменение слов, выражающих действие по времени. Повелительная форма.

Все это на простейших наиболее употребительных глаголах, усвоенных практически в разных формах, без грамматических терминов.

Пользование соединительными словами **и, а, но, куда, где, откуда.**

ТЕОРЕТИЧЕСКИЕ СВЕДЕНИЯ ПО ГРАММАТИКЕ

Предложение и его части (подлежащее, сказуемое). Порядок слов в предложении в русском и армянском языках.

Существительное, глагол. Умение различать их и найти соответствующие формы на родном языке.

Множественное число (окончания **ы** и **«и»**; окончание **а** в среднем роде).

Личные местоимения.

Определение рода имен существительных по полу (для людей) и окончание слов (кроме имен, оканчивающихся на ь и шипящие буквы) для живых и неживых предметов (простейшие случаи).

Изменения по родам прошедшего времени глагола.

Формы падежей с предлогами: родительного с предлогами **у, для,** без, **впереди, сзади, посреди**. Способы выражения этих отношений на армянском языке.

Дательного — с предлогом **к.**

Винительного — с предлогом **в, на.**

Творительного — с предлогом **с, под, за.**

Предложного — с предлогами **в, на, о.**

Сравнение со способами выражения тех же отношений в родном языке:

Примечание: Прорабатываются только формы падежей имен существительных, окончивающихся на **а, я** (женский род), твердую согласную (мужской род), **о, е** (среднего рода).

ОБЪЯСНИТЕЛЬНАЯ МЕТОДИЧЕСКАЯ ЗАПИСКА К ПРОГРАММЕ РУССКОГО ЯЗЫКА В НАЧАЛЬНЫХ ШКОЛАХ ССРА (НЕ РУССКИХ)

В методике преподавания неродного, русского, языка в нашей начальной школе будут существенние отличия от методики преподавания иностранного языка вообще.

Говоря о методах обучения русскому языку, особое внимание нужно уделить методике начального обучения этому языку. Методы обучения неродному языку сводятся к двум основным: **прямому,** или **натуральному, и переводному.**

Как тот, так и другой метод в применении в «чистом» виде обладает и достоинствами, и недостатками.

Прямой или **натуральный** метод соответствует тому, как усваивается неродной язык человеком, попавшим в среду, говорящую на этом незнакомом ему языке. В школе на уроках неродного языка при этом методе всячески избегается родной язык и все объяснения даются наглядным, натуральным путем (предмет, картина, действие, жест, мимика и т. д.). К чтению текста на изучаемом языке, который к тому же уясняется не путем перевода, а путем толкования на этом же языке, учащиеся переходят после усвоения разговорной речи в определенном объеме.

При этом методе учащиеся сравнительно быстрее, чем при методе **переводном,** научаются понимать связную речь на изучаемом языке, быстрее растет у них так называемый **пассивый** запас слов, т. е. слов, которые учащиеся могут понимать в речи говорящего и при чтении, но сами оперировать этими словами еще не могут, медленнее растет **активный** запас, т. е, запас, применяемый самими учащимися.

Для усвоения языка при этом методе требуется длительная и систематическая работа ввиде лексических занятий и вещественного разбора.

При **переводном** методе неродной язык усвоивается путем перевода и объяснения на родном языке; сравнительно быстрее растет активный запас слов на изучаемом языке, чем пассивный; этот метод дает умение читать и переводить, но медленно развивает умение понимать связную речь на изучаемом языке, умение объясняться на этом языке: Кроме того, при переводе не всегда возможны точность и ясность передачи смысла объясняемого, что препятствует прочности усвоения.

Из сказанного об этих двух методах вытекает естественность и необходимость целесообразного комбинирования приемов и способов того и другого метода. В качестве же основного, стержневого метода рекомендуется метод прямой с постепенным ростом удельного веса приемов переводного метода по стадиям обучения неродному языку. Особенно вырас-

тает роль родного языка при изучении грамматики неродного языка, когда моменты отличия этого языка от родного могут быть выявлены, более понятны и легче усвоены только методом сопоставления и сравнения.

Особое место должен уделить учитель русского языка методике обучения русской грамоте детей, грамотных на родном языке. Следует указать, что нет необходимости повторения целиком процесса, имевшего место при обучении грамоте родного языка, поскольку навыками чтения учащиеся уже владеют и остается им лишь усвоить русский алфавит, в той или иной степени отличающийся от родного. Внимание должно быть уделено особому произношению целых русских слов, особых русских звуков, особых знаков-букв для их обозначения в русском алфавите.

***

В период проработки предварительного устного курса учитель постепенно приучает учеников понимать делаемые им по русски указания и распоряжения, касающиеся классной работы: **встань, сядь, поди сюда, скажи, отвечай, слушайте, повтори** и т. д.

Порядок прохождения букв русского алфавита устанавливается в зависимости от тех трудностей, которые представляет их усвоение для учеников армян. В первую очередь проходятся буквы, общие для русского и армянского алфавитов и те, произношение которых не представляет затруднения для учеников армян. Затем буквы, имеющие двоякое произношение в русской письменности (**е, ё, я, ю**), наконец буквы, соответствующие звукам, отсутствующим в армянском языке или произносимым иначе (**ы, й, щ**). Сначала берутся слова, которые пишутся так, как произносятся. Надо избегать на первых порах слов с сочетаниями из двух и более согласных, особенно в начале слов, а равно и слов с гласными **о** и **е**, произносимыми как **а** и «и» или неясно.

Особое внимание следует обратить на ударение в русских

словах (в начальной книге по русскому языку должно быть обозначено).

По развитию устной речи при проработке бесед на указанные темы учащиеся знакомятся сначала пассивно, а затем и активно с новыми словами и получают навыки пользования оборотами русской речи.

Учитель должен учитывать и тот запас русских слов, который ученики приобретают вне школы, при общении с русскими. Необходимо исправлять при этом ошибки их произношения и уточнять их значение.

Норма новых слов, подлежащих усвоению на уроках разговорной речи и при чтении, устанавливается учителем, но она не должна превышать пяти на урок.

Учитель может вводить в свою речь и большее число новых слов, не требуя немедленного их активного усвоения.

Все грамматические сведения даются на этом году без всяких теоретических объяснений и без грамматической терминологии. Навыки приобретаются путем сознательного усвоения целых предложений с теми или иными грамматическими оборотами или формами слов и путем практики в построении им подобных из знакомых и новых слов.

Необходимо учителю ясно представить себе причины трудностей усвоения произношения звуков русского языка учениками армянами.

В области гласных звуков у армян часто происходит смешение следующих звуков в русских словах: «о» и «а» (собака-сабака, вода-вада), «я» и «е» (пять–петь), «ы» и «и» (мило). Отсюда смешение этих букв в письменной речи.

В процессе устной речи достаточно только показывать правильное произношение, но при чтении следует обращать внимание на буквенный состав слов и добиваться отчетливого их произношения. Но долго останавливаться на каждом отдельном случае не следует.

Ударение в русском языке представляет большие трудности для армян, так как в армянском языке оно за немно-

гим исключением стоит на последнем слоге. Надо ставить значки ударения на тех словах, на которых место его иное, и добиваться в этих случаях отчетливало произношения слов с правильным ударением.

В области словоизменения (морфологии) русского языка затруднение представляют окончания русских форм, крайне разнообразные и иногда имеющие в разных случаях разное значение.

От момента сравнения и сопоставления явлений в двух языках следует отличать собственно перевод с одного языка на другой. Перевод применяется в качестве одного из видов упражнений по закреплению того или иного навыка и знания, удельный вес его относительно растет по мере обогащения запаса слов и навыков русской речи учащихся, следовательно, самое минимальное место перевод будет иметь на первом году обучения русскому языку и больше места отводится ему на последующих годах.

Материал по переводу может даватся только в учебнике: в программе же он не может найти отражения, кроме методических указаний по этому поводу.

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ

Համկոմկուսի Կենտկոմի ոգոստոսի 25-ի պատմական վորոշումների համաձայն, «Ծրագրերն այնպես մշակել, վոր ապահովվի գիտությունների հիմունքների հիմնավոր և սիստեմատիկ յուրացումը»:

Տարրական դպրոցում աշակերտները պետք է ձեռք բերեն.

1. Հաստատուն գիտելիքներ և ունակություններ՝ թվաբանության չորս գործողությունների (ամբողջ թվերով) սահմանում, վերացական և անվանական թվերով:

2. Մետրական սիստեմի չափերի վերաբերյալ գիտելիքներ (գծային, քառակուսի և խորանարդ) և այդ չափերի գործածության գործնական ունակություններ:

3. Սկզբնական գիտելիքներ հասարակ և տասնորդական կոտորակների մասին:

4. Տարրական գիտելիքներ գննական յերկրաչափությունից՝ չափումների և գծագրումների կապակցությամբ:

5. Խնդիրների լուծում:

Թվաբանության դասընթացն ըստ դասարանների բաշխված է՝ ա. դասարանում՝ չորս գործողությունները 1—10 և 1—20-ի, մասամբ նաև առաջին հարյուրյակի թվաշրջանում, բ. դասարանում հարյուրի սահմանում 4 գործողությունները և հազարի սահմանում՝ գումարման և հանման պարզ գործողությունները, գ. դասարանում՝ բազմանիշ թվերի չորս գործողությունները, դ. դասարանում՝ ամեն մեծության ամբողջ թվերի չորս գործողությունները, ապա՝ հասարակ ու տասնորդական կոտորակների գումարման ու հանման պարզ ձևերը:

Ջննական յերկրաչափության գլխավոր խնդիրն է՝ յերեխաների մեջ հետզհետե զարգացնել յերկրաչափական ձևերի և տարածական պատկերացումները:

Մաթեմատիկայի ներկա ծրագրում նյութերի բաշխումը կատարված է այնպես, վոր համապատասխանի յերեխաների տարիքային հնարավորություններին, վորևէ դասարանում ծանրաբեռնում չառաջանա, բոլոր անհրաժեշտ նյութերը կուռ հաջորդականությամբ և սիստեմատիկորեն արծարծվեն:

Յուրաքանչյուր դասարանի ծրագիրը բաժանված է քառորդների, վորով ուսուցիչը պարզ կպատկերացնի գիտելիքների և ունակությունների այն ծավալը, վոր պետք է սպառվի ուսման տարվա տվյալ քառորդում: Այդ քառորդներն էլ մոտավորապես վորոշելու յեն ուսուցչի աշխատանքի տեմպը:

Նյութերի այդ բաշխումը մոտավոր է. նայած տեղական պայմաններին, աշակերտների պատրաստության չափին և այլն, կարելի յե մի քառորդից մյուսը նյութի վորոշ տեղափոխություններ կատարել: Սակայն բոլոր դեպքերում էլ տարեկան ծրագիրն ամբողջությամբ և հիմնովին պետք է անցնել:

Թվաբանական և յերկրաչափական նյութերը յուրաքանչյուր քառորդում դրված են առանձին-առանձին («Հաշիվ» և «Չափում ու գծագրում»): Այս հանգամանքը բոլորովին չի նշանակում, թե հարկավոր է նախ սպառել թվաբանական, ապա՝ յերկրաչափական նյութերը, վորոնք պետք է ավարտվեն զուգընթացաբար:

Ուսման տարվա յուրաքանչյուր քառորդում տրվում է միայն նոր նյութը: Սակայն անհրաժեշտ է հաճախ կրկնել անցածները. վորովհետև մաթեմատիկական ունակությունները պայմանավորված են կրկնություններով: Ամեն մի նոր նյութի հետ կապվում են նախկին անցածները, ուրեմն և առիթներ կարելի յե ստեղծել հնի և նորի զուգորդման համար:

Ամեն մի քառորդում անցածը պետք է ամփոփել կրկնություններով և հաշվառումներով, այդ աշխատանքին հատկացնելով մի քանի ժամ: Նույնն անհրաժեշտ է անել ամբողջ տարվա անցածի նկատմամբ. հետևապես՝ ծրագիրը պետք է անցնել այն հաշվով, վոր ուսման տարեվերջին մոտավորապես մինչև մեկ ամիս տրա-

մադրվի անցածի կրկնություններին, լրացումներին, հաշվառումներին և ամփոփումներին:

4-րդ դասարանում ամբողջ թվերին հաջորդում է կոտորակների ուսուցումը, վորոնց մասին գաղափար է տրվում դեռ առաջին դասարանից:

Մաթեմատիկայի դասավանդման ժամանակ անհրաժեշտ է ջննական խոսքի գործածությանը մեծ տեղ տալ մանավանդ ա և բ դասարաններում: Այստեղ կոնկրետը յելակետ պետք է լինի վերացականի համար:

Թվաբանության ուսուցումը հիմնված է յերկու կարևոր մոմենտների՝ հաշվային ունակությունների և խնդիրների լուծման վրա:

Հաշվային ունակություններում կենտրոնական տեղը պատկանում է բանավոր հաշվին: Աշակերտները պետք է կարողանան բանավոր և արագ հաշիվ անել վոչ միայն 100-ի թվաշրջանում, այլև ավելի մեծ թվերի սահմանում, գործադրելով այն յեղանակները, վորոնք նշված են գ. և դ. դասարանային ծրագրում: Բանավոր հաշիվը պետք է տեղի ունենա ամբողջ տարվա ընթացքում, այլապես չի յուրացվի այն:

Գրավոր հաշվի կարևորությունն ավելի զգալի յե բարձր դասարաններում, յերբ աշակերտները դժվարանում են բազմանիշ թվերով բանավոր հաշիվներ անել: Թե բանավոր և թե գրավոր հաշվումներն անելիս պետք է խստորեն պահպանել նյութերի հաջորդականությունը, յելնելով հեշտից դեպի դժվարն սկզբունքից: Բանավոր ու գրավոր աշխատանքների մեջ վորոշ տեղ են բռնում x-ով վարժությունները՝ սկսած բ. դասարանից: Այստեղ հարկավոր է ուսուցիչների ուշադրությունը դարձնել մի հանգամանքի վրա,—քանի վոր «իքս» տերմինի գործածությունն աշակերտության մեջ առաջացնում է շփոթություն, ուստի դրա փոխարեն պետք է ասել «անհայտ թիվ» (օրինակ՝ $x-15=26$-ի արտահայտությունը պետք է կարդալ այսպես—մի թվի ավելացրած կամ գումարած 15, կդառնա 36, վորքան է անհայտ թիվը, $46-x=23$-ի պետք է կարդալ—ի՞նչ թիվ հանենք 46-ից, վոր մնա 23, վո՞րքան է անհայտ թիվը):

Բայց հաշվային ունակություններից, յերեխաները պետք է

ձեռք բերեն նաև յերկրաչափական ունակություններ։ Դրա համար անհրաժեշտ է այդ գիտելիքներին բացառապես գննական բնույթ տալ՝ կապելով զանազան չափումների հետ, թե դասարանում, աշխատանքի սենյակում, արհեստանոցում և թե դուրսը՝ բակում, հողամասում և այլն։ Չափումների անհրաժեշտությունը միշտ հանդես կգա պոլիտեխնիկ աշխատանքների ընթացքում. պետք է ոգտվել չափման բոլոր առիթներից և կատարել տալ յերեխաներին։ Չափումների համար նրանք պետք է վարժվեն մետրական չափերի գործածության։

Այդ չափերի ուսուցումն սկսվում է ա. դասարանից, ավարտվում է դ. դասարանում։

Չափումներին հաճախ հաջորդում են գրաֆիկ աշխատանքներ—դիագրամներ, հատակագծեր և այլն։ Ա. և բ. դասարաններում գծագրումները պետք է տարվեն վանդակավոր տետրերում, իսկ գ. և դ. դասարաններում գծային մասշտաբի միջոցով։ Թվաբանական խնդիրներ լուծելու նշանակությունը շատ մեծ է։ Դրանով թե յերեխաների դատողությունն է զարգանում և թե շրջապատող կյանքի—սոցիալիստ. շինարարութ. հարցերը հասկանալի դառնում։ Խնդիրներ ընտրելիս պետք է պահել խիստ հաջորդականություն՝ հեշտից, պարզից դեպի դժվարը, բարդը։

Ա. դասարանում խնդիրները պետք է լինեն 1—2, բ. դասարանում՝ 2—3, գ. դասարանում՝ 3—4 և դ. դասարանում՝ 4 և ավելի հարցանի։ Խնդիրների կառուցվածքն այնպես պետք է լինի, վոր դրանց լուծումը զարգացնի յերեխաների դատողությունը։

Դասագրքի զանազան հատվածներում յեղած խնդիրներն սպառելուց հետո, աշակերտներն ուսուցչի ոգնությամբ կազմում են ինքնուրույն խնդիրներ, վորոնց տվյալները վերցնում են շրջապատից և սոց. շինարարության բնագավառից։ Այս խնդիրները պետք է լինեն մատչելի, հետաքրքրական և վոչ մտացածին։

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

I ԴԱՍԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ

Յերեխաների թվական պատկերացումների ճշգրտում։

Ուղիղ և հակադարձ համրանք՝ մինչ 10։ Ծանոթացում թվանշաններին։ Բոլոր թվերի մինչև 10 գրել և կարդալը։

Գումարում և հանում 10-ի սահմաններում, գումարման և հանման (+ և —) նշաններ. հավասարման նշան (=)։

Յերեխաների տարածական և ժամանակի պատկերացումների ճշգրտում։ Ծանոթացում՝ քառակուսուն, ուղղանկյուն քառանկյանը, յեռանկյանը և շրջանին։

Շրջապատում գտնել այդ ձևերի առարկաներ։ Այդ ձևերը պատրաստել ձողիկներից, լուցկիներից, կտրել թղթից կամ ստվարաթղթից, գծել վանդակավոր թղթի վրա։

Մետր։ Մետրով չափելու վարժություններ։

Ժամանակի չափեր—վեցորյակ, յոթնորյակ։

Յերկրորդ քառորդ

Յերկրորդ տասնյակ

Թվարկում 20-ի սահմանում։

Գումարում և հանում 20 սահմանում։

Ուղիղ և հակադարձ համրանք—զույգերով, հնգյակներով, յեռյակներով և քառյակներով՝ մինչև 20։

Բազմապատկում և բաժանում 20-ի սահմանում։

Ծանոթացում կիլոգրամին, կես կիլոգրամին։

Փոքր ծանրությունների (1 և $\frac{1}{2}$ կիլոգրամ) կշռի վորոշելը կշեռքի ոգնությամբ։

Առարկաների մոտավոր ծանրությունը։

Յերրորդ քառորդ

Առաջին հարյուրյակ

Համրանք և բանավոր ու գրավոր թվարկություն՝ մինչև 100։ Գումարում, հանում, բազմապատկում և բաժանում տասնյակներով, մինչև 100։

Վարժությունների և խնդիրների լուծում։

Լիտր, կես լիտր, փոքր անոթների տարողության (բաժակ, շիշ) վերաբերյալ վարժություններ։

Չորրորդ քառորդ

Գումարում և հանում 100-ի սահմանում (պարզագույն դեպքեր)։

Ծանոթացում «այսքանով ավելի», «այսքանով պակաս» գաղափարներին։ Այս գաղափարների կիրառման հետ կապված խնդիրների լուծում։

Սանտիմետր, չափելու վարժություններ․ ծանոթացում ժամացույցին․ ժամանակի վորոշելը 1 ժամի ճշտությամբ։ Ժամ, որ, ամիս, ամիսը քանի որ ունի, որը՝ քանի ժամ։

Տարվա ընթացքում անցած նյութի կրկնություն։ 1—2 հարցանի խնդիրների լուծում՝ ամբողջ տարվա ընթացքում։

II ԴԱՍԱՐԱՆ

Առաջին քառորդ

Գումարում և հանում 100-ի սահմանում (առանց տասնյակներն անցնելու)։ Ծանոթացում յերկրաչափական մարմիններին, խորանարդ, չորսվակ, գունդ։ Այդ մարմինները տարբերելու, շրջապատում գտնելու և կառուցվածքային (կոնստրուկտիվ) աշխատանքների ժամանակ օգտագործելու կարողություն։

Ծանոթություն ուղիղ և կոր գծերին։

Թելի և ցցի օգնությամբ գետնի վրա ուղիղի գծելը և նրա չափելը։ 1—20 սահմանում հեռավորությունն աչքաչափով հաշվելը։

½ հարցանի խնդիրները լուծվում են ամբողջ տարվա ընթացքում։

Յերկրորդ քառորդ

Գումարում և հանում հարյուրի սահմանում։

ա) Յերբ տասնյակը չի անցնում (որ․ 20+34, 54—20, 23+34, 57—34)․

բ) Յերբ տասնյակը լրանում է (որ․ 24+36, 44—24)․

գ) Յերբ տասնյակն անցնում է (որ․ 27+36, 62—35)։

Յերկանիշ անվանական թվերի գումարումն ու հանումը, առանց վերածման գործողությունների (ռուբլի և կոպեկ, դեցիմետր և սանտիմետր) և չափերի անդրադարձման։ Ծանոթություն գումարման տեղափոխելիության հատկությանը։ Թվերի տարբերական համեմատում։

1) Բազմապատկման և բաժանման կրկնություն 20 սահմանում, 2) Ուղիղ և հակադարձ համրանք խմբակներով, մինչև 100 (որ․ 6, 12, 16···7, 14, 21, 28 և այլն)։ 3) Բազմապատկման և բաժանման աղյուսակի առաջին մասը։

Յերրորդ քառորդ

Աղյուսակային բազմապատկում և բաժանում (շարունակություն)։

Ծանոթացում բազմապատկման տեղափոխելիության հատկություններին (արտադրիչների տեղափոխությամբ արտադրյալը չի փոխվում)։

Արտաղյուսակային բազմապատկում և բաժանում․ յերկնիշ թվի բազմապատկում միանիշով և միանիշի բազմապատկումը՝ յերկնիշով․ յերկնիշ թվի բաժանում յերկնիշի և միանիշի վրա։ Բաժանում մնացորդով։ Թվերի քանորդական համեմատում (մի թիվ մյուսից քանի՞ անգամ մեծ է կամ փոքր)։

Մասեր՝ ½, ¼, ⅛։ Միատեսակ մասեր ունեցող կոտորակների գումարում և հանում։ Թվի ½, ¼, ⅛ մասը գտնելը։

100-ի սահմանում բոլոր գործողությունների կրկնություն։

Խնդիրների լուծում։

Ծանոթացում պարզագույն դիագրամներին․կարդալ և վանդակների միջոցով սյունակային դիագրամներ գծել՝ վանդակն ընդունելով վորպես միավոր։

Ժամանակի չափեր․ որ, ժամ, րոպե։ Ժամացույցի միջոցով ժամանակի վորոշելը՝ մեկ րոպեյի ճշտությամբ։ Ժամանակը յերկու ձևով արտահայտելը (ժամի 2—ժամի 1)։

Շրջանը, քառակուսին և ուղղանկյունին մասերի բաժանելը (ծալելու միջոցով)։ Աչքաչափով ուղիղ գծի բաժանումը 2, 4 և 8 հավասար մասերի։

Սենյակի և արտաքին ջերմաստիճանի չափումը ջերմաչափի օգնությամբ։

Չորրորդ քառորդ

Բանավոր և գրավոր թվարկություն 1000-ի սահմանում։

Կլոր հարյուրյակներով բոլոր գործողությունները 1000-ի սահմանում։

Գումարում 1000-ի սահմանում՝ հաշվիչով։ Յերկանուն անվանական թվերի (ռուբլի, կոպեկ, մետր և սանտիմետր, կիլոգրամ և գրամ) գումարումն ու հանումը՝ չափերի անդրադարձումով։

Կշռի միավորներ՝ գրամ։ Կշռել 100 գր., 200 գր., 500 գր. և 1 կգ. կշռաքարերով։ Ձեռքով մոտավորապես որոշել զանազան առարկաների կշիռը 1—2 կիլոգրամի սահմանում։

Ծանոթություն կիլոմետրին. կիլոմետրի չափումը գետնի վրա։ Սյունակային դիագրամների կարդալն ու գծագրելը վանդակավոր թղթի վրա (պայմանական ձևով մի վանդակն ընդունելով որպես հաշվի չափի միքանի միավոր)։

III ԴԱՍԱՐԱՆ

Առաջին քառորդը

(II դասարանում անցած նյութի համառոտ կրկնությունը)

Բազմապատկում և բաժանում 1000-ի սահմանում (պարզ դեպքեր). կլոր տասնյակների և հարյուրյակների բազմապատկումը միանիշ թվով. կլոր հարյուրյակների և տասնյակների բաժանումը։ Յերկնիշ և միանիշ թվի բազմապատկումը միանիշով. միանիշ թվի բազմապատկումը յերկնիշով և յեռանիշով. յեռանիշ թվի բաժանումը միանիշի վրա։

Չափերի մասին ունեցած գիտելիքների ընդարձակումը. յերկարության չափեր—կիլոմետր, մետր, դեցիմետր, սանտիմետր, միլլիմետր։ Ծանրության չափեր—տոնն, ցենտներ, կիլոգրամ, գրամ։

Յերկրաչափական նյութ.—Ծանոթություն մասշտաբին և նրա գործածությանը։ Ուղղանկյունի և քառակուսի. նրանց կողերը և անկյունները։

Ուղիղ, սուր և բութ անկյուններ։

Քառակուսու և ուղղանկյան կառուցումը՝ անկյունաչափի և քանոնի օգնությամբ։

Վանդակավոր թղթի վրա ուղղանկյան մակերեսների (դասարանի, բակի, բանջարանոցի և այլն) հատակագծումը մասշտաբով։

Յերկրորդ քառորդ

Թվարկում, գումարում և հանում՝ միլլիոնի սահմանում։ Բանավոր հաշիվ 100 և 1000 սահմանում, կլորացնելով գումարելիներից մեկը. (օրինակ՝ 98+ 75=100+75—2=173)։ 1000-ի սահմանում գումարում և հանում՝ հաշվիչի վրա։

Թվերի գումարում, փոխելով գումարելիների դասավորությունը (օրինակ՝ 94+37+6=94+6+37=100+37)։ Բազմապատկում և բաժանում միանիշ թվով. կլոր տասնյակներով և զերոներով վերջացող միավորներով (10, 200, 4000 և այլն)։

1000-ի սահմանում բոլոր գործողությունների կրկնությունը։ Ծանոթություն՝ «գումարելի», «գումար», «հանելի», «նվազելի», «տարբերություն» տերմիններին։ Խնդիրների լուծում։

Գումարման և հանման արդյունքների ստուգում։

Ժամանակի չափեր.—Դար, տարի, ամիս, օր, ժամ, րոպե, վայրկյան։

Անվանական թվերի վերածումը և անդրադարձումը։

Յերրորդ քառորդ

Բանավոր հաշիվ 1000-ի սահմանում։ Թվերը 10-ով և 5-ով բազմապատկելու պարզագույն ձևեր։

Բազմապատկում և բաժանում յերկնիշ թվերով։

Միլլիոնի սահմանում թվերի բազմապատկումը և բաժանումը (գրավոր)։

Բազմանիշ թվի բազմապատկումը և բաժանումը միանիշով, բազմանիշ թվի բազմապատկումը 10-ով, 100-ով, 1000-ով։ Բազմանիշ թվի բազմապատկումը յերկնիշով։ Բազմանիշ թվի բաժանումը միանիշ և յերկնիշ թվի վրա։

Զերոներով վերջացող բազմանիշ թվի բաժանումը 10, 100, 1000-ի վրա։ Բազմապատկման և բաժանման գործողություննե-

րի տերմինների յուրացում: Բազմապատկման և բաժանման արդյունքների ստուգում: Խնդիրների լուծում:

Երկրաչափական նյութեր.—Քառակուսի չափեր: Ուղղանկյուն մակերեսների չափումը՝ քառակուսի միավորի վերադրումով:

Հողային մակերեսների չափեր—ար, հեկտար:

Ուղղանկյան մակերեսի որոշումը յերկարության և լայնության միջոցով (հիմք և բարձրություն):

Չորրորդ քառորդ

Բանավոր հաշիվ.—100-ով և 50-ով բանավոր բազմապատկման յեղանակները: Բանավոր բաժանման յեղանակները՝ բաժանելին գումարելիների վերածելու միջոցով: Օրինակ՝ 238:7=(210:7)+(28:7): Փակագծերի գործածություն:

Մասեր.—$^1/_2$, $^1/_4$, $^1/_8$, $^1/_5$, $^1/_{10}$. Մասերի ձևափոխությունը (օրինակ՝ կեսը հավասար է յերկու քառորդի): Միանուն և բազմապատիկ մեծությունների մասերի համեմատումը: Միանուն և բազմապատիկ մասերի գումարումը և հանումը: Ամբողջ թվի մասը գտնելը (յերկու գործողությամբ): Խնդիրների լուծում:

Երկրաչափական նյութ.— Ուղղանկյուն քառանկյուն ձև ունեցող հողամասի մակերեսի չափումը և հատակագծումը: Եկ-կերով ազատվելու կարողություն: Անցածի կրկնություն:

IV ԴԱՍԱՐԱՆ

Առաջին քառորդ

Ամեն մեծության թվերի բանավոր և գրավոր թվարկում (ներառյալ և միլիարդ): Թվերի կարգերն ու դասերը: Մեծ թվերի կրճատ գրությունը (օր. 156,000,000—156 միլիոն). բազմանիշ թվերի գումարում և հանում: Խնդիրների և վարժությունների լուծում

Երկրաչափական նյութ.—Ուղղանկյուն, սուրանկյուն և բութանկյուն յեռանկյուններ: Խորանարդ, ուղղանկյուն զուգահեռանիստ. որոշել դրանց նիստերը և ամբողջ մակերեսը:

Երկրորդ քառորդ

Բազմանիշ թվերի բազմապատկման և բաժանման բոլոր դեպքերը: Բազմապատկման մասնակի դեպքերը. զերոն թվերի միջում և վերջում:

Բաժանման մասնակի դեպքերը—զերոն թվերի վերջում և միջում. յերբ քանորդում ստացվում է զերոն միջում և վերջում: Բաժանումը մնացորդով: Տվյալ մասով ամբողջի գտնելը: Վարժություններ և խնդիրներ: 4 գործողության կրկնություն:

Երկրաչափական նյութ.—Խորանարդի և ուղղանկյան զուգահեռանիստի ծավալի չափումը. խորանարդ չափեր:

Երրորդ քառորդ

Մասեր.—$^1/_2$, $^1/_4$, $^1/_8$, $^1/_3$, $^1/_6$, $^1/_{10}$—$^1/_2$, $^1/_{100}$, $^1/_{1000}$.

Մասերի գոյացումը և ձևափոխումը: Կանոնավոր և անկանոն կոտորակներ: Խառը թիվ: Անկանոն կոտորակից ամբողջ թիվ հանելը. խառը թիվն անկանոն կոտորակ դարձնելը: Մասերի մեծությունների համեմատելը: Մասերի գումարումը և հանումը: $^1/_{10}$. $^1/_{100}$, $^1/_{1000}$ կոտորակների գրելը, տասնորդական կոտորակի ձևով: Տասնորդական կոտորակների ձևափոխումը: Տասնորդական կոտորակների գումարումը և հանումը, միևնույն քանակի տասնորդական նշաններով (հազարերորդական նշանից վոչ փոքր):

Գաղափար տոկոսի մասին: Ամբողջ թվի մեկ կամ մի քանի տոկոս հանելը (պարզագույն ձևերը):

Երկրաչափական նյութ.—Շրջան, շրջանագիծ, գիտենալ շրջանագծի կենտրոնը. շառավիղ, տրամագիծ: Շրջանի գծումը. շրջանաձև դիագրամներ կազմելը: Կարողանալ կարդալ շրջանաձև դիագրամներ:

Չորրորդ քառորդ

Մաթեմատիկայի անցած դասընթացի կրկնությունը և սիստեմավորումը: Խնդիրների լուծում ամբողջ քառորդի ընթացքում:

Գետնի վրա ուղիղ անկյուն և ուղղանկյունի գծելը: Ուղղանկյան ձև ունեցող հողամասերի արտագծումը պլանի վրա:

Բանավոր վարժություններ ծրագրում նախատեսված ծավալով տարվում են ուսումնական տարվա ամբողջ ընթացքում:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրության, վորպես առանձին առարկայի, դասավանդման նպատակներն ու խնդիրները սահմանված են ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թվի սեպտեմբերի 5-ի, 1932 թ. օգոստոսի 25-ի և 1934 թ. մայիսի 16-ի վորոշումներով:

Աշխարհագրությունը տարրական դպրոցում ձեռք է բերել ինքնուրույն ուսումնական առարկայի նշանակություն, վորը սովորողներին պետք է տա.

1. Աշակերտների հիշողության մեջ աշխարհագրական հիմնական անունների (յերկրների, գետերի, ծովերի, սարերի, քաղաքների և այլն) ամրացում.
2. Աշխարհագրական գիտելիքների հաստատուն յուրացման ապահովություն:
3. Քարտեզի իմանալը—հատկապես ԽՍՀՄ-ի քարտեզի:
4. Տարրական տեղեկություններ գավառագիտությունից:
5. Տարրական հասկացողություններ ֆիզիկական աշխարհագրությունից:
6. ԽՍՀՄ-ի ֆիզիկական աշխարհագրության հիմնական տարրերը:
7. Տարրական գիտելիքներ կապիտալիստական և գաղութային յերկրների աշխարհագրությունից:

Աշխարհագրությունը վորպես ինքնուրույն առարկա ավանդվում է տարրական դպրոցում 3-րդ դասարանից սկսած. սակայն աշխարհագրական տարրական գիտելիքներ տրվում են հենց I և II դասարանների բնագիտության ծրագրերում:

Հաշվի առնելով տարրական դպրոցում սովորողների տարիքը՝ 3-րդ և 4-րդ դասարանների աշխարհագրության դասընթացին տրվում է նախապատրաստական բնույթ: Նրա գլխավոր

խնդիրն է՝ սովորողներին սիստեմատիկ ձևով ծանոթացնել աշխարհագրության տարրական հասկացողություններին, ամբողջ աշխարհի քարտեզին և մանավանդ ԽՍՀՄ-ի քարտեզին: Գավառագիտական մոտեցումը հիմնականն է, մանավանդ ուսման 3-րդ տարվա դասընթացում: 4-րդ դասարանի դասընթացը տըն-տեսական աշխարհագրության տարրերով չի խճողվում:

3-րդ դասարանի աշխարհագրությանը հատկացվում է 72 ժամ գյուղում և 84 ժամ՝ քաղաքում, նկատի ունենալով գյուղի 7 օրյակով և քաղաքի 6-օրյակով պարապելը: 3-րդ դասարանի դասընթացի ընդհանուր վերնագիրը—մեր բնակավայրը, մեր շրջանը և մեր հանրապետությունը—ընդգծում է պարապմունքների մաքսիմալ գավառագիտական բնույթը:

3-րդ դասարանի ծրագիրը պարունակում է հետևյալ բաժինները:

I.	Կողմնորոշում տարածության մեջ	8 ժամ
II	Ծանոթություն տեղի ռելյեֆին և տեղական պլանին	8 »
III	Մակերևույթային և գետային ջրեր	8 »
IV	Ծանոթություն քարտեզին	10 »
V	Յերկրագունդն ու նրա պատկերելը գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրա	18 »
VI	Յեղանակ և կլիմա	10 »
VII	Ցուրտ, բարեխառն և տաք յերկրներ	6 »
	Աշխատանքի հաշվառում և կրկնություն	4 »
	Ընդամենը	72 »

Քաղաքում յուրաքանչյուր թեմային 1-ից 2 ժամ ավելի յե հատկացվում, նկատի ունենալով նրա հնգօրյակով պարապելը:

Ծրագրի մեջ «Յերկրագունդ» թեման մտցնելը բացատրվում է հետևյալ նկատառումով. սովորողները ճիշտ կերպով կարող են մտնել իրենց բնակավայրի ուսումնասիրության այն դեպքում, յերբ գիտեն այդ վորպես յերկրագնդի մի մասնիկը: Յերկրագնդին ծանոթ լինելը նրանց նյութ կտա իրենց բնակավայրը այլ վայրերի հետ համեմատելու, հետևապես և կնպաստի իրենց բնակավայրի առանձնահատկություններն ավելի լավ հասկանալու: 3-րդ դասարանի աշակերտները թերթեր են կարդում արդեն, վորտեղ պատահում են տեղեկություններ ամբողջ

յերկրագնդի մասին, այս և հարկադրում է դպրոցին՝ չհետա-
ձգել աշխարհի քարտեզի ուսումնասիրությունը:

Հարկավոր է նկատի ունենալ, վոր 3-րդ դասարանի դասըն-
թացի հիմնական նպատակն է գավառագիտական նյութի հիման
վրա տալ տարրական աշխարհագրական հասկացողություններ,
շրջապատող տեղանքի առանձնահատկություններն ըմբռնելու
ունակություն, սովորեցնել աշխարհագրական առանձին յերե-
վույթներն (իր շրջանի աշխարհագրական տեսությունը) ընդ-
հանրացնելը:

3-րդ դասարանի ծրագիրը «Յերկրագունդ», «Մակերևույթի
ձևի փոփոխություն», «Յեղանակ և կլիմա» և այլ թեմաների
կապակցությամբ բավականաչափ նյութ է տալիս՝ թե յերեխա-
ների մեջ մատերիալիստական աշխարհըմբռնողությունը զար-
գացնելու և թե նրանց հակակրոնական դաստիարակության հա-
մար:

4-րդ դասարանի դասընթացի մշակմանը տրվում է 108 ժամ.
գյուղում և 120 ժամ՝ քաղաքում:

Այս դասարանում քարտեզի վրա կատարվող աշխատանքն
ընդլայնվում է: Ուսման 4-րդ տարվա հիմնական թեման է
«Մեր յերկիրը», վոր պետք է հանդիսանա 7-րդ դասարանի
«ԽՍՀՄ աշխարհագրություն» դասընթացի ուսումնասիրության
նախապատրաստական աստիճանը: Բնական է, վոր այս թեման
4-րդ դասարանում, համեմատած 7-րդ դասարանի հետ, ավելի
նեղ բազայի վրա յե մշակվում և մեթոդական այլ ձևերով:

4-րդ դասարանի ծրագիրն ունի հետևյալ բաժինները.

I.	ԽՍՀՄ-ի աշխարհագրական դիրքը, տարածությունը, սահմանները, մակերևույթի համառոտ տեսությունը	20 ժամ
II.	ԽՍՀՄ-ի գոտիների տեսությունը	45 »
III.	ԽՍՀՄ-ի ընդհանուր տեսությունը	15 »
IV.	ԽՍՀՄ-ի քաղաքական տեսությունը	15 »
V.	Կապիտալիստական խոշոր պետությունների և գաղութային խոշոր յերկրների համառոտ տեսությունը քարտեզով	8 »
	Կրկնություն և հաշվառում	5 »
	Ընդամենը	108 ժամ

Այսպիսով ԽՍՀՄ-ի քարտեզի վրա նախնական կողմնորոշու-
մից, յերկրի մակերևույթի համառոտ տեսությունից հետո սո-
վորողները կանգ են առնում գոտիների տեսության վրա, ապա
այդ բոլորը հանրագումարի բերում ԽՍՀՄ-ի ընդհանուր տեսու-
թյան մեջ: Այս կարգը՝ մասնավորից դեպի ընդհանուրն՝ ավելի
յե համապատասխանում 4-րդ դասարանի աշակերտների տարի-
քին:

ԽՍՀՄ-ի գոտիների տեսությունը կազմում է 4-րդ տարվա
դասընթացի հիմնական մասը և նրա նպատակն է տարրական
ձևով տալ ԽՍՀՄ-ի ֆիզիկական աշխարհագրության հիմունքնե-
րը: ԽՍՀՄ-ի աշխարհագրությունը ցայտուն կերպով պետք է
ցույց տա ԽՍՀՄ-ի աշխատավորության կողմից յերկրի անսահ-
ման հարստությունների յուրացման պատկերները, տնտեսու-
թյան նոր ձևերի շինարարության պատկերները, ցույց տա, թե
ինչպես աշխատավորական կոլեկտիվը նորանոր լանդշաֆտներ և
աշխարհագրական նոր փոփոխություններ է ստեղծում, թե ինչ-
պես սոցիալիզմ կառուցող յերկրում այդ յերկրի «դեմքը» փոխ-
վում է վոչ թե դարերի ու հազարամյակների, այլ հնգամյակնե-
րի ու տասնամյակների ընթացքում: Ուսման ամբողջ ընթաց-
քում դասատուն պիտի կարողանա աշակերտներին այնպես դաս-
տիարակել և վոգևորել, վոր նրանց մեջ առաջանա մեր շինարա-
րությանը մասնակցելու բոլշևիկյան բուռն ցանկություն և
նպաստի սովորողների կոմունիստական դաստիարակությանը:

4-րդ դասարանի վերջին (5-րդ) թեման նպատակ է դնում
աշակերտներին ծանոթացնել աշխարհի խոշոր պետություններին
և գաղութային յերկրներին, տարրական տեղեկություններ տալ
նրանց աչքի ընկնող յուրահատուկ կողմերի մասին և սովորեց-
նել քարտեզից ոգտվել՝ թերթեր և ժուռնալներ կարդալիս:

Թե 3-րդ և թե 4-րդ դասարանում մեծ տեղ պետք է տրվի
քարտեզը հասկանալու, կարդալու աշխատանքներին, աշխարհա-
գրական գեղարվեստական-նկարագրական գրականության ըն-
թերցմանը, գործնական աշխատանքներին, | դիտողություննե-
րին և եքսկուրսիաներին:

III ԴԱՍԱՐԱՆ

Մեր բնակավայրը, մեր շրջանը, մեր հանրապետությունը

I. ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Կողմնորոշում տարածության մեջ՝ հորիզոն. Հորիզոնի կողմերի որոշելը՝ արեգակի, բևեռային աստղի և կողմնացույցի միջոցով: Կողմնացույցի կազմությունը:

2. Դասարանի, դպրոցական հողամասի, գյուղի սխեմատիկ պլան կազմելը. քաղաքում՝ դպրոցի մոտիկ փողոցների պլանի կազմելը: Մասշտաբ (գծային): Դասարանի և դպրոցական հողամասի գծագրումը մասշտաբով:

3. Կողմնորոշում պատրաստի պլանով: Նրա ստուգումը (պլանի համեմատությունը իրականի հետ) էքսկուրսիայի ժամանակ: Պլանի վրա հորիզոնի կողմերի նշանակումը: Հեռավորությունների որոշելը պլանով: Ինչ գյուղեր, գետեր, լեռներ են գտնվում իր գյուղի (կամ քաղաքի) չորս կողմում:

II. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԻ ՌԵԼՅԵՖԻՆ ՅԵՎ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՊԼԱՆԻՆ

1. Ծանոթություն իր բնակավայրին (էքսկուրսիայի միջոցով): Տեղի ռելյեֆը—հարթություն, սար, բլուր, ցածրադիր վայր, ձոր, կղզի, թերակղզի (վերջին յերկուսը կապված տեղական լճերի կամ գետերի ուսումնասիրության հետ): Ճանապարհներ, կառուցվածքներ, կապի միջոցներ՝ կապված տեղագրական պլանի աշխատանքների հետ: Ո՞ւր են տանում իր գյուղից դուրս յեկող ճանապարհները, հեռախոսի կամ հեռագրի գծերը:

2. Տեղի առանձնահատկությունների պատկերումը տեղագրական պլանի վրա (ծանոթանալ ունեցած տեղագրական պլաններին):

3. Ծանոթություն շրջակայքի հողատեսքերի դասավորության (օգտագործելիք հողատեսքեր, ավազուտներ, ջրեր, անտառներ, մշակելու անհարմար հողեր):

III. ՅԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ ՅԵՎ ԳԵՏՆԱՅԻՆ ՋՐԵՐ

1. Ծանոթություն իր բնակավայրի մակերևութային և գետնային ջրերին:

2. Գետնային ջրերի առաջանալը. Ջրալի և ջրակայուն հողաշերտեր. Ջրհորներ:

3. Աղբյուր, առվակ, ակունք, գետաբերան, գետ, հուն, գետահովիտ, վտակ, գետի աջ և ձախ ափ, գետային սիստեմ, հոսող և կանգնած ջրեր, լճակ, լիճ, ծով, ծոց, ջրանցք: Էքսկուրսիաների միջոցով ծանոթանալ այս բոլորին, շրջանի ու հանրապետության քարտեզի վրա իմանալ նրանցից գլխավորների անուններն ու տեղը:

4. Քամու և ջրի ազդեցության ներքո ցամաքի մակերևույթի տարբեր ձևերի առաջանալը. ավազակույտեր, սողափուլեր և այլն:

5. Մարդու ներգործությունը բնության վրա. ճահիճների չորացում, ձորերի և գետափերի ամրացում, պայքար ավազների դեմ, հողերի ոռոգում, ջրանցքներ:

Իր գյուղի շրջակայքում և հանրապետության մյուս շրջաններում ի՞նչ ճահիճներ են չորացվում, իր գյուղի շրջակայքում և մյուս շրջաններում ի՞նչ ջրանցքներ են փորված, իր գյուղի հողերը ո՞ր գետի ջրով են ջրվում: Իր շրջանի կամ գյուղի ո՞ր գետերն են հեղեղներ տալիս:

IV. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՔԱՐՏԵԶԻՆ

1. Իր շրջանի, հանրապետության, Անդրկովկասի և ԽՍՀՄ-ի քարտեզների ցուցադրումը:

2. Քարտեզի վրա գտնել իր հանրապետությունը, իր շրջանը, իր գյուղը կամ քաղաքը: Քարտեզի մասշտաբի հասկանալը և նրա օգնությամբ քաղաքների և ավանների միջև յեղած տարածությունը որոշելը: Քարտեզի վրա իր շրջանի և հանրապետության գլխավոր գետերի, քաղաքների, ծովերի, լճերի, յերկաթուղիների գտնելը: Աշխարհագրական այդ վայրերի պայմանական նշանները քարտեզի վրա:

3. Ֆիզիկական քարտեզի վրա յերկրի մակերևույթի զանա-

դան ձևերի՝ դաշտավայրերի, բարձրավանդակների և լեռների բարձրությունների, ինչպես և ծովերի տարբեր խորության նշանակումը։ Ցամաքի մակերևույթի բարձրությունը ծովի մակերևույթից· Ֆիզիկական քարտեզի պայմանական գույները։ Իր շրջանի և հանրապետության գլխավոր դաշտավայրերի ու լեռների գտնելը քարտեզի վրա։

V· ՅԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՏԿԵՐԵԼԸ ԳԼՈԲՈՒՍԻ ՅԵՎ ԿԻՍԱԳՆԴԵՐԻ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1· Գլոբուսը վորպես յերկրագնդի մոդել։ Այն յերևույթները, վոր մարդուն կռահել տվին, թե յերկիրը գնդաձև է· բարձր առարկաների գագաթների լուսավորվելն արեգակը ծագելու և մայր մտնելու ժամանակ· նավի աստիճանաբար անհետանալը հորիզոնի հետևում՝ հեռանալու ժամանակ և, ընդհակառակն՝ նրա աստիճանաբար յերևալը՝ մոտենալու ժամանակ։ Ճանապարհորդություններ յերկրի շուրջը (Մագելան և մյուսները)։

2· Յերկրի օրական պտույտը· ցերեկվա և գիշերվա հաջորդումը։ Առաջինն ո՞վ դրեց յերկրագնդի պտույտի հարցը, և յեկեղեցին ինչպե՞ս վերաբերվեց այդ ուսմունքին (իմանալ Կոպերնիկոսի, Գալիլեյի, Բրունոյի մասին)։

2· Բևեռներ, աստիճանացանցի գլխավոր գծերը, հասարակած, գլխավոր—միջօրեական։ Հյուսիսային և հարավային, արևելյան և արևմտյան կիսագնդեր։

4· Կիսագնդերի քարտեզը։ Աշխարհամասեր։ Ովկիանոսներ։

5· Յերկրի պտույտն արեգակի շուրջը։ Տարվա յեղանակների հաջորդելն իրար, վորպես հետևանք (շնորհիվ յերկրի թեքության) տարվա ընթացքում յերկրի մակերևույթի տարբեր չափերով տաքանալուն։

6· Յերկրի բաժանումը հինգ կլիմայական (ջերմության) գոտիների։ Նրանց պայմանական սահմանները (արևադարձեր, բևեռային շրջաններ)։

VI· ՅԵՂԱՆԱԿ ՅԵՎ ԿԼԻՄԱ

1· Յեղանակի վերաբերյալ ուսման տարվա սկզբից արած դիտողությունների արդյունքները.—1) աշխատանք ջերմաչափի միջոցով· օդի ջերմության չափելը· աշնանային ամիսներ· աստիճանաբար ցրտելը, օրվա կարճանալը, արեգակի օրըստօրե ավելի ցածր դիրք ընդունելը· 2) յեղանակի օրացույցի տվյալների հաշվառումը· պարզ, ամպամած և անձրևային օրերի թիվը։ Տեղումներ· սրանց չափումն անձրևաչափով· տեղումների առաջանալն ու տեսակները· տեղումների նշանակությունը գյուղատնտեսության համար 3) քամու ուժը և ուղղությունը· աշխատանք հողմացույցի և հողմաչափի միջոցով· քամու ուժի օգտագործումը մարդու կողմից (հողմաղացներ, շարժիչներ)։

2· Յեղանակի փոփոխականությունն ու կլիմայի կայնությունը։ Եքսկուրսիա դեպի մոտակա օդերևութաբանական կայանը։ Օդերևութաբանական կայանի դերը մեր բնակավայրի յեղանակի և կլիմայի ուսումնասիրության գործում։ Դպրոցում օդերևութաբանական կայան կազմակերպելը։ Ինքնաշեն հողմնացույց, անձրևաչափ և նրանց օգտագործումը դպրոցի օդերևութաբանական կայանում։

3· Յեղանակի գիտական նախագուշակման հնարավորությունը և նախապաշարմունքների ու սնահավատությունների մերկացումը։ Ծանոթություն ծանրաչափին։ Իր գյուղի, շրջանի և հանրապետության կլիմայական յուրահատուկ և բնորոշ կողմերը։

VII· ՑՈՒՐՏ, ԲԱՐԵԽԱՌՆ ՈՒ ՏԱՔ ՅԵՐԿՐՆԵՐ

1· Ցուրտ, բարեխառն և տաք յերկրների կլիմայի և բուսական ու կենդանական աշխարհի տարբերությունները (համապատասխան նկարների ցուցադրում)։ Կիսագնդերի քարտեզի վրա ցույց տալ ցուրտ, բարեխառն և տաք յերկրների գոտիների տեղադրությունը։

2· Յերկրագնդի զանազան ժողովուրդները և նրանց բաշխումը յերկրագնդի վրա։

3· Գլխավոր յերկրները և նրանց գլխավոր մայրաքաղաքները։ Զանազան յերկրների ժողովուրդների կյանքին վերաբերող պատկերներ (զրույց, նկարների ցուցադրում և աշխարհագրական ընթերցանության գրքերի օգտագործում)։

IV ԴԱՍԱՐԱՆ

ԽՍՀՄ (քաղաքական և ֆիզիկական տեսություն) և աշխարհի քարտեզը․

I․ ԽՍՀՄ-Ի ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ (ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

1․ *Աշխարհի քարտեզը։ Աշխարհամասեր—Յեվրոպա, Ասիա, Աֆրիկա, Ավստրալիա, Ամերիկա և Անտարկտիդա։ Ովկիանոսներ—Մեծ կամ Խաղաղ, Ատլանտյան և Հնդկական։*

2․ *Համեմատել՝ ի՞նչ է յերկրագնդի վրա ավելի—ցամա՞քը, թե՞ ջուրը։*

3․ *Աստիճանացանցը կիսագնդի քարտեզի վրա։ Վերհիշել նրա կազմությունը և նշանակությունը։ Հասկացողություն աշխարհագրական լայնության և յերկարության մասին։*

4․ *ԽՍՀՄ-ի աշխարհագրական դիրքը (նշել նրա դիրքը Հյուսիսային կիսագնդում, ջերմության (կլիմայական) տարբեր գոտիներում, դիրքն ովկիանոսների նկատմամբ)։ Ծայրամասերը (ամենահեռավոր կետերը)։*

5․ *Մեր Միության տարածությունը։ ԽՍՀՄ-ի ծովային և ցամաքային սահմանները։*

Ծանոթություն․ *Իմանալ ԽՍՀՄ-ի ծովերը՝ Հյուսիսային սառուցյալ, Բարենցի, Սպիտակ, Սև, Ազովի, Կասպից, Բերինգյան, Ոխոտի, Յապոնական։ Կղզիները՝ Նոր Յերկիր, Սախալին։ Թերակղզիներ՝ Կոլա, Կամչատկա, Ղրիմ։*

6․ *ԽՍՀՄ հարևանները (սահմանակից պետությունները)—Ֆինլանդիա, Եստոնիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Ռումինիա, Մանջուրիա, Յապոնիա։ Նրանց մայրաքաղաքները։*

7․ *ԽՍՀՄ-ի մակերևույթի համառոտ բնութագիրը․ գլխավոր դաշտավայրերը, բարձրավանդակները և լեռները (ցույց տալ քարտեզի վրա)։*

8․ *ԽՍՀՄ-ի գլխավոր գետերը—Վոլգա՝ Կամա և Ոկա վտակներով, Դնեպր, Հյուսիսային Դվինա, Պեչորա, Նևա, Դոն, Ուրալ, Ոբ՝ Իրտիշ վտակով, Յենիսեյ՝ Անգարա վտակով, Լենա, Ամուր, Արաքս, Քուռ։ Ո՞ր ծովերն են թափվում այս գետերը։*

9․ *ԽՍՀՄ-ի գլխավոր լճերը․ Լադոգա, Ոնեգա, Բալխաշ, Բայկալ, Սևան (անուշահամ ջուր ունեցողներ)․ Կասպից, Արալյան, Ելտոն և Բասկունչակ (աղի ջուր ունեցողներ)։*

II․ ԽՍՀՄ-Ի ԳՈՏԻՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն

Մեր պետության լայնածավալ լինելը․ ցուրտ և բարեխառն գոտիներում գտնվելը։ ԽՍՀՄ-ի բնական պայմանների այլազանությունը՝ կլիմայի, հողի, բուսական ու կենդանական աշխարհների տեսակետից, որ բնորոշվում է ԽՍՀՄ-ի զանազան մասերի ունեցած տարբեր դիրքով։ Նրանց փոխադարձ պայմանավորվածությունը և զոնալ դիրքը։

Ա․ Բևեռային գոտի

1․ *Հյուսիսային բևեռային ծովի տեսությունը։ Ծովափնյա գիծ։ Կղզիները՝ Նոր Յերկիր, Ֆրանց Հոսեֆի յերկիր։ Թերակղզիները՝ Կոլա, Չուկոտկան։ Ծովերը՝ Բարենցի, Կարայի։*

2․ *Կլիմայի խստությունը։ Ձմռվա առանձնահատկությունները (ցրտեր, բևեռային գիշեր, հյուսիսափայլ)։ Ամառվա առանձնահատկությունները (ձյուն, սառույց, բևեռային օր)։*

3․ *Կենդանիները՝ փոկ, ծովացուլ, կետ, սպիտակ արջ։ Գազանորսություն և ձկնորսություն։*

4․ *Նավագնացության պայմանները հյուսիսային ծովերում։ Հյուսիսային մեծ ճանապարհը։ Հյուսիսն ուսումնասիրող խորհրդային արշավախմբերը («Սիբիրյակով» սառցահատը, «Չելյուսկինի» ճանապարհորդությունը և այլն)։*

5․ *Ռադիո կայանների տեղաբաշխումը բևեռային կղզիների և հրվանդանների վրա։*

Բ․ Տունդրաների գոտի

1․ *Տունդրաների տարածումը հյուսիսային ծովի ափերով։ Ռելյեֆը, ոգտակար հանածոները․ գրաֆիտ (Յենիսեյ), ապատիտ (Խիբին), խոշոր գետերը։*

Տունդրայի առանձնահատուկ բնույթը՝ կարճ ամառ, յեր–

կարճատև ձմեռ՝ բևեռային գիշերով. հողի հավերժական սառած լինելը և աննշան հալվելը՝ ամռանը:

2. Տունդրայի բուսականությունը.—Մամուռ, քարաքոս, թփապտուղ, կեչի և այլն:

3. Կենդանիները—Հյուսիսային յեղջերու, բևեռային աղվես, բևեռային մուկ: Թռչունները—բևեռային կաքավ (չչվող), սագ, կարապ, բադ (չվող թռչուններ): Ձկնային հարստությունները: Միջատների առատություն՝ ամառը:

4. Տունդրայի բնակչությունը.—Լոպարներ, նենեցներ, չուկչաներ, կամչադալներ և այլն): Նրանց բնակարաններն ու կենցաղը: Ցարական կարգերում ազգաբնակչության շահագործումը մեծագնորդների և վաճառականների միջոցով: Տունդրայի խորհրդայնացումը: Խորհրդային իշխանության հոգատարությունը հյուսիսային բնակիչների կուլտուրայի և կենցաղի բարելավման գործում (կուլտկայաններ, Փակտորիաներ, հիվանդանոցներ, դպրոցներ):

5. Տնտեսության տիպիկ ճյուղերը.— Յեղջերվաբուծություն, ձկնորսություն, վորսորդություն: Բնակիչների քոչը՝ յեղջերուների կերի կապակցությամբ: Տնտեսությունը վարելու տեխնիկան բարելավելը և աստիճանաբար կոլեկտիվ ձևերին անցնելը: Փոխադրական միջոցներ: Մերձբևեռային հողագործության հնարավորությունները:

Գ. Տայգայի գոտին

1. Տասնյակ հազար կիլոմետր տարածությամբ ձգվող փշատերև անտառները ԽՍՀՄ-ում (քարտեզի վրա ցույց տալ նրանց սահմանները): Ռելյեֆը, օգտակար հանածոները, քարածուխ, նավթ, աղ, վոսկի:

2. Տայգան հատող գետեր:

3. Տայգայի կլիմայական առանձնահատկությունները: Կարճատև, սակայն տաք ամառ, ուժեղ քամիներ՝ ձմեռը: Ցրտության բևեռը—Օյմեկոն:

4. Բուսական աշխարհը.—Ծառերի տեսակները—սոճի, յեղևնի, Սիբիրում՝ փիճի, մայրի, յելատին (пихта). ճահիճ. տորֆավայր: Կենդանական աշխարհը—սկյուռ, նապաստակ, աղվես, գայլ արջ և այլն: Թռչունները.—աքար, մայրահավ, փայտփորիկ:

5. Անմարդաբնակ տայգաներ.—Նոր, սակավաթիվ ավաններ գետափերին կամ տայգայի օգտագործելի տեղերում:

6. Տայգայի՝ ճանապարհներից զուրկ լինելը.—Քարտեզի վրա ցույց տալ յերկաթուղին, վոր անցնում է տայգայի հարավային յեզերքով (Լենինգրադ — Պերմ—Սվերդլով—Նովոսիբիրսկ—Վլադիվոստոկ) և հարավից հյուսիս ձգվող՝ Լենինգրադ—Մուրման. Ցարոսլավլ—Արխանգելսկ: Գետերի նշանակությունը վորպես հաղորդակցության միջոց: Ոդային ճանապարհները:

7. Անտառագործությունն (անտառների կտրելն ու լաստափոխումը) առաջ և այժմ: Անտառանյութերի առաքումն արտասահման՝ դեպի հյուսիս հոսող գետերի միջոցով և դեպի յերկրի ներսը՝ Վոլգայով, Կամայով և Վոլգայի այլ վտակներով: Անտառանյութերը գետափ տանելը ձիով և տրակտորով (ձմեռը՝ սառցե ճանապարհներով): Նավարկելի և լաստառաք գետերի բարելավումը (ջրանցքներ, գետերի մաքրում):

8. Վորսորդություն.—Սկյուռ, սամույր և այլն: Նշել գազանորսության պրիմիտիվ ձևերից աստիճանաբար մորթավոր գազանների բազմացմանն անցնելը գաստորգի բուծարաններում:

9. Հողագործություն և կաթնատնտեսություն (անտառների կտրելը՝ վարելահողի վերածելու համար, և խոտհարք՝ գետավողող մարգագետիններում):

Դ. Խառն անտառների գոտի

1. Սահմանները (ԽՍՀՄ բուսաբանական քարտեզով), ռելյեֆը. անտառի ծառերի տեսակները (կաղնի, լորի, թղկի, հացենի և այլն):

2. Օգտակար հանածոներ (Մերձմոսկովյան ավազան, Կուզնեցկի ավազան (Չերեմխովո), տորֆ և ֆոսֆորիտներ:

3. Միջին ռուսական բարձրությունից սկիզբ առնող գետերը և նրանց ընթացքը:

4. Կլիման, հողը, բուսական և կենդանական աշխարհը: Մարդն իր տնտեսությամբ ի՛նչ փոփոխություններ է մտցրել այդ լանդշաֆտի մեջ:

5. Գյուղատնտեսությունը խառն անտառների շրջանում։ Գյուղատնտեսական կուլտուրաները. հացահատիկներ՝ տարեկան, գարի և վարսակ. տեխնիկական բույսեր՝ վուշ, կանեփ, կարտոֆիլ։ Կաթնամսանասնապահություն։

6. Տնայնագործությունն անտառային շրջանում։ Նրա նշանակությունը։

Ե. Անտառատափաստանային և տափաստանային գոտի

1. Գոտու սահմանները ՍՍՀՄ-ի Եվրոպական և Ասիական մասում։ Ռելյեֆը։

Օգտակար հանածոները—քարածուխ՝ Դոնբաս, Կարագանդա. երկաթահանք՝ Կրիվոյ-Ռոգ, Կերչ. նավթ՝ Էմբա. պղինձ՝ Կազախստան. քարաղ՝ Դոնբաս։

2. Կլիմայական առանձնահատկությունները—սևահողը։ Բուսականության բնույթը։ Տափաստանների կենդանական աշխարհը։ Տափաստանի լանդշաֆտի փոխվելը (հերկվածությունը)։

3. Բնակչությունը և տնտեսության գլխավոր ճյուղերը։ Հացահատիկների մշակություն, այգեգործություն, բանջարաբուծություն, գյուղատնտեսական նոր կուլտուրաներ, որոնք տարբերվում են խառն անտառների շերտի կուլտուրաներից. ցորեն, յեգիպտացորեն, շաքարի ճակնդեղ, արևածաղիկ, ծխախոտ, բամբակ։ Մսատու և կաթնատու անասնապահություն։ Պայքար երաշտի և դաշտային վնասատուների դեմ (մորեխ, պոնտական մուկ)։

Տափաստանի քոչվորները—կազախներ։ Նրանց աստիճանական անցումը նստակյաց կյանքի և կոլեկտիվացման՝ խորհրդային կարգերում։

Խոշորագույն խորհրդային տնտեսություններ—հացահատիկային, անասնապահական և այլն։ «Գիգանտ» խորհրդային տնտեսությունը։

Զ. Մերձարևադարձային գոտի
(Չոր և խոնավ)

1. Ղրիմի հարավային ափը և Կովկասյան ծովափը. նրանց ռելյեֆը։ Կլիմայի, բուսական և կենդանական աշխարհների

առանձնահատկությունները։ Մերձտրոպիկական կուլտուրաներ (կիտրոն, թեյ, թուզ, խաղող և այլն)։

2. Բնակչությունը և տնտեսության գլխավոր ճյուղերը։

3. Կուրորտային նշանակությունը։ Ով է օգտվել կուրորտներից առաջ, և ով է օգտվում այժմ։

Է. Անապատների գոտի (Թուրանի դաշտավայր)

1. Գոտու տեղադրությունը։ Խոշոր գետերը. Ամու-Դարիա, Սիր-Դարիա։

2. Անապատի, կլիմայի, հողի բուսական և կենդանական աշխարհների առանձնահատկությունները։ Մի շարք գետերի առանձնահատկությունը (կորսվելն ավազներում՝ օր.՝ Զու, Սարի-սու)։ Ոազիսներ։

2. Թուրանի դաշտավայրի բնակիչները և տնտեսության տիպիկ ճյուղերը գետահովիտներում, նախալեռնային վայրերում և ոազիսներում առաջ և այժմ։ Քոչվոր անասնապահություն և դաշտային հողագործություն։ Արհեստական վոռոգում։ Բամբակագործություն։

Ը. Լեռնային շրջաններ

1. Կարևորագույն լեռնաշղթաները.—Ուրալ, Կովկասյան լեռնաշղթա, Տյան-Շան, Պամիր, Ալտայ։

2. Բնության, աշխատանքի և կենցաղի պատկերներ լեռնային վայրերի պայմաններում։ Կլիմայի, բուսական և կենդանական աշխարհների այլազանությունը՝ կախված ծովի մակերևույթի նկատմամբ վայրի ունեցած բարձրությունից (ուղղահայաց գոտիականություն)։ Ձյունապատ գագաթներ, սառցադաշտեր, լեռնային գետեր և նրանց օգտագործումը։ Ալպյան մարգագետիններ։ Լեռնային տիպի քոչվոր անասնապահություն։ Հողագործության դժվարությունը լեռներում։ Անտառային շերտը լեռներում։ Լեռնականների տնտեսության փոփոխությունները խորհրդային իշխանության օրոք։ Հովիտների վոռոգումը։ Ելեկտրիֆիկացիա։ Հովիտների արժեքավոր կուլտուրաները։

3. Լեռների բնակիչները։ Լեռնականների բնակարանները և կենցաղը։ Տնայնագործություն։

1247—5

4. Օգտակար հանածոները—յերկաթահանք (Ուրալ), մարգանեց (Ճիաթուրի՝ Կովկասում), նավթ (Բաքու, Գրոզնի, Մայկոպ), գունավոր մետաղներ (Ուրալ, Կովկաս):

III. ԽՍՀՄ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ-ի բնության գլխավոր տարբերությունները. արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի տեղաբաշխումը ԽՍՀՄ-ում:

1. ԽՍՀՄ-ի մակերևույթի ընդհանուր բնույթը: Դաշտավայրերի, բարձրավանդակների և լեռների դասավորությունը: Լեռների ծայրամասային դասավորումը: Լեռների կապն օգտակար հանածոների հետ:

2. Ռելյեֆի ազդեցությունը ԽՍՀՄ-ի գետերի ուղղության վրա: Գլխավոր թեքվածքները (դեպի ու՞ր ծովերը ԽՍՀՄ մակերևույթն ունի թեքվածք): Հասկացողություն գետերի ջրբաժանների և ավազանների մասին: Խոշորագույն ջրբաժանները:

3. ԽՍՀՄ կլիմայի բազմազանությունը: Ցույց տալ ցուրտ, բարեխառն և ամենատաք վայրերը: ԽՍՀՄ կլիմայի ցամաքային լինելը, որ դեպի արևելք գնալով ավելի յե խստանում:

4. ԽՍՀՄ հողային և բուսական գոտիները (բուսաբանական քարտեզի վրա ցույց տալ ԽՍՀՄ-ի գոտիների դասավորությունը, նշել բուսականության բնույթն ըստ գոտիների): Կլիմայի, հողի և բուսական աշխարհի կապը:

5. Կենդանական աշխարհի տեղաբաշխումը ԽՍՀՄ-ում (թվել գոտիների խոշորագույն ներկայացուցիչները):

6. ԽՍՀՄ-ի արդյունաբերության աշխարհագրական տեղաբաշխումը: Գլխավոր օգտակար հանածոների տեղն ու նրանց օգտագործումն առաջ և այժմ: Արդյունաբերական կենտրոններ: Նոր, սոցիալիստական քաղաքներ՝ Մագնիտոգորսկ, Ստալինսկ (Կուզնեցկստրոյ), Խիբինոգորսկ: Գունավոր և սև մետաղագործության ու մեքենաշինարարական գիգանտ գործարանների վայրերը՝ Մոսկվա, Լենինգրադ, Դնեպրովսկ, Խարկով, Ստալինգրադ, Ռոստով (Դոնի վրա), Չելյաբինսկ, Ստալինսկ, Մագնիտոգորսկ, Գորկի, Բալխաշստրոյ, Ուրդղերստրոյ: Քիմիական

կոմբինատների տեղաբաշխումը (Բոբրիկ, Բերեզնիկի, Ղարաքիլիսայի Քիմշեն): Հանքերի և շախտերի տեղաբաշխումը (Դոնի ավազան, Կուզնեցկի ավազան, Ուրալ, Կազախստան), նավթի վերամշակման գործարանների տեղաբաշխումը (Բաքու, Գրոզնի, Մայկոպ և ուրիշները):

7. Խոշորագույն ելեկտրոկայանների տեղաբաշխումը — Դնեպրոգես, Վոլխովստրոյ, Զագես, Ձորագես, Քանաքեռգես և ուրիշները:

8. Գյուղատնտեսության հիմնական ճյուղերի աշխարհագրական տեղաբաշխումը — հողագործություն (ցույց տալ հացահատիկային, վուշի, շաքարի, ճակնդեղի, բամբակագործական ռայոնները, չոր և խոնավ ռայոնները), անասնապահություն (կաթնատու, մսատու), ձկնորսություն, աղվամազ գազանների որսը, անտառագործություն և տնայնագործություն:

9. ԽՍՀՄ-ի տրանսպորտը. Իմանալ յերկաթուղիների և ջրային ցանցի հիմնական ուղղությունները: Ցույց տալ Մոսկվան ԽՍՀՄ-ի մնացած խոշոր քաղաքների հետ կապող յերկաթուղիները: Իմանալ նավարկելի գետերը, ցույց տալ Մարինյան սիստեմը (Կասպից ծով—Վոլգա—Նևա—Բալտիկ ծով):

Իմանալ նավահանգստային քաղաքները և ճանապարհները դեպի արտասահման: Անվանել նոր յերկաթուղիներն ու ջրանցքները: Մեծ Վոլգայի նախագիծը:

IV. ԽՍՀՄ-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ-ի կազմն ու բնակչությունը

1. ԽՍՀՄ-ի բնակչությունը, ընդհանուր թիվը, աճման տեմպերը:

2. ԽՍՀՄ-ի ազգային կազմը: Ազգությունների տեղաբաշխումը ԽՍՀՄ-ի տերիտորիայի վրա: ԽՍՀՄ-ի ազգային քաղաքական բաժանումը: ԽՍՀՄ-ի դաշնակից հանրապետությունները և նրանց կենտրոնները:

ա) ՌՍՖԽՀ—Մոսկվա, բ) ՈՒՍԽՀ—Կիյև, գ) ԲՍԽՀ—Մինսկ, դ) ԱՍՖԽՀ—Թիֆլիս, ե) ԹՍԽՀ—Աշխաբադ, զ) ՈՒԶՍԽՀ—Տաշկենտ, է) ՏՍԽՀ—Ստալինաբադ:

3. ՌՍՖՍՀ-ի մեջ մտնող ավտոնոմ հանրապետություններն ու շրջանները. նրանց կենտրոնները:

Ծանոթություն.—Բացի վարչական կենտրոններից, քարտեզի վրա ցույց տալ նաև կարևորագույն արդյունաբերական և առևտրական (նավահանգստային) քաղաքները— Ստալինգրադ, Խարկով, Վլադիվոստոկ, Աստրախան, Կուզնեցկ, Մագնիտոգորսկ, Արխանգելսկ, Լենինգրադ, Սևաստոպոլ և այլն:

V. ԵՐԿՐԱԳՆԴԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԸ

(Համառոտ տեսություն համաշխարհային քարտեզի վրա)

Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, ՀԱՄՆ, Ճապոնիա: Չինաստան, Հնդկաստան, Կանադա, Ավստրալիա, Աֆրիկա—գաղութ աշխարհամաս: Սրանց տեղը քարտեզի վրա. մայրաքաղաքները: Պետական ձևը (հանրապետությո՞ւն է, թե՞ միապետություն): Սրանց տարածությունը և բնակչության թիվը: Զրույցի միջոցով սրանցից խոշորների մասին տալ մի քանի աչքի ընկնող, յուրաքանչյուրի համար առանձնահատուկ, տեղեկություններ (ինչո՞վ է հարուստ, գաղութ ո՞ւնի, թե վոչ, գյուղատնտեսությո՞ւնն է զարգացած, թե արդյունաբերությունը, ծովա՞յին է, թե ցամաքային):

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ–ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Ա

Տարրական դպրոցում բնագիտության խնդիրներն են՝

1. Ճելակետ ունենալով բնության կյանքի, բնության յերևույթների մասին յերեխաների ունեցած պատկերացումները, ճշտելով այդ պատկերացումները և պայքարելով դրանց կրոնական և քաղքենիական խեղաթյուրումների դեմ՝ ընդարձակել աշակերտների՝ կենդանի և անկենդան բնությունից վերցրած նոր փաստերի մտահորիզոնը:

2. Կոնկրետ նյութի հիման վրա յերեխաներին մատչելի և ըմբռնելի ձևով տալ յերևան բերած բնության զարգացման ամենապարզ օրինաչափությունները:

3. Տալ բնության տարրերային ուժերին տիրապետելու վառ պատկեր՝ սոցիալիստական շինարարության պրոցեսում:

4. Արթնացնել յերեխաների մեջ բնությունն ուսումնասիրելու հետքրքրություն և նրանց զինել բնության յերևույթները հետազոտելու տարրական ունակություններով:

Այս դեպքում բնագիտությունը դառնում է հզոր մի գործիք՝ միլլիոնավոր յերեխաներին վորպես մարտնչող անաստվածներ, վորպես սոցիալիստական տնտեսության ապագա աշխատավորներ դաստիարակելու, ընդունակ՝ ուսուցման ողակներում (միջնակարգ դպրոցում, ֆաբզավուծում և տեխնիկումներում) տիրապետելու տեխնիկային և գիտությանը:

Տարրական դպրոցում տրվում է միայն բնագիտության հիմունքներին տիրապետելու առաջին ծանոթությունը: Սակայն դեպի բնությունը հայեցողական մոտեցում չպետք է լինի, վոր

արտահայտվում ե բնության «գեղեցկությունների» և նրա տարերային ուժերի առաջ խոնարհվելով: Բնագիտության աշխատանքների մարտական բնույթ, բնության վրա ներգործելու, այն աշխատավորների շահերի օգտին վերափոխելու փաստերի դրսևորում,—ահա բնագիտության աշխատանքների առանձնահատկությունները խորհրդային դպրոցում:

Ուստի բնագիտության ծրագրում, նրա բոլոր հիմնական բաժիններում, բնության զարգացման բոլոր հիմնական օրինաչափությունները պարզելիս պետք ե տրվի վառ, ցայտուն նյութ, վոր սոցիալիստական տնտեսության (արդյունաբերության և գյուղատնտեսության) մեջ բնորոշի բնության հարստությունների արտադրական տիրապետումը: Ծրագրում ցուցումներ կան՝ յերեխաներին արդյունաբերության հսկաների կառուցման պատկերները տալու՝ գյուղատնտեսության վերակառուցման հարցերի անհրաժեշտության մասին: Ըստ վորում թեորիայի ուսումնասիրությունը կապ ունի գյուղատնտեսության մեջ յերեխաների կատարելիք գործնական աշխատանքների, հասարակական օգտակար աշխատանքների հետ՝ հիմք ունենալով աշակերտների հասարակական-արտադրական աշխատանքի յենթարկումը դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին: Պետք տրվեն գյուղատնտեսական այնպիսի աշխատանքներ և այն սահմաններում, վոր նրանց կատարումը նպաստի յերեխաների կողմից «գիտական հիմունքներին» տիրապետելու ընդարձակմանն ու ամրացմանը, նպաստի նրանց կոմունիստական դաստիարակությանը և նրանց զինի իրենց տեսական գիտելիքները պրակտիկայում, փորձնական աշխատանքում գործադրելու կարողությամբ:

Բ.

Ուսման նյութի ընդհանուր սխեման հետևյալն ե.

Առաջին դասարանում աշակերտները ծանոթանում են բնության մեջ տեղի ունեցող սեզոնային փոփոխություններին՝ յեղանակի փոփոխություններին, բույսերի և կենդանիների կյանքում կատարվող փոփոխություններին: Բնության այս սեզոնային փոփոխություններն աշակերտներին տրվում են ընդհանուր պատկերներով, նրանց ուշադրությունը հրավիրելով կոնկրետ, վառ փաստերի վրա, ինչպես, օրինակ՝ տերևաթափը, կենդանիների նախապատրաստությունը ձմեռելու համար, կյանքի արթնացումը բնության մեջ, գարնանը, և այլն: Այս նյութը մշակվում ե աշակերտների անմիջական դիտողությունների հիման վրա:

Իսկ ամառվա մասին նյութը տեղ ե գտնում ամառային առաջադրություններում:

Ուսման յերկրորդ տարում բույսերի և կենդանիների կյանքն ուսումնասիրվում ե վոչ թե բնության մեջ կատարվող սեզոնային փոփոխությունների ընդհանուր պատկերներով, այլ բնության առանձին խմբավորումներով. ինչպես, օրինակ՝ բանջարանոց, այգի, ճահիճ, գետ, անտառ: Ըստ վորում վերցվում ե յերեխաներին մոտիկ նյութ՝ բանջարանոց, այգի, ընտանի կենդանիներ և թռչուններ, մոտակա ջրամբար, գետ, մոտակա անտառ), վոր մատչելի յե անմիջական դիտողության: Սակայն յերկրորդ դասարանում աշակերտի մտահորիզոնն ընդարձակվում ե ընտանի կենդանիների և թռչունների վայրենի ցեղակիցների՝ թե ձմեռող և թե չվող, ինչպես և ջրային միջատների ու կենդանիների ուսումնասիրությամբ:

Յերրորդ դասարանում նյութն ամբողջապես տրվում ե անօրգանական բնությունից, յերեք գլխավոր թեմաներով. «Ջուր», «Օդ», «Հող և օգտակար հանածոներ», ամենատարրական տեղեկություններ ելեկտրական յերևույթների մասին: Այստեղ ել սկսվում ե (գարնանը) «բույսի կյանքը» թեմայի մշակումը: Միանգամայն պարզ ե, վոր անօրգանական բնության նյութի մշակումը ուսուցչից կպահանջի պրակտիկ աշխատանքներ, փորձեր, դիտողություններ կատարել թե դեմոնստրատիվ բնույթ կրող (վոր ինքը՝ ուսուցիչն ե ցույց տալիս) և թե աշակերտի ձեռքով կատարվող: Այս առումով անօրգանական բնության ծրագիրը բավականաչափ հետաքրքիր նյութ ե տալիս: Բույսերի կյանքը վերցված ե բուսական օրգանիզմների կազմախոսական զանազանակերպության ուսումնասիրությամբ, բույսերի գլխավոր մասերի բազմազան ձևերի առկայությամբ:

Կազմախոսությունը տրվում ե այնպես, վոր բույսի յուրա-

քանչյուր մասի ունեցած նշանակության ուսումնասիրությունն ու ըմբռնումը բույսի ամբողջ կյանքի համար պարզ ու հեշտ լինի:

Չորրորդ դասարանում մշակվում է օրգանական բնությունը յերկու թեմայով՝ «Կենդանիների կյանքը» և «Ինչպես է կազմված ու ինչպես է աշխատում մարդու մարմինը»:

«Կենդանիների կյանքը» թեմայում ուսումնասիրվում է կենդանիների հարմարումների բազմազանությունը գոյության տարբեր պայմաններին. Ջրային կենդանիներ, յերկկենցաղներ և սողուններ, թռչուններ, գիշատիչ, խոտակեր կենդանիներ (տաք և ցուրտ յերկրների), խոտակեր կենդանիների ընտանեցումը և նրանց նշանակությունը մարդու կյանքում:

«Մարդու մարմնի մասին» թեմայով վերջանում է բնագիտության դասընթացը տարրական դպրոցում: Մարդկային հարցերի լուսաբանման հետ:

Ընդհանուր առմամբ տարրական դպրոցում բնագիտության նյութը բավականաչափ ամբողջական է ավարտված ու հանդիսանում է վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ պոլիտեխնիկական դպրոցների սիստեմատիկ դասընթացի օրգանական բաղկացուցիչ մասը:

Այս պատճառով էլ բնագիտության դասընթացը քիչ թե շատ սիստեմատիկ կերպով սկսում ենք անցնել յերրորդ դասարանից: Յերրորդ դասարանում տրվում են տարրական, էլեմենտար տեղեկություններ անօրգանական բնությունից, վոր անհրաժեշտ են բույսերի և կենդանիների կյանքի բարդ պրոցեսները հասկանալու համար, վոր մշակվում են այդ ուսման և հետագա տարիներում:

Գ.

Դասատուն պարտավոր է սիստեմատիկ կերպով և հետևողականորեն ավանդել իր առարկան՝ աշակերտներին ամեն կերպ վարժեցնելով դասագրքով աշխատելուն, զանազան տեսակի ինքնուրույն գրավոր աշխատանքներ կատարելուն, կաբինետում, լաբորատորիայում, ուսումնական արհեստանոցում աշխատելուն և, այդ հիմնական միջոցների հետ միասին, լայն կերպով

գործադրվող փորձերի և ուսումնական պիտույքների զանազան տեսակի դեմոնստրացիաներին, դեպի գործարան, թանգարան, դաշտ, անտառ և այլուր էքսկուրսիաներ կազմակերպելուն: Միաժամանակ դասատուն ամեն կերպ պետք է օգնի, յերբ նրանք իրենց ուսումնական պարապմունքների ժամանակ դժվարությունների յեն հանդիպում: Յերեխաներին սիստեմատիկ կերպով պետք է վարժեցնել ինքնուրույն աշխատանքի, լայն կերպով գործադրելով զանազան առաջադրանքներ, գիտելիքների վորոշ կուրսի տիրապետելուն համընթաց (խնդիրների և վարժությունների լուծում, մոդելների պատրաստում, աշխատանք լաբորատորիաներում, հերբարիումների հավաքում, ուսումնական նպատակներով դպրոցական հողամասերի օգտագործում և այլն (Կ. Կ.-ի 1932 թ. օգոստոսի 25-ի վորոշումից):

Ծրագիրը վոչ միայն ուսումնական նյութի բովանդակությունը պետք է տա, այլև հիմնականում նյութի մշակման հաջորդության ընթացքը պետք է սահմանի, աշխատանքի մեթոդներ ցույց տա: Ահա թե ինչո՛ւ ծրագրի մեջ ցուցումներ են մտցրած էքսկուրսիաների, լաբորատոր աշխատանքների, ուսուցչի դեմոնստրացիաների, կենդանի անկյան և բնության մեջ կատարվելիք դիտողությունների, դպրոցական հողամասում կատարվելիք աշխատանքների անհրաժեշտ մինիմումի նկատմամբ:

Կենդանի բնության ուսումնասիրության համար չափազանց էական առանձնահատկություն է հանդիսանում այնպիսի դիտողությունների կիրառումը, վորոնք չեն պարփակվում ծրագրի մշակման համար հատկացված ուսման ժամանակի մեջ: Այնպիսի հարցեր, ինչպես բույսերի զարգացումն ու աճումը, միջատների զարգացումն է և այլն, պահանջում են յերկարատև դիտողություններ կենդանի անկյան մեջ, բուն բնության մեջ. պահանջում են, վոր փորձեր դրվեն դպրոցական հողամասում: Ահա թե ինչո՛ւ հարկավոր է աշխատանքներ կազմակերպել պատանի բնագետների, պատանի փորձարարների խմբակներում, վորոնց աշխատանքը բնագիտական աշխատանքի անհրաժեշտ բաղկացուցիչ մասն է հանդիսանում: Պատանի բնագետների աշխատանքը, կրթական արժեքի հետ միասին, չափազանց կարևոր է յերեխաներին ինքնուրույն աշխատանքների վարժեցնելու տե-

ակերտից, որ զարգացնում է նախաձեռնությունը, ինքնագործունեությունը և մշակում հետազոտական աշխատանքի ունակություններ:

Բնության և գյուղատնտեսության մասին դպրոցում ստացած գիտելիքները լրացնելու և ամրապնդելու նպատակով ծրագրի մեջ ամառվա համար առաջադրանքներ են մտցվում: Այդ առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար պատանի բնագետների կազմակերպությունը խոշոր անելիքներ ունի:

Ամառվա առաջադրանքներ տալը պրակտիկա դարձնելու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում ամառվա կատարած աշխատանքի հաշվառումը: Հենց ամառվա աշխատանքների հաշվառումից էլ պետք է սկսի նոր ուսումնական տարին: Այդ կարևոր է աշակերտների ամառային աշխատանքները դպրոցի պրակտիկայում ամրացնելու համար, այդ կարևոր է նաև նրա համար, որ հարուստ, կոնկրետ նյութ է տալիս, որի հիման վրա ուսուցիչը կառուցելու յե հետագա աշխատանքը:

Յերեխաների ամառային բնագիտական և գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար առաջին հերթին պետք է օգտագործվեն այն հնարավորությունները, որ ստեղծվում են յերեխաների կազմակերպված կյանքի պայմաններում՝ պիոներլագերների, մանկական հրապարակների, գաղութների պայմաններում և այլն: Չպետք է դուրս մնան ե՛ բնությունը, ե՛ գյուղատնտեսությունը դիտելու համար, անհատական առաջադրություններ, հետագայում ստուգելով յուրաքանչյուրի աշխատանքը, կազմակերպելով յուրաքանչյուր աշակերտի կողմից ամառային առաջադրանքների կատարման արդյունքների հասարակական ստուգատես՝ ամբողջ դասարանով

Բնագիտության ծրագրի մեջ դրվում են և առողջապահական գիտելիքներն ու ունակությունները: Ինչպես արդեն յերևում է ծրագրի այդ մասի կառուցվածքից, հիշյալ գիտելիքների և ունակությունների մշակումը բաշխված է ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ ամիսների: Առողջապահական գիտելիքներին չպետք է հատկացնել ուսումնական ժամերից. առողջապահական ունակությունները յերեխաների մեջ պետք է պատվաստվեն ու դաստիարակվեն վողջ աշխատանքների ընթացքում:

Այս ծրագիրը վերամշակված է համաձայն ուսումնական ծրագրերի վերջին հրատարակության: Այստեղ մտցված են այն անհրաժեշտ փոփոխությունները, վոր բղխում են Համկոմկուսի Կենտկոմի 1934 թ. մայիսի 15-ի վորոշումից:

«Բույսի կյանքը» բաժինը 4-րդ դասարանի ծրագրից ամբողջովին հանված է և շատ պարզեցրած ձևով տրվում է 3-րդ դասարանում: 2-րդ դասարանի «Անտառը գարնանը» թեման ամբողջովին հանված է: Ավելացած ժամերը, իհարկե, տրվում են մյուս թեմաներին՝ ըստ նրանց ծավալի:

Յուրաքանչյուր դասարանում ավելացված է հատուկ բաժին՝ գարնանը և աշնանը գյուղատնտեսության պրակտիկ աշխատանքներ կատարելու համար:

Բնագիտության ծրագրի մեջ հատկապես շեշտվում են յերեխաների անմիջական կատարելիք դիտողությունները, եքսկուրսիաները, գործնական աշխատանքները:

Յուրաքանչյուր դպրոցից պահանջվում է դպրոցում անպայման կենդանի անկյուն կազմակերպել և գյուղատնտեսության գործնական աշխատանքների համար գեթ մինիմում տարածությամբ մշակելու հողամաս ունենալ:

ԾՐԱԳԻՐ

I ԴԱՍԱՐԱՆ

1. ԱՇՈՒՆ

Աշակերտների պատկերացումների դրսևորումը բնության աշնանային յերևույթների մասին: Աշնան պատկերներ: Փոփոխություններ՝ բնության և մարդկային աշխատանքների մեջ: Պայմանական նշաններով բնության օրացույց կազմելը, նշանակելով յեղանակի փոփոխություններն աշնանը. պարզ և ամպամած յեղանակ, անձրև, տաք և ցուրտ քամիներ:

Դաշտի, բանջարանոցի, այգու, անտառի տեսքն աշնանը (եքսկուրսիա դեպի դաշտ, բանջարանոց, այգի, անտառ): Ծանոթանալ տեղական ամենատարածված խոտաբույսերի, ծառերի, թփերի մի քանի տեսակներին (3—4 տեսակ): Սաղարթա-

վոր և փշատերև ծառեր։ Տերևների աշնանային գունավորումները։ Տերևաթափ։ Ծանոթանալ ծառատունկներին և սերմերին (կաղին, տխիլ, ընկույզ և այլն)։ Հավաքել պտուղներ, սերմեր՝ օգտակար թռչուններին ձմռանը կերակրելու համար։

Ծանոթանալ բամբակի, ծխախոտի, ցորենի, գարու սերմերին։ Ծանոթանալ աշնան պտուղներին։

Թռչունների չուն. ո՞ւր են չվում թռչունները ձմեռելու։ Ամենատարածված ձմեռող և չվող թռչունները։ Վայրի կենդանիների ձմռան պատրաստությունները (սկյուռ, վոզնի, դաշտային մուկ և այլն)։ Բնության նյութերի հավաքումը ձմեռային աշխատանքների և դասարանը զարդարելու համար։

2. ՁՄԵՌ

Ձմռան յեղանակի փոփոխության դիտողություններ։ Ցերեկվա կարճանալը։ Գիշերվա յերկարելը։ Ամենակարճ օրը ձմռանը։ Ջրի սառելը։ Սառցի գոյանալը, ձյուն։ Պայմանական նշաններով պատկերացնել ձմռան յեղանակի փոփոխությունները։

Ընտանի կենդանիները ձմռանը։ Նրանց պաշտպանելը ցրտից՝ տաք գոմերում։ Եքսկուրսիա կազմակերպել դեպի կոլխոզի, սովխոզի գոմերը։ Ընտանի կենդանիների բրդափոխությունը, մազափոխությունը ձմռանը։ Նրանց գույնը, նրանց կերակրելը։

Վայրի կենդանիների կյանքը ձմռանը։ Նրանց գունափոխությունը (աղվես, գայլ, նապաստակ)։ Մուշտակավոր կենդանիների վորսի պատկերներ։

Ընտանի ու ձմեռող օգտակար թռչունների խնամքն ու կերակրելը։ Դիտողություն տեղական թռչուններից մի քանիսի։ Մարդկանց նախապատրաստությունը ձմռանը, հագուստ, սննդամթերքներ, յերեխաների ձմռան խաղեր—սպորտ, ցուրտ և տաք յերկրներ։ Պատմություններ ցուրտ յերկրների մասին։ Չելյուսկինցիների ճանապարհորդությունը։ Տաք յերկրների բուսականությունը։ Կինոֆիլմի օժանդակությամբ ըստ հնարավորության ցուցադրել «կյանքը ցուրտ և տաք յերկրներում»։

3. ԳԱՐՈՒՆ

Դիտողություններ բնության գարնանային փոփոխությունների։ Ցերեկվա յերկարելը։ Յեղանակի տաքանալը։ Ձյան հալոցը։ Ջրերի ազատվելը սառցից. սառցահոս. Ջրերի հորդացումը (էքսկուրսիա դեպի դաշտ, գետափ)։ Գետափի քանդումը հոսող ջրի կողմից։

Ավազի և կավի արտաքին հատկությունների համեմատությունը։ Ավազի հատկությունները (թափվող, ջուր լավ անցկացնող)։ Կավ (կպչուն, հունցելի, ջուր անցկացնող, չորանալուց պնդացող, ճաքճքող, ջուրը պղտորող)։ Ավազի, կավի օգտագործումը շինարարության մեջ (էքսկուրսիա դեպի բրուտանոց)։

Ընտանի և վայրի կենդանիները գարնանը։ Նրանց մազաբրդափոխությունը։ Տաք օրերին բակ հանելը, արոտ հանելը։ Գարնանը վերադարձող առաջին թռչունները. Նրանց բներ պատրաստելն ու նորոգելը։ Նրանց կյանքը, փետրափոխութունը։ Ընտանի թռչունները գարնանը, նրանց խնամքն ու թուխս դնելը։

Ծառերի բողբոջումն ու ճյուղեր տալը (դիտողություններ)։ Դուրսը և տանը ցանված բույսերի խնամքը։ Պարզ դիտողություններ բույսերի աճմանը թե դպրոցական հողամասում և թե դպրոցից դուրս։ Սերմերի ծլման վրա դիտողություններ. դիտածի նկարում։

Եքսկուրսիաներ դեպի դաշտ, այգի, անտառ, բանջարանոց։

Կազմել գարնան առաջին բույսերի, ծաղիկների, պտուղների հավաքածուներ։ Սերմեր ծլեցնել, բույսեր չորացնել։

4. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄԱՌՎԱ ՀԱՄԱՐ

Գրի առնել և նկարել ջրում ապրող կենդանիները, բանջարանոցի կամ այգու վնասատու միջատները, անտառի թռչունները։ Հավաքել և չորացնել օգտակար կուլտուրական բույսեր և բանջարանոցի, դաշտի ամենատարածված մոլախոտերը։ Շարունակել ցանված բույսերի խնամելը։ Խնամել տնկած ծառերը, հավաքել դպրոցական բանջարանոցի բերքը և ծաղիկների սերմերը։

5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբեր.—Մարմնի խնամքը: Ձեռքերի, վզի, գլխի, քթի, ատամների մաքրությունը:

Ոճառի, ջրի, ատամի խոզանակի, թաշկինակի, յերեսսրբիչի գործածությունը: Ի՞նչպես պետք է նստել սեղանի առաջ պարապմունքի ժամանակ:

Դպրոցի սանիտար. հանձնաժողովի աշխատանքը:

Հոկտեմբեր.— Կերակուր և խմելու ջուր: Առանձին աման կերակրի համար և այն մաքուր պահելը: Ձեռքերի լվանալը ճաշելուց առաջ: Բերանի ողողելը ճաշելուց և առհասարակ ուտելուց հետո: Ի՞նչպես պահել խմելու ջուրը: Յեփ տված ջրի գործածությունը:

Նոյեմբեր.—Քուն: Քնելու ժամանակը և նրա տևողությունը: Անկողին և նրա պարագաների խնամքը:

Դեկտեմբեր.—Խաղեր և սպորտ՝ ձմեռը: Նրանց նշանակությունն առողջության համար:

Հունվար.—Հագուստի, կոշիկների նշանակությունը և նրանց խնամքը:

Փետրվար.—Շենքի խնամքը. ոդափոխությունն ու մաքուր պահելը: Շենքը մաքրելու միջոցները: Շենքի կարգավորման և ոդափոխության միջոցները:

Մարտ և ապրիլ.—Առողջ և հիվանդ մարդ: Կեղտը հիվանդության տարածող (քոս, տրախոմա, քոր, ծաղիկ), ինչպես պաշտպանվել վարակումից: Կրոնական ծեսերի վնասակարությունը: Հիվանդության դեպքում բժշկին դիմելու անհրաժեշտությունը: Տնային բժիշկներին («հեքիմ», «դալլաք») դիմելու վնասակարությունը:

Մայիս.—Արևը, ջուրն ու ոդը ամրացնում են առողջությունը: Արևից, ջրից և ոդից կանոնավոր կերպով ինչպես ոգտվել:

Ծանոթություն.— ա) Առողջապահական այս և հաջորդ խմբերի նյութերի դասավորությունն ըստ ամիսների պարտադիր չէ, այլ հանձնարարվում է միայն այդ նույթն անցնել ամբողջ տարվա ընթացքում: Բոլոր դասարաններում էլ առողջապահական նյութը պետք է անցնել վոչ թե բնագիտության դասաժամերին, այլ ամբողջ տարվա ընթացքում, վոր-

պես գործնական դաստիարակչական աշխատանք: բ) Բնագիտությանը հատկացված ժամերն այս դասարանում պետք է բացառապես ոգտագործել անմիջականորեն բնությանը ծանոթանալու գործնական աշխատանքների վրա—էքսկուրսիաներ, բնության և կենդանի անկյան դիտողություններ, առարկայական դասեր, հավաքած նյութերի շուրջը զրույցներ ու դիտողություններ՝ դասարանում, գործնական աշխատանք ու խնամք՝ կենդանի անկյունում և այլն:

II ԴԱՍԱՐԱՆ

1. ԱՅԳԻՆ, ԲԱՆՋԱՐԱՆՈՑՆ ՈՒ ԴԱՇՏՆ ԱՇՆԱՆԸ

Ամառային առաջադրանքների ամփոփումն

Այգի.—Ծանոթություն այգու մրգատու ծառերին և պտղատու թփերին (էքսկուրսիա դեպի այգի): Պտղատու կամ վոչ պտղատու ծառի գլխավոր մասերը. արմատ, բուն, տերև: Սովորել ծառերը տարբերել պտուղներով, տերևներով, կեղևներով (համեմատել տեղական մի քանի խիստ տարբերվող ծառեր): Ծանոթություն հյութալի պտուղների կազմությանը (կեղև, «միս», սերմ): Մրգերի և պտուղների նշանակությունն աշխատավորների սննդի գործում: Այգեգործության զարգացումը տվյալ շրջանում: Այգու վնասատուներն աշնանը (թրթուրների բները չոր տերևներում): Վնասատուների մասսայաբար հանդես գալը սնապաշտների կողմից աստվածային պատիժ համարելը և պայքար այդպիսի նախապաշարումների դեմ:

Պայքար այգու վնասատուների դեմ (նկատի ունենալ տվյալ շրջանի ամենատարածված վնասատուները)::

Եքսկուրսիա դեպի կոլ. և խորհտնտեսության այգիները:

Գործնական աշխատանք.—Կազմել մրգերի, պտուղների և այգու վնասատուների հավաքածու:

Խնամել և ուսումնասիրել այգու ոգտակար թռչուններին: Կազմել նրանց փետուրների հավաքածուներ:

Բանջարանոց.—Ի՞նչ են տալիս բանջարանոցները. կաղամբի տերևները, գազարը, ճակնդեղը, բողկը՝ արմատները, վարունգը, պամիդորը՝ պտուղները, սոխը, լոբին՝ սերմերը (էքս-

կուրսիա)․ բանջարեղենների նշանակությունը աշխատավորների համար, վորպես սնունդ։

Բանջարանոցային գլխավոր մոլախոտերը (տվյալ շրջանի և յերեխաներին ծանոթ)։ Պայքարի միջոցները մոլախոտերի դեմ։ Բանջարանոցը մաքրելը, աշնան վարը։ Բանջարանոցի վնասատուներն աշնանը (թրթուր, կաղամբի լվին և այլն)։

Վո՞րտեղ են ձմեռում բանջարանոցի վնասատուները։

Յերեխաների աշնանային աշխատանքները դպրոցի հողամասում․—դպրոցական հողամասի բերքի հավաքումը, հողամասի մաքրումը, վնասատուների հավաքումն ու վոչնչացումը։

Եքսկուրսիա դեպի բանջարանոց․—Հավաքել և չորացնել բանջարեղեն և կազմել հավաքածու (եքսպոնատներով)․ պատրաստել նրանց մոդելները։ Կազմել բանջարանոցի վնասատուների և մոլախոտերի հավաքածու։

Ուսումնասիրել և խնամել բանջարանոցի ոգտակար թռչուններին և կազմել նրանց բների, ձվերի և փետուրների հավաքածու։

Դաշտ․—Աշխատանքները բամբակի դաշտում, բամբակի չանաք (եքսկուրսիա դեպի կոլ․ և խորհտնտեսությունների բամբակի դաշտերը)։

Ծանոթություն բամբակենուն (արմատ, ցողուն, տերև և կնգուղ)։ Բամբակի վնասատուները և պայքար նրանց դեմ։ Ի՞նչ է մշակվում բամբակի թելերից և կորիզներից։ Բամբակի դերը ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության մեջ։

Գործնական աշխատանք․—Զորացնել բամբակենին, կազմել բամբակի գործվածքների, թելերի հավաքածուներ։

2․ ԸՆՏԱՆԻ ՑԵՎ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ՈՒ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

Ընտանի և վայրի կենդանիները մեզնում։ Կատուն և շունը․ նրանց կյանքի ուսումնասիրությունը։ Հովվական պահաշուն, վորսորդական և ռազմական շներ։ Շներով ճանապարհորդություն Հյուսիսում։ Կատվի ու շան արտաքին նմանությունն իրենց վայրենի ցեղակիցներին ու տարբերությունը նրանցից (վայրի կատու, վագր, առյուծ, գայլ և այլն)։

Ձին, վոչխարը, կովը վորպես խոտակերներ։ Իշի և ջորու

վայրի ցեղակիցները (զեբրա), կովի վայրի ցեղակիցները․—զուբրը, լոսը, խոզը և նրա բազմածնությունն ու ամենակերությունը։ Խոզի վայրի ցեղակիցը—վարազ։ Ճագարը, նրա բազմածնությունը։ Նրանց նշանակությունը ԽՍՀՄ-ում։ Ճագարի կյանքի դիտողությունը։ Վայրի կենդանիների, կրծողների, խոտակերների ատամները և նրանց տարբերությունը։ Ընտանի կենդանիների ընտելացումը և նրանցից ստացած ոգուտը։

Ընտանի թռչուններ․— Հավ (վորպես ցամաքային), բադ և սագ (վորպես լողացող թռչուններ)։ Սրանց վայրի տեսակները։ Ի՞նչպես են ապրում հավերը, բադերն ու սագերը․ նրանց կերակրելը։ Սրանցից ստացած ոգուտները։ Տեղական ոգտակար և վնասակար թռչուններ։ Գիշատիչ թռչուններ, սրանց կյանքը։ Ընտանի աղավնիներ։ Փոստատար աղավնիներն ու նրանց նշանակությունը յերկրի պաշտպանության գործում։

Եքսկուրսիա դեպի թռչնաբուծարան։

Գործնական աշխատանք․—Պահել ճագար և աղավնիներ։ Կազմել ոգտակար և վնասակար գիշատիչ և ընտանի թռչունների ձվերի ու փետուրների հավաքածուներ։

3․ ԳԵՏ ՑԵՎ ԼԻՃ

Ի՞նչ է լիճը։ Գետի և լճի տարբերությունը։ Ի՞նչպես են կազմվում գետերն ու լճերը։ Գետերն ու լճերը դարնան ամիսներին։ Ջրի հոսանքի քայքայիչ աշխատանքը․ գետերի ափերի վողողումը։ Ի՞նչից են առաջանում ձորերը։ Պայքար հեղեղումների դեմ։

Կյանքը գետում, լճում, ճահճում՝ գարնանը։ Հասկացողություն տվյալ շրջանի ջրային բույսերի և կենդանիների մասին։

Տվյալ շրջանի գետերում, լճերում ապրող ձկները։ Գորտի զարգացումը—ձու, շերեփուկ։ Գորտերից և դոդոշներից ստացած ոգուտը (միջատներով սնվելը)։ Մոծակն ու նրա զարգացումը։ Մալարիայի մոծակի վնասակարությունը։ Տարրական հասկացողություն մալարիայից պաշտպանվելու միջոցների մասին։ Մալարիայի դեմ ձեռք առնված միջոցները խորհրդային իշխանության կողմից։ Այլ վնասատու միջատներ (ծանոթանալ

12 7—6

տվյալ շրջանի յերկու–յերեք տեսակին)։ Դիտել կենդանի անկյան ձկներին, գորտերին և ջրային միջատներին։ Շարունակել աշնան սկսած դիտողությունները՝ բանջարանոցի և այգիների վնասատու միջատների զարգացման վերաբերյալ։

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբեր.—Ծանոթություն դասարանի յերեխաների ընտանեկան կենցաղային պայմաններին։ Բնակարանի առողջությունը։

Ինչպե՞ս են կատարվում շենքի մաքրության պահանջները դպրոցում (օդ, տաքություն, լույս, շենքի մաքրումը)։ Դասարանական կահույքն ու նրանցից օգտվելը։

Սանիտարաառողջապահական աշխատանքի կազմակերպումը դասարանում։

Հոկտեմբեր–Նոյեմբեր.—Դպրոցական հասարակական սնունդ։ Բուսական և կենդանական սնունդ. սննդառության առողջապահությունը. ուտելու վորոշ ժամեր, ուտելուց հետո հանգստություն. ատամների խնամքը։

Ծանոթություն ժողսննդի կազմակերպության. մաքրությունը ճաշարանում։

Դեկտեմբեր.—Ձմեռային խաղեր և սպորտ։ Նրանց նշանակությունը մարմնի ամրապնդման համար։

Հունվար.—Հագուստ և վոտնաման։ Տարբեր նյութերի հատկությունները, վորոնցից պատրաստում են հագուստ և վոտնաման։ Հագուստի և վոտնամանի խնամք։

Փետրվար–մարտ.—Ջրից օգտվելը։ Պայքար խմելու ջրի մաքրության համար։ Ջրմուղն ու նրա կառուցվածքը (թորումն ու ջրաբաշխումը)։ Ինչպես օգտվել աղբյուրից ու ջրմուղից։

Ապրիլ.—Փողոցների և հրապարակների առողջապահիկ դրությունը։

Մայիս.—Ամառվա նշանակությունն առողջության ամրացման համար։

Ամռանը կազմակերպվելու վերաբերյալ աշխատանքի կազմակերպումը. հրապարակներ՝ խաղերի, սպորտի համար։

III ԴԱՍԱՐԱՆ

Ամառային աշխատանքների հաշվառում և ամփոփում

1. ՋՈՒՐ

Հասկացողություն՝ պինդ, հեղուկ և գազային մարմինների մասին։ Ջրի յերեք վիճակը։ Ջրի ընդարձակվելը ջերմությունից և սառչելուց։ Հասկացողություն ջերմաչափի և նրանից օգտվելու մասին։ Ջրի յեռալն ու գոլորշիանալը։ Շոգու ընդարձակվելն ու առաձգականությունը (փակ անոթում յեռացած ջրի փորձը)։ Գոլորշու օգտագործումը շոգեշարժի աշխատանքի համար (միայն ցույց տալ)։ Վո՞րտեղից և ի՞նչ դրությամբ է ստացվում ջուրը յերկրիս վրա։ Ընդհանուր հասկացողություն՝ անձրևի, ձյան, մառախուղի, ցողի, յեղյամի առաջացման մասին (ջրի գոլորշիացման և գոլորշին սառը մարմնով սառեցնելու փորձի հիման վրա)։ Ջրի շրջանառությունը բնության մեջ։ Անձրև, ձյուն, ջրի ներծծումը գետնի մեջ։ Վորտեղից է առաջանում ջրհորի ջուրը։ Առվակներ, գետեր, ծովեր։ Ջրի գոլորշիացումը ջրամբարներում և այլն։ Բարձրից ցած թափվող ջրի ուժի օգտագործումը մարդու կողմից («սպիտակ ածուխ»՝ Յերևանի, Ձորագետի, Քանաքեռի հիդրոէլեկտրակայանները)։ Ջրի լուծող հատկությունը։ Ջրում չլուծվող և լուծվող նյութեր։ Ջրի թորումը։ Ջրի գործածությունը։ Ջրի դերն առողջապահության մեջ։ Ջրի անհրաժեշտությունը մարդկանց, կենդանիների և բույսերի համար։ Խմելու ջուր. աղբյուրի մաքուր ջրի նշանակությունն առողջապահության տեսակետից։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ՄԻՆԻՄՈՒՄ ՓՈՐՁԵՐ

1. Ջրի գոլորշիացումը և գոլորշին նստեցնելը սառը մարմնի վրա։
2. Ջրի ընդարձակվելը տաքությունից։
3. Գոլորշու առաձգականության շուրջը փորձ։
4. Փորձեր՝ ջրի լուծելիության, քամելու, գոլորշիացման վերաբերյալ։

2. ՈԴ

Ոդ.— Ոդի առաձգականությունը (ոդային ատրճանակ), տաքությունից ընդարձակվելը (լավ փակված—խցանած սրվակի տաքացման փորձը): Ոդը ջերմության վատ հաղորդիչ է. չենքեր կառուցելիս՝ այս հատկությունից ոգտվելը (կրկնակի շրջանակներ): Ինչպե՞ս են հաղորդում ջերմությունն այլ մարմինները:

Տաք և ցուրտ ոդի շարժումը սենյակում: Քամին վորպես ոդի շարժում: Քամու ուղղությունը դիտելու գործիք: Հողմացույց և նրա կազմությունը: Ոդի ճնշումը (ոդի ճնշումը ցույց տվող փորձ), ծանրաչափ և նրա նշանակությունը: Քամու աշխատանքը բնության մեջ. փոթորիկ, թարթառ, ավազի լցքեր, դյուներ, պայքար նրանց դեմ: Քամու ուժի ոգտագործումը: Հողմաղացներ:

Ոդի բաղադրությունը. թթվածին, բորակածին, ածխաթթու գազ: Թթվածնի՝ այրմանը նպաստող՝ հատկությունը (փորձ):

Ածխաթթու գազի հատկությունը—ծանր գազ. այրմանը չի նպաստում և պղտորում է կրաջուրը: Թթվածնի անհրաժեշտությունն որգանիզմի համար. ածխաթթու գազի վնասակարությունը կենդանիների համար:

Գործնական աշխատանք.—Մինիմում փորձեր—1. Վառվող մոմի փորձը՝ ցույց տալու համար ոդի շարժումը սենյակում: Ոդի ատրճանակի կազմությունը (ոդի առաձգականությունը):

2. Ոդի ջերմահաղորդականության փորձ: 3. Թթվածնի ու ածխաթթվի հատկությունները վորոշող փորձեր: 4. Փորձեր ոդի ճնշման վերաբերյալ—բաժակի, շշի, տակառի միջոցով:

3. ՀՈՂ ՅԵՎ ՈԴՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ

ա) Հող.—Յերկրի վերին հողմահարվող շերտը կոչվում է հող: Հողի կազմը. կավ, ավազ, բույսերի և կենդանիների փտած և վոչ փտած մնացորդները: Հողի տեսակները.—ավազահող, կավահող, սևահող:

Չոր և ջրախառն կավը և նրա հատկությունները, գույնը, ամրությունը, ջուր չանցկացնելը (փորձ): Հումուսը և նրա համեմատությունը կավի, ավազի հետ. հումուսի այրումը (փորձ):

Ապառները, վորոնցից առաջացել են ավազն ու կավը: Գրանիտ և լեռնային տեսակների մասին հասկացողություն:

Պինդ մարմինների ընդարձակումը տաքությունից և սեղմվելը ցրտից (փորձ):

Ջերմության և ցրտության ազդեցությունը լեռնային տեսակների վրա: Ինչպես առաջացան կավն ու ավազը (լեռնային տեսակների քայքայումից):

Լեռնային տեսակների, կավի և ավազի ոգտագործումը շինարարության մեջ: Աղյուսի, բրուտանոցային իրերի և ապակու արտադրությունները: Կրաքար և նրան ճանաչելը (գույնը, կարծրությունը, թթուներից ազդվելը): Կրաքարի տարբեր տեսակները. կավիճ, կոշտ կրաքար, մարմար: Կիր ինչպես ստանալ: Հանգած և չհանգած կիր, նրա գործածությունը (փորձ՝ հանգած կիր ստանալու համար): Կրաքարի զանազան տեսակները: Ցեմենտ պատրաստելը. ցեմենտի հատկությունը (փորձ), ցեմենտի ոգտագործումը շենքերի համար:

բ) Աղ.—Աղի բյուրեղի գոյացումը (դիտողություն աղի հագեցած լուծույթից բաժանվող բյուրեղների վրա): Աղի ստանալը ջրից (ծովից, աղի լճերից և աղբյուրներից): Քարաղի շերտերի մշակումը: Աղային հանքերը Նախիջևանի շրջանում (տարրական հասկացողություն Նախիջևանի շրջանի աղի ստացման մասին): Աղի անհրաժեշտությունը մարդու և կենդանիների համար:

Հասկացողություն պարարտացման համար գործածվող ոգտակար հանածոների մասին:

գ) Մետաղներ.—Յերկաթ, պղինձ, կապար, անագ, ալյումին, վոսկի: Մետաղների արտաքին տեսքը, գույնը, փայլը (դիտել և համեմատել նմուշները): Մետաղների հատկությունները (ամրությունը, հալվելը, կռելիությունը, ջերմահաղորդականությունը. համեմատել փայտի հետ): Մետաղների փոփոխությունը ջրի, ոդի ազդեցությունից: Յերկաթժանգ, թունավոր պղնձաժանգառ: Ժանգոտող և չժանգոտող մետաղներ: Մետաղների նշանակությունն արդյունաբերության, շինարարության և տնտեսության մեջ:

Հանք.—Հանքի որինակներ. յերկաթահանք, պղնձահանք, կապար (ծանոթություն նմուշներին): Հանքահանություն: Մետաղաձուլումը հանքից՝ հալոցի միջոցով: Հասկացողություն

հալոցի (գոմենի) վառարանների մասին, նրանց կառուցվածքը, պահպանությունը: Մետաղի նշանակությունը ՍՍՀՄ-ի ինդուստրացման գործում:

Տեղական օգտակար հանածոներ.—*Տուֆ, արթիկ-տուֆ, պեմզա, բազալտ: Սրանց տեսակները, հատկությունները, նշանակությունը շինարարության և արտադրության համար:*

Գործնական աշխատանք.—*Պատրաստել հողի տեսակների, կավի, ավազի, կրաքարի, աղի, հանքերի հավաքածուներ:*

Վառելիքի համար գործածվող օգտակար հանածոներ—նավթ, քարածուխ, տորֆ:

ա) Նավթը՝ *հեղուկ վառելանյութ: Նավթի ստացումը: Նավթամուղ: Նավթից ստացած տարբեր տեսակի նյութերը: Նրանց օգտագործումն արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ (բենզին, կերոսին, յուղ և այլն): Նավթահանքերն Ադրբեջանում և Անդրկովկասում: Նավթային արդյունաբերությունը վորպես առաջատար արդյունաբերություն ՍՍՀՄ-ում: Նավթի վճռական դերը սոցիալիստական շինարարության մեջ:*

բ) Քարածուխ.—*Ծանոթություն քարածխի կազմությանը: Քարածխի տարբեր տեսակները և նրանց համեմատությունը ածխի և տորֆի հետ: Քարածխի ծագումը. բուսական մնացորդների տեսանելի առկայությունը քարածխի մեջ: Բույսի ածխանալը—այրումը օդի պակասության դեպքում (ինչպե՞ս են փայտածուխ ստանում): Քարածխի գոյացումը նախնական անտառների բուսական մնացորդներից: Քարածխահանքեր և քարածխի ստացումը (շախտ): Քարածխի նշանակությունը սոցիալիստական շինարարության համար:*

գ) Տորֆ.—*Տորֆի առաջանալը: Բույսերի մնացորդների կուտակումը ճահիճներում: Տորֆային ճահիճներ և նրանց բուսականությունը: Տորֆի մշակումը սոցիալիստական տնտեսության մեջ: Տորֆային նոր շերտեր Նախիջևանում (Շահբուզում) և Հայաստանում:*

Եքսկուրսիաներ՝ *դեպի ավազահողային, կավահողային, սևահողային վայրերը:*

Եքսկուրսիա *(ըստ հարմարության)*՝ *դեպի կրի, տուֆի, պեմզայի, բազալտի, պղնձի հանքավայրերը:*

1. Փորձեր՝ լուծականության, *քամելու, գոլորշիացման վերաբերյալ:*

2. Փորձեր՝ հողի վերաբերյալ *(ավազի, կավի, հումուսի կազմն ու հատկությունները):*

3. Փորձեր՝ մետաղների վերաբերյալ *(հալումը, ջերմահաղորդականությունը, ընդարձակումը և այլն)):*

Առաջադրություններ.—*Ամառվա ընթացքում մետաղներից և հանածոներից կոլեկցիաներ կազմել:*

4. ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(2 *ժամ*)

Փոթորիկ: Ամպրոպն ու կայծակը վորպես ելեկտրական յերևույթ: Կայծակի և ամպրոպի հետ կապված կրոնական նախապաշարմունքների անհեթեթությունը: Շփման միջոցով ելեկտրական կայծ ստանալը: Շանթարգել և նրա կառուցվածքը:

Փորձեր *շփման միջոցով, ելեկտրականացրած սանրով, մութ ժամանակ կատվի մազերը շփելով և այլն:*

5. ԲՈՒՅՍԻ ԿՅԱՆՔԸ

Ծանոթանալ գարնանը վաղ ծաղկող խոտաբույսերի տեսակներին ու ծառերին (ուռենի, բարդի, խնձորենի, յեղևնի). եքսկուրսիա դեպի անտառ: Վաղ ծաղկող բույսերի ընդհողյա մասերի զանազանակերպությունը: Ընդհողյա մասերի նշանակությունն այդ բույսերի զարգացման համար: Ծանոթություն սերմերի կազմությանը (սիսեռ, լոբի և այլն)—մաշկ, շաքիլներ, բողբոջ (ծիլ): Դիտողություն սերմերի աճմանը: Նախապատրաստություն դպրոցական հողամասի գարնանացանին: Արմատի ձևերը—փնջավոր, գլխավոր և յերկրորդական արմատներ: Արմատի դերը—արմատը հողից ջուր և սննդարար նյութեր ե վերցնում. արմատը հողի մեջ բույսին ամրացնում ե:

Տարբեր բույսերի ցողունների զանազանակերպությունը. ծառերի և խոտերի ցողունները. կանգնած, փաթաթվող, սողացող, մագլցող ցողուններ: Ցողունի դերը—ցողունը սննդարար նյութերն արմատից փոխադրում ե դեպի ճյուղերն ու տերևները (դիտողություն՝ փորձի միջոցով):

Ջրասեր ու խոնավասեր բույսերի արմատների ու տերևների տարբերությունը:

Դիտողություն, թե բողբոջը ծլից ինչպես է զարգանում: Ծանոթություն բողբոջի կազմությանը:

Ծաղկի կազմությունը (առէջքներ, վարսանդ և այլն—կտրտել այդ մասերը դնել զանազան ծաղիկների վրա):

Պտուղների և սերմերի առաջացումը—զարգացումը ծաղկից. ինչպես են տարածվում պտուղներն ու սերմերը (քամու, կենդանիների, թռչունների, ջրի և մարդու միջոցով). ինքնուրույն կերպով տարածվող սերմեր (լոբի և պատիճավոր պտուղների սերմեր):

Աշխատանք դպրոցական հողամասում և ամռան առաջադրանքներ

Տվյալ շրջանի համար նոր կուլտուրաների՝ բանջարանոցային, դաշտային, կերի, տեխնիկական բույսերի (յուրաքանչյուրից մեկ-երկու հատ) մշակումն ու խնամքը: Վայրի բույսերի սերմեր և տնկիներ հավաքել՝ դպրոցական հողամասում տնկելու համար: Զանազան սերմերի և պտուղների ծառերի, թփերի, կամ մոլախոտերի և այլն կոլեկցիաներ հավաքել (ուսուցչի ցուցմունքով): Հացահատիկների (ցորեն, գարի, հաճար, վարսակ և այլն) կոլեկցիա կազմել:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբեր.— Աշխատանքի, հանգստի առողջապահությունը դպրոցում: Շենքի առողջապահիկ վիճակը (մաքրություն, մաքուր օդ, բարեխառնություն): Լուսավորությունը ձախից. գիրքն ու տետրն ինչպես բռնել, հեռավորությունն աչքից: Արհեստանոցում աշխատանքի ուղիղ դիրք: Ֆիզկուլտ-րոպեի նշանակությունը դասի ժամանակ: Հանգիստը դասամիջոցին:

Հոկտեմբեր.—Աշխատանքի և հանգստի առողջապահությունը տանը: Աշխատանքը բացօթյա և շենքում: Նախազգուշական կանոններ մրսելու դեմ՝ բացօթյա աշխատանքի և խաղերի ժամանակ:

Նոյեմբեր.—Օրվա ռեժիմը. աշխատանք, հանգիստ, խաղ, սնունդ, քուն:

Դեկտեմբեր.—Աշխատանքի և հանգստի առողջապահությունն արտադրության մեջ: Ողջախոհություն, լուսավորություն, մեքենաների նախազգուշական վանդակապատում: Բժշկական կետեր արտադրության մեջ:

Հունվար.—Մարդու հիվանդությունները. վարակիչ և ոչ վարակիչ: Հասկացողություն հիվանդություններ առաջացնող մանրէների մասին (աչքով անտեսանելի, իսկ մանրադիտակի տակ՝ տեսանելի էակներ):

Փետրվար-մարտ.—Վարակման միջոցները. շփումով (քոս), սննդի հետ (որովայնի տիֆ, խոլերա, փորահարինք), շնչած օդով (թոքախտ), մանրէներն արյան մեջ ընկնելով (ջերմ և բծավոր տիֆ): Կրոնական ծիսակատարությունների վնասակարությունը (հաղորդում, սրբերի պատկերներ, խաչեր, քարեր համբուրելը և այլն):

Ապրիլ.—Ճանճերը, մոծակները, վոջիլները որպես վարակ տարածողներ: Պայքար նրանց դեմ:

Մայիս.—Ամառային կազդուրիչ աշխատանքի կազմակերպում. բացօթյա կազմակերպված աշխատանք, կանոնավոր սնունդ, քուն, ֆիզկուլտուրա, սպորտ խաղեր: Մարմնի ամրապնդման օրենքները: Լողերների և հրապարակների նշանակությունն աշակերտների և պիոներների համար: Սանատորիաներ, հանգստի տներ՝ աշխատավորների համար:

IV ԴԱՍԱՐԱՆ

1. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ

ա) Կյանքը ջրում.—Հասկացողություն ձկան մասին: Ձկան հարմարվելը ջրային կյանքին: Ձկների ձու դնելը: Ձկներից ստացած օգուտը: Ձկնային արդյունաբերությունը Հայաստանում (Սևանում), նշանակությունն ու զարգացման ուղիները:

Հարևան հանրապետությունների ձկնարդյունաբերությունը: Ծովերում և գետերում ապրող կենդանիները, նրանց հարմարվելը ջրային կյանքին (օրինակ՝ փոկ, կորալ, ծովոզնի, շնաձուկ), լուսատու ձկներ:

Ծովային կենդանիներ.—Փոկ, կետ և նրանց տված օգուտը. փոկորսություն և կետորսություն:

բ) Կյանքն օդում.—*Թռչունների հարմարանքները թռչելուն. փետուրների և բմբուլների նշանակությունը: Թռչունների կազմության առանձնահատկությունները (իրանը, թևերը, ոսկորները), թռչունների արտաքին տեսքը՝ կապված նրանց կենցաղի և սնունդ ձեռք բերելու յեղանակի հետ (տալ տվյալ շրջանի գիշատիչ, հատիկակեր, միջատակեր թռչուններից մի քանի ցայտուն օրինակներ):*

Հավերը վորպես վատ թռչողներ: Հավի ձվի կազմն ու նշանակությունը: Հավաբուծությունը և նրա նշանակությունը Հայաստանում: Հասկացողություն ինկուբատորի մասին (ինկուբատորի կազմությունը), ճուտերի դուրս գալն ինկուբատորում:

գ) Կյանքը ցամաքի վրա.—*Գորտերը վորպես օրինակ յերկկենցաղ կենդանու: Ցամաքային կենդանիների բազմազանությունը: Թունավոր և անթույն օձեր: Հայաստանի տվյալ շրջանի օձերը: Կրյա, կոկորդիլոս, նրանց պաշտպանող վահանները: Մողեսները և նրանց պոչերի դյուրահատումն ու ռեգեներացիան: Տաք և ցուրտ յերկրների գազանները և նրանց իրենց միջավայրին հարմարվելը: Գիշատիչներին ընտելացնելու ուղղությամբ կատարված աշխատանքները: Բացատրել բուսական կերակրով սնվող կենդանիները: Նրանց ընտելացման դյուրությունը: Այդ կենդանիների խոշոր նշանակությունը մարդու համար:*

2. ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄՎԱԾ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ԱՇԽԱՏՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԻՆԸ

Մարդու և կենդանու արտաքին տեսքի համեմատությունը: Մարմնի գլխավոր մասերը և ծածկույթը. գլուխը, իրանը, վերջավորությունները, մաշկը, մազերը (կենդանիների բուրդը): Մկաններն ու նրանց նշանակությունը:

Կմախքի գլխավոր մասերը.— *Վողնաշար, գանգ, կրծքի վանդակ, վերջավորություններ: Կմախքը, մարդու հենարանն է և ներքին օրգանների պաշտպանը: Աշխատանքի ժամանակ վոչ ուղիղ դիրքի պատճառով վողնաշարի ծռումները և պայքար դրա դեմ, ֆիզկուլտուրայի նշանակությունը:*

Ներքին օրգանները.— *Գանգուղեղի և վողնուղեղի տեղն ու արտաքին տեսքը: Սիրտը, թոքերը, ստամոքսը, աղիքները,*

յարդը, յերիկամները, միզափամփուշտը: Սննդի անհրաժեշտությունը մարմնի աճման և աշխատանքի համար (ընդհանուր հասկացողություն): Սննդի տեսակները: Մարսողությունը մարդու մեջ: Կերակրի մանրացումը բերանում: Նրա փոփոխությունը ստամոքսում: Կերակրի ներծծումն աղիքներում: Վարակիչ հիվանդություններ, վորոնք տարածվում են սննդի մեջ ընկած մանրեների միջոցով (տիֆ, խոլերա, սկարլատինա և այլն): Հասկացողություն մանրեների մասին (հասարակ աչքին անտեսանելի, միայն միկրոսկոպով դիտելի): Վարակ տարածող ճանճերը և պայքար նրանց դեմ: Կերակուրը մաքուր պահելու անհրաժեշտությունը: Արյան, սրտի և արյունատար անոթների նշանակությունը: Սննդանյութերի և թթվածնի բաշխումը մարմնի մեջ, արյան միջոցով: Մալարիայով հիվանդանալը՝ արյան մեջ մալարիայի միկրոբներ ընկնելու հետևանքով: Մոծակը՝ մալարիա տարածող:

Մոծակի զարգացման պայմանները (լճեր, ճահիճներ): Մալարիայի վայրերը Հայաստանում: Մալարիայի դեմ պայքարի ուղիները, պայքար մալարիայի դեմ Հայաստանում (ճահիճների չորացնելը, ջրանցքների, առուների կանոնավորելը և այլն): Մալարիայի կայանները Հայաստանում և նրանց դերը: Ծանոթություն տեղական շրջանի մալարիայի կայաններին (եքսկուրսիա դեպի մալարիայի մոտակա կայանը):

Շնչառություն.—*Հասկացողություն թոքերի կազմության մասին: Թթվածնի նշանակությունը մարդու և կենդանիների համար: Ածխաթթու գազի դուրս գալը արտաշնչման ժամանակ (փորձ՝ արտաշնչելով կրաջրի մեջ): Թոքախտը և նրա տարածման ուղիները. ծխելու վնասը: Հասկացողություն թունավոր գազերի և նրանցից պաշտպանվելու մասին (հակագազ): Ինչպես է ազդում թունավոր նյութը մարդու և կենդանու օրգանիզմի վրա:*

Ուղեղի և նյարդերի նշանակությունը.—*Զգայարանների դերը և կապն ուղեղի հետ: Ի՞նչպես պահպանել տեսողությունը և լսողությունը: Ի՞նչպես պահպանել առողջությունը: Մարմնի ամրապնդումը. ֆիզկուլտուրա, կանոնավոր սնունդ, կազմակերպված աշխատանք և հանգիստ: Ալկոհոլի վնասակարությունը և*

պայքար նրա դեմ: Ինչպես պաշտպանվել հիվանդությունից: Պատվաստումներ վարակիչ հիվանդությունների դեմ:

Մարդու և մյուս կենդանիների կառուցվածքի մեջ յեղած նմանությունն ու տարբերությունը: Կրոնական անհեթեթությունները մարդու ծագման մասին: Մարդու կազմվածքի առանձնահատկությունները. իրանի ուղղահայաց դիրքը, մանգալուց ազատ առջևի վերջավորությունները և նրանց աշխատելու հնարավորությունները, ավելի զարգացած ուղեղ. հիմնական տարբերությունը՝ աշխատանք և արտադրության գործիքներ պատրաստելու հմտություն:

Այս թեման դասագրքում (1933 թվի հրատարակության) ավելի սխեմատիկ կերպով է մշակված, քան ծրագրում: Այդ իսկ տեսակետից պետք է առաջնորդվել սարքել դասագրքում տված սխեմով (նյութերի հաջորդականությամբ): Սակայն նկատի ունենալով դասագրքում տված վորոշ նյութերի դժվարությունը՝ յերեխաների ըմբռնողության տեսակետից՝ պարտադիր չի համարվում վերև հիշված նյութերի մշակումն ու անցումը.

(տես բնագիտության դասագիրք 1933 թ.)

1. Վոսկրի կազմությունը՝ եջ 125—126.
2. Վողնաշարի յուրաքանչյուր մասի վողերի քանակը՝ եջ 129—130.
3. Սննդառության սխեմի վո՞ր մասերում են մարսվում սպիտակուցները, յուղերը և ածխաջրերը՝ եջ 146—147.
4. «Ցուրացում» հասկացողության բնորոշումը՝ եջ 147.
5. Վիտամինների մասին յեղած հատվածը՝ եջ 148—149.
6. Սրտի կազմության մանրամասնությունները և արյունատար խողովակների անունները (զարկերակ, յերակ, աորտա, մազանոթներ), եջ 160, նաև արյան շրջանառության սխեմայի մանրամասն նկարագրությունը (արյան շարժումը սրտում՝ նախասրտերից դեպի սրտափորերը, փականների դերը) եջ 161—162.
7. Մեզի կազմության հարցը՝ եջ 164.
8. Վողնուղեղից և գլխուղեղից տարածվող նյարդերի քանակը՝ եջ 168—170.
9. Գլխուղեղի կազմության մանրամասնությունները և նրա առանձին մասերի դերը՝ եջ 170—172.
10. Աչքի կազմության մանրամասնությունները (թաղանթների թվարկումը)՝ եջ 174—175:

Գյուղատնտեսական աշխատանք

Յերեխաների գյուղատնտեսական աշխատանքների և բնագիտության նյութի միջև սերտ կապ հաստատելու նպատակով՝ բնագիտության ծրագրի մեջ պետք է մտցնել հետևյալ նյութերը:

I ԴԱՍԱՐԱՆ

Աշնանը.—Ծանոթություն դպրոցական հողամասին: Ծաղկաբույսերի, ինչպես և սիսեռի, լոբու և այլ բանջարաբույսերի սերմերի հավաքում:

Գարնանը.—Բույսեր աճեցնելը կենդանի անկյան արկղներում, կավամաններում (սոխ, լոբի, բամբակ, ծաղկաբույսեր և այլն:

Բույսեր աճեցնելը հողում (սոխ, բողկ, սիսեռ, ծաղկաբույսեր և այլն). փորված հողաշերտը մարգերի կամ թմբերի վերածելը, սերմերը լարով ցանելը, սածիլ անելը, ծաղկաբույսեր տնկելը, ջրելը, հողը փխրացնելը, բուկլիցը, ցցափայտեր (колышки) տնկելը:

II ԴԱՍԱՐԱՆ

Աշնանը.—Կաղամբի վրայից վնասատուների հավաքելը. վնասատուներով վարակված տերևներին նայելը, հավաքելն ու այրելը: Բերքահավաք. գազարի, բողկի, սոխի հանելը:

Գարնանը.—Հողում բանջարաբույսեր (բողկ, սոխ, գազար, ճակնդեղ, սիսեռ, լոբի և այլն) աճեցնելը, մարգ անելը, ցանելը, ջրելը, բուկլիցը, նոսրացնելը, փխրացնելը, վնասատուների դեմ պայքարելը, կենդանի անկյունում վնասատուներ դիտելը:

III ԴԱՍԱՐԱՆ

Աշնանը.—Դպրոցական հողամասի բերքահավաքը: Սերմնապարկերի հավաքը: Թփապտուղների տնկելը (հատապտուղ, մորի): Դաշտային կուլտուրաների փորձադաշտի հիմնադրումը (աշնանացան):

Գարնանը.— Դասարանում սերմեր ծլեցնելը, հողի մեջ տնկելն ու հետագա խնամքը:

պայքար նրա դեմ: Ինչպես պաշտպանվել հիվանդությունից: Պատվաստումներ վարակիչ հիվանդությունների դեմ:

Մարդու և մյուս կենդանիների կառուցվածքի մեջ յեղած նմանությունն ու տարբերությունը: Կրոնական անհեթեթությունները մարդու ծագման մասին: Մարդու կազմվածքի առանձնահատկությունները. իրանի ուղղահայաց դիրքը, մանգալուց ազատ առջևի վերջավորությունները և նրանց աշխատելու հնարավորությունները, ավելի զարգացած ուղեղ. Հիմնական տարբերությունը՝ աշխատանք և արտադրության գործիքներ պատրաստելու հմտություն:

Այս թեման դասագրքում (1933 թվի հրատարակության) ավելի սխեմատիկ կերպով է մշակված, քան ծրագրում: Այդ իսկ տեսակետից պետք է առաջնորդվել սաւրել դասագրքում տված սխեմով (նյութերի հաջորդականությամբ): Սակայն նկատի ունենալով դասագրքում տված վորոշ նյութերի դժվարությունը՝ յերեխաների ըմբռնողության տեսակետից՝ պարտադիր չի համարվում ստորև հիշված նյութերի մշակումն ու անցումը.

(տես բնագիտության դասագիրք 1933 թ.)

1. Վոսկրի կազմությունը՝ եջ 125—126.
2. Վողնաշարի յուրաքանչյուր մասի վողերի քանակը՝ եջ 129—130.
3. Սննդառության սիստեմի վո՞ր մասերում են մարսվում սպիտակուցները, յուղերը և ածխաջրերը՝ եջ 146—147.
4. «Յուրացում» հասկացողության բնորոշումը՝ եջ 147.
5. Վիտամինների մասին յեղած հատվածը՝ եջ 148—149.
6. Սրտի կազմության մանրամասնությունները և արյունատար խողովակների անունները (զարկերակ, յերակ, աորտա, մազանոթներ), եջ 160, նաև արյան շրջանառության սխեմայի մանրամասն նկարագրությունը (արյան շարժումը սրտում՝ նախախորշից դեպի սրտախորշը, փականների դերը) եջ 161—162.
7. Մեզի կազմության հարցը՝ եջ 164.
8. Վողնուղեղից և գլխուղեղից տարածվող նյարդերի քանակը՝ եջ 168—170.
9. Գլխուղեղի կազմության մանրամասնությունները և նրա առանձին մասերի դերը՝ եջ 170—172.
10. Աչքի կազմության մանրամասնությունները (թաղանթների թվարկումը)՝ եջ 174—175:

Գյուղատնտեսական աշխատանք

Յերեխաների գյուղատնտեսական աշխատանքների և բնագիտության նյութի միջև սերտ կապ հաստատելու նպատակով՝ բնագիտության ծրագրի մեջ պետք է մտցնել հետևյալ նյութերը:

I ԴԱՍԱՐԱՆ

Աշնանը.—Ծանոթություն դպրոցական հողամասին: Ծաղկաբույսերի, ինչպես և սխտորի, լոբու և այլ բանջարաբույսերի սերմերի հավաքում:

Գարնանը.—Բույսեր աճեցնելը կենդանի անկյան արկղներում, կավամաններում (սոխ, լոբի, բամբակ, ծաղկաբույսեր և այլն):

Բույսեր աճեցնելը հողում (սոխ, բողկ, սխտոր, ծաղկաբույսեր և այլն). փորված հողաշերտը մարգերի կամ թմբերի վերածելը, սերմերը լարով ցանելը, սածիլ անելը, ծաղկաբույսեր տնկելը, ջրելը, հողը փխրացնելը, բուկլիցը, ցցափայտեր (колышки) տնկելը:

II ԴԱՍԱՐԱՆ

Աշնանը.—Կաղամբի վրայից վնասատուների հավաքելը. վնասատուներով վարակված տերևներին նայելը, հավաքելն ու այրելը: Բերքահավաք. գազարի, բողկի, սոխի հանելը:

Գարնանը.—Հողում բանջարաբույսեր (բողկ, սոխ, գազար, ճակնդեղ, սխտոր, լոբի և այլն) աճեցնելը, մարգ անելը, ցանելը, ջրելը, բուկլիցը, նոսրացնելը, փխրացնելը, վնասատուների դեմ պայքարելը, կենդանի անկյունում վնասատուներ դիտելը:

III ԴԱՍԱՐԱՆ

Աշնանը.—Դպրոցական հողամասի բերքահավաքը: Սերմնապարկերի հավաքը: Թփապտուղների տնկելը (հատապտուղ, մորի): Դաշտային կուլտուրաների փորձադաշտի հիմնադրումը (աշնանացան):

Գարնանը.— Դասարանում սերմեր ծլեցնելը, հողի մեջ տնկելն ու հետագա խնամքը:

Դասարանում (ձվի կճեպում, Թղթե բաժակներում, խոնավ ծղոտների մեջ) վարունգի սածիլ, չաղգամ, պամիդոր, աճեցնելը: Մարգերում կաղամբի սածիլ աճեցնելը, հողում սածիլ տնկելն ու խնամքը:

Մորի տնկելն ու Թփապտուղների այգին խնամելը (բուկլիցը, փխրեցնելը, ցցերին ամրացնելը—կապելը):

Գարնանացան՝ փորձադաշտում (հացաբույսեր, տեխնիկական կուլտուրաներ):

IV ԴԱՍԱՐԱՆ

Աշնանը.—*Բանջարանոցի և փորձադաշտի բերքահավաքը: Ճագարների խնամքը:*

Գարնանը.—*Ճագարների, հավերի, ճուտերի խնամքը. ինկուբատորի դիտում—էքսկուրսիա:*

Գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար յուրաքանչյուր դպրոց պետք է ունենա կենդանի անկյուն և, անպայման, գեԹ փոքրիկ հողամաս՝ դիտումներ և փորձնական-գործնական աշխատանքներ կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՍԽԵՄԱ

Թեմա / դասարան	Թուղթ ու գիրք	Կար և հյուսվածք	Տեխնիկական մոդելացում
1. 60 ժ.	1. Թղթից ի՞նչ են պատրաստում 20 ժ.	1. Կար և հյուսվածք 20 ժ.	1. Տեխնիկական խաղալիք 20 ժ.
2. 60. ժ.	2. Կարտոնի առաջին աշխատանքները 20 ժ.	1. Կար 20 ժ.	1. Տեխնիկական խաղալիք 20 ժ.
3. 80 ժ.	1. Գիրքը ինչպես է պատրաստվում 20 ժ.	1. Կար և հյուսվածք 16 ժ.	1. Տեխնիկական խաղալիք 44 ժ.
4. 60 ժ.		1. Կար և հյուսվածք 16 ժ.	1. Քամու շարժիչներ 10 ժ. 2. Ջրի շարժիչներ 24 ժ. 3 Ծանոթություն էլեկտրականության կիրառման 30 ժ.
200 ժ.	60 ժ.	72 ժ.	145 ժ.

I ԴԱՍԱՐԱՆ

1. Թղթից ի՞նչ են պատրաստում (20 *ժամ*)

ա) Գիտելիքների ծավալ.—*Թղթի գլխավոր հատկությունները և արտաքին նշանները. գույնը (ներկված-չներկված), ամրությունը (փափուկ-կոշտ), հաստությունը (հաստ-բարակ): Թղթի դիմացկունությունը (հեշտ ճմռվում է, պատռվում է, ջուր է ծծում, այրվում է):*

Թղթի մշակման հիմնական ձևերը—ծալելը, պատռելը, կտրելը, սոսնձելը, կարելը:

Թղթի աշխատանքի համար գործածվող պարզ գործիքները—մկրատ, դանակ, սոսնձի վրձին, քանոն:

բ) Ունակությունների շրջան.— Թուղթ ծալելը և ծալվածքով կտրելը, մկրատով, դանակով կտրելը, իրար վրա սոսնձելը: Թղթի վրա աշխատելու պարզագույն գործիքները՝ մկրատ, դանակ, սոսնձի վրձին, քանոն: Ըստ ձևի և ըստ կաղապարի թղթից զանազան իրերի մասեր պատրաստելը: Թուղթն իրար կցնելն ու թելով կարելը: Ծրար պատրաստելը:

գ) Աշխատանքի ձևերը. Աշխատանք.—Ծալելու պարզ աշխատանք, օրինակ՝ պարաշյուտ, նավակ և այլն: Թղթից տուփեր և զարդեր կտրտելը, սոսնձով իրար կպցնելը: Ծրար, տետրակ, ալբոմ և այլ իրեր պատրաստելը:

2. Կար և հյուսվածք (20 *ժամ*)

ա) Ունակությունների շրջան.—կարի ուղիղ գծով ձևերը. ասեղ թելելը, թելի ծայրը կապելը, «ասեղով առաջ և յետ» կարելը:

Թոկի, պարանի և կեղևաթելի աշխատանք. դանակով և մըկրատով կտրելը, ոլորելը, պարզ հանգույցներ կապելը: Հագուստը խոզանակով մաքրելը:

բ) Աշխատանքի ձևեր.—Մանր իրեր՝ կրկնակոշիկի պարկ, թաշկինակ կարելը, գոտի հյուսելը, կոճակ, կախարան, կեռիկներ կպցնելը, պատռած հագուստ վերանորոգելը: Կեղևից ու պարանից սանձ ու ցատկիչ (грыгалька) հյուսելը: Վրձին, փոշի մաքրելու խոզանակ պատրաստելը:

3. Տեխնիկական խաղալիք (20 *ժամ*)

(*Տեխնիկական մոդելացում*)

ա) Գիտելիքների ծավալ.—Մարդիկ ինչպես են մի վայրից մյուսը փոխադրվում գետնի, ջրի վրա և օդում. ուր և ինչ են տեղափոխում: Հաղորդակցության միջոցներ—տրամվայ, հեծանիվ, շոգենավ, շոգեշարժ, աերոպլան: Ամառային և ձմեռային կառքեր (սահնակ, սայլ):

բ) Ունակությունների շրջան.—Փայտ ռանդելն ու դանակով կտրելը: Ասեղնասղոցի և ձեռնասղոցի արկղում լայնությամբ ու թեք ուղղությամբ սղոցելը: Փայտի մեջ մուրճով մեխ խփելն ու աքցանով հանելը, փայտի ամենապարզ միացումները մեխով:

գ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (7 *ժամ*).— Փայտից, թերմշակ տախտակներից, չորսվիկներից, ուրիշ նյութերից (մետաղալար, բամբակ, պարան, կտորտանքներ), թափթփուկներից (տուփ, արկղ, բանկա) իրենց մանկապարտեզի, մանկահրապարակների համար փոխադրական խաղալիքներ, օրինակ՝ նավակ, շոգենավ, բեռնատար ավտո, օդանավ, ինչպես և օձ, հոլ, տզզան (жужжалка) ճանճ, ջրաղաց, թնդանոթ, գնդացիր պատրաստելը:

դ) Էքսկուրսիա (2 *ժամ*).—Դեպի յերկաթուղու կայարան կամ նավահանգիստ: Յերկաթուղու կայարանի գծերի, սեմաֆորի, ջրհան մեքենայի դիտում: Շոգեկառքի կամ շոգենավի արտաքին կառուցվածքի ծանոթություն:

ե) Խաղեր (ազատ *ժամանակ*).—Փոխադրական խաղալիքներ (շոգեկառք, վագոն, շոգենավ, բեռնատար ավտո, կառուսել և այլն) խմբակային խաղեր («գնացքի, տրամվայի»):

II ԴԱՍԱՐԱՆ

1. Կարտոնի առաջին աշխատանքները (20 *ժամ*)

ա) Գիտելիքների ծավալ.—Կարտոնի գործածությունը կենցաղի և արտադրության մեջ. տուփեր, պայուսակներ, գրքի կազմեր և այլն:

Կարտոնի մշակման յեղանակները—ձևելը, ծալելը, սոսնձելը, կարելը: Կարտոնի հատկությունը՝ սոսնձելիս մի կողմից կծկվելը, թրջվելիս՝ ուռչելը:

Կարտոնի մշակման գործիքները—դանակ, մկրատ (ձեռքի և լծակավոր), քանոն, անկյունարդ, կարկին, վրձին, հերուն, ասեղ, ծակահատ և նրանց գործածությունը:

բ) Ունակությունների շրջան.—Պարզագույն նշում կարտոնի վրա՝ անկյունարդի և քանոնի գործածությունը: Նուրբ կարտոնի ձևելը մկրատով և դանակով (ամրացած քանոնի ուղղությամբ): Փոքր կարտոնկտորիչ օդատգործելը, Թուղթ կպցնելը կարտոնին: Պարզագույն յեզրատում:

1247—7

կարտոնը միացնելը կալենկորով և յերիզով: Կարտոնը ծա-
կահատով և ստամեսկայով ծակելը:
գ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (9 ժամ).—Թուղթ կրպց-
նելով կարտոնից ամենապարզ իրեր պատրաստելը, օրինակ՝
ուսումնական պարագաներ (լոտո, աղյուսակներ, ժամացույց,
թվատախտակ և այլն) խաղեր, թղթակալներ, հուշատետրեր և
այլն:

2. Կար (20 ժամ)

ա) Գիտելիքների ծավալ.—Հագուստ պատրաստելու համար
անհրաժեշտ նյութեր և նրանց անունները—գործվածք, տրիկո-
տաժ, բամբակ, մորթի, թել, կոճակ, կեռիկներ և այլն:
Գործվածքի հատկությունները—ջերմության պահպանում,
ամրություն: Տարբեր գործվածքներ և բրդե ու մետաքսե թելեր:
Հագուստ պատրաստելու հիմնական պրոցեսներ.—ձևելը, կա-
րելը, դրվագումը:
բ) Ուսմունքների շրջան.—Գործվածքի լայնությունն ու
յերկարությունը վորոշելը: Թեք ձևելը, հիմնական կարով կրրկ-
նակի և թեք կարելը: Հագուստի պարզ վերանորոգում (կարկա-
տելը):
գ) Աշխատանքի ձևեր. աշխատանք.—Ջեռում ըստ ձևվածքի և
կարածի: Հագուստի պարզ վերանորոգում, կոճակ կարելը:
Պատրաստի իրերի վրա հանգուցային կարով և խաչաձև նշում-
ներ անելը: Ջեռքի թաշկինակ, դրոշակ, յերեսսրբիչ, կրկնակո-
չիկների պարկ, թիթեռ բռնելու ցանց (сачка) պատրաստելը:

3. Տեխնիկական խաղալիք (20 ժամ)

(Տեխնիկական մոդելացում)

ա) Գիտելիքների ծավալ.—Բարձրահան պարզ մեքենաները
և փոխադրական միջոցները—ջրհան, կռունկ, (վերամբարձ մեքե-
նա) վոլորան, ճախարակ, մխանիվ սայլակ, վագոնիկ, սայլ:
Նրանց հիմնական մասերը—առանցք, առանցքակալ, անիվ: Ա-
ռանցքները յուղելու անհրաժեշտությունը:
բ) Ուսմունքների շրջան.—Տովրիչով և խարտոցով
խարտելը: Մակերեսներն ապակե թղթով դրվագելը:
գ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (8 ժամ).—Ազատ կոնս-

տրուկտիվ աշխատանք (թերմշակ տեսակավոր նյութերից և
կոնստրուկտորի մասերից), դպրոցի և մանկապարտեզի համար
խաղալիք, մոդելներ, օրինակ՝ վոլորան, բարձրահան մեքենա,
լիֆտ, սայլակ, վագոնիկ, մխանիվ սայլակ և այլն պատրաս-
տելը:

Լաբորատոր աշխատանք (1 ժամ).—Արկղով ծանրություն-
ներ տեղափոխելը՝ հարթ տարածության վրա քաշելով, հրելով,
անիվների վրա դնելով:

III Դ ԱՍ Ա Ր Ա Ն

1. Գիրքն ի՞նչպես է պատրաստվում (20 ժամ)

ա) Գիտելիքների ծավալ.—Գիրքը, լրագիրը, պլակատը
նկարը և նրանց նշանակությունը կյանքում: Գրքի տպագրու-
թյունը տպարանում. տպագրական տառեր (շարելու տառեր),
շարվածքը՝ տպագրելու համար, տպագրական մեքենայի աշխա-
տանքը (հիմնական գծերով): Կլիշեներից նկարներ տպագրելը
(փայտե կլիշեյի օրինակով):

Գուտենբերգի և Իվան Ֆեոդորովի առաջին տպագրական մե-
քենաները:

Տպարանում տպված թերթերի բրոշյուրովկան: Ինչո՞ւ յե
գիրքը կազմվում: Ի՞նչպես և ինչի՞ց է գրքի կազմը պատ-
րաստվում (կարտոն, կտոր, կաշի, թել, մետաղալար): Գիրք
կազմելու աշխատանքի. կարգը:

Մեքենայի գլխավոր աշխատող մասերը:

Ունակությունների շրջան.—Փոքրիկ հայտարարություննե-
րի, խորագրերի, պատի թերթի բաժինների շարվածք՝ ինքնա-
գործ կարտոնի կամ պատրաստի կաուչուկի տառերից, և նրանց
տպագրելն ուսումնական տպագրական պարզ հաստոցի վրա
(պարզ սրբագրիչ հաստոցի ձևի: Պարզ կլիշեներ պատրաստելը՝
կարտոնից, լինոլեումից, փայտից և նրանցով տպագրելը):

Բրոշյուրը թելով և մետաղալարով կարելը: Բրոշյուրը կար-
տոնի կողերի մեջ կազմելը, շապիկը մամլակով կպցնելը և կտ-
րելը:

Գիրք (վոչ հաստ) կազմելու նախապատրաստությունը (գիր-

քը կազմելու համար պատրաստելը, հաստոցի վրա կարելը, սե-ղանին ամրացված մամլակի մեջ դնելով կտրելը և կազմելը:

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք.—Աշխատանք տպագրական պարզ հաստոցի վրա (հայտարարություններ, խորագրեր, պլակատներ տպագրելը): Սանձով բաց արած ներկով կամ սկիպիդարով լուծած յուղաներկերով թուղթ ներկելը: Աշակերտների և դպրոցական գրադարանի համար բրոշյուրներ և գրքեր կազմելը:

Լաբորատոր աշխատանք (2 ժամ).—Կարտոնից, խցանից, լինոլեումից (նայած թե ինչ կճարվի) տառեր և կլիշեներ պատրաստելը, տառեր շարելը և փորձնական տպագրություն:

Էքսկուրսիա (2 ժամ) տպարան՝ շարվածքը, տպագրելը, բրոշյուրովկան և կազմարարությունը դիտելու:

2. Կար և հյուսվածք

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (5 ժամ).—Կարի մեքենայի խնամքը, յուղելը և մաքուր պահելը: Մեքենան կարգավորելը: Պատրաստի ձևի հիման վրա մանր իրեր (տոպրակ, մայկա, ճամփորդական պայուսակ, պիոներական փողկապ, աշխատանքի սենյակի համար գոգնոց, սպորտի շորտիկներ ձևելը): Հյուսվածք՝ վոլեյբոլի ցանց, պայուսակ, ձկնորսական պարագաներ, գունավոր կտորներից գորգ և այլն:

Էքսկուրսիա դեպի կարի գործարան կամ արհեստանոց:

3. Տեխնիկական խաղալիքներ (44 ժամ)

Ունակությունների շրջան.—Փոխանցող մեխանիզմներ սարքավորելը: Փոխանցող մասեր իրարելը (փոկային, ատամնավոր և մեղեխաչարժարնային—կրիվոշիպնո-շատուննի): Քանոնի և անկյունադրի միջոցով նշելու, շրջակտրիչով (кругорез) շրջաններ կտրելու, մկրատով թիթեղ կտրելու, կլոր հերունով թիթեղ ծակոտելու ունակություն:

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (8 ժամ).—Մոնտաժ՝ տեսակավոր նյութերից կամ կոնստրուկտորի մասերից—փոկային փոխանցում, կարապիկ (լեբյոդկա), մեքենայական լծակավոր մուրճ, բարձրահան շարժական մեքենա, փոխանցիկ և այլն: Պարզ մեխանիզմների քանդելը և հավաքելը (դռան կողպեք, մխ-

տղալու մեքենա, պրիմուս կամ հեծանվի ողհան (նասոս) տրանսպորտային խաղալիք՝ շոգեքարշ, վագոն, տրակտոր, տանկ, զրահավոր գնացք և այլն:

IV ԴԱՍԱՐԱՆ

1. Կար և հյուսվածք (16 ժամ)

Ի՞նչպես են գործվածք պատրաստում (էքսկուրսիայի միջոցով ծանոթացնել տեքստիլ գործարանին, վորտեղ այդպիսի գործարան կա):

Շարունակել ձեռքով ու կարի մեքենայով կատարվող աշխատանքները: Հյուսվածք:

Աշխատանքի ձևեր. աշխատանք.— Ամենապարզ ձևը և կարը. տոպրակ, մայկա, էքսկուրսիոն պանամա (գլխարկ). Հագուստ կարկատելը, գուլպա գործելը և կարկատելը:

2. Քամու շարժիչներ (10 ժամ)

(Տեխնիկական մոդելացում)

ա) Գիտելիքների ծավալ.—Շարժիչ մեքենաների դերը: Նրանց գործածությունը տրանսպորտում, արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ: Շարժիչ մեքենաների նշանակությունը երկրի պաշտպանության գործում:

Քամու աշխատանք.—Փռան (թղթե ոճ), պլանյոր, առագաստանավ, քամու շարժիչ և այլն: Թևավոր կամ կառուսելանման պարզ քամու շարժիչների կառուցվածք և աշխատանք: Հողմացույց:

Ոդային միջավայրի օգտագործումը շարժման համար: Պրոպելլերն ու իր կառուցվածքը: Պրոպելլերի առաջ շարժվելու ընդունակությունը: Պտտվելիս նրա նմանությունը պտուտակի հետ: Պրոպելլերի գործածությունը տրանսպորտում (սավառնակ, օդանավ, աերոսահնակ, գլիսեր): Սավառնակի արտաքին կառուցվածքը և հիմնական մասերը:

Ունակությունների շրջան.—Մոդելների կառուցում տարբեր նյութերից:

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (3 ժամ).—Դպրոցի և

մանկապարտեզի համար ուսումնական իրեր, խաղալիքներ ու գործող մոդելներ. օրինակ՝ թևավոր կամ կառուսելանման, քամու շարժիչ, պրոպելլեր, հողմացույց, սավառնակ և թռչող այլ մոդելներ պատրաստելը։

3. Ջրային շարժիչներ (24 *ժամ*)

(*Տեխնիկական մոդելացում*)

ա) Գիտելիքների ծավալ.—*Թափվող ջրի աշխատանքը։ Ջրային շարժիչներ։ Ամբարտակի դերը, տարրական հասկացողություն նրա կառուցվածքի մասին։ Վերնամուղ և ստորամուղ անիվների կառուցվածքն ու աշխատանքը։ Տարրական հասկացողություն տուրբինի կառուցվածքի և աշխատանքի մասին։*

Ունակությունների շրջան.—*Քանոնի և անկյունարդի միջոցով նշելը, ուղղորդիչ հարմարանքով ռանդելը, ուղղորդիչում դրված իրը շաղափով ծակելը, հարթաբերանով թիթեղ կամ լար ծալելը։*

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (6 *ժամ*).—*Դպրոցի և մանկապարտեզի համար ուսումնական իրեր, խաղալիքներ, գործող մոդել (վերնամուղ և ստորամուղ անիվ, տուրբին) պատրաստելը։*

Եքսկուրսիա դեպի ջրաղաց կամ ջրային շարժիչներ։

4. Ծանոթություն ելեկտրականության կիրառման (30 *ժամ*)

ա) Գիտելիքների ծավալ.—*Գալվանական ելեմենտի միջոցով ելեկտրական հոսանք ստանալը։ Լեկլանշեյի ելեմենտը։ Նրա բաղկացուցիչ մասը։ Գրպանի լապտերի մարտկոցը, նրա նմանությունն ու տարբերությունը։ Ելեկտրական լամպ և ելեկտրական ջեռուցիչ (պլիտա)։ Ելեկտրական լամպի կառուցվածքը։ Ելեկտրական հոսանքի հաղորդիչները և վոչ հաղորդիչները։ Ելեկտրական զանգի անջատիչը և կոճակի կառուցվածքն ու դերը։ Տարրական հասկացողություն մագնիսի մասին, յերկաթն ու պողպատը դեպի իրեն ձգելու՝ մագնիսի հատկությունը։*

Ունակությունների շրջան.—*Գալվանական ելեմենտից ելեկտրական զանգ անցկացնելը։ Գրպանի լապտերին ելեկտրական լամպ անցկացնելը։ Դետեկտորական ռադիո-ընդունիչի պատրաստի մասերն իրարելն ու այն գործածելը։*

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (5 *ժամ*).—*Ելեկտրական զանգ անցկացնելը։ Լուսարերի, լուսարձակի մոդելներ պատրաստելը։*

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

(Նյութ)

Պոլիտեխնիկական աշխատանքի պատրաստության բնագավառում տարրական դպրոցի հիմնական խնդիրներից մեկը յերեխաների տեխնիկական հետաքրքրության հրահրումն է, խնդիրներ, վոր ամբողջովին չեն կարող լուծվել աշխատանքին հատկացված դպրոցական ժամերին։ Այս պատճառով առանձին նշանակություն է ստանում գլխավորապես յերեխաների ազատ ընտեղծագործական աշխատանքի վրա կառուցված արտադպրոցական աշխատանքի գործունեյությունը։ Այդ արտադպրոցական աշխատանքի բնույթն ըստ տարիների կարելի յե վորոշել ուսուցման տարբեր տարիների ծրագրից բղխող կարողությունների շրջանից։ Ծրագրերին կցված այս հավելվածն իրեն նպատակ չի դնում տալու յերեխաների արտադպրոցական գործունեյության ծրագիրը, այլ նշում է միայն յերեխաների պատրաստության աստիճանի և տարիքային հետաքրքրությունից բղխող այդ աշխատանքի մոտավոր բովանդակությունը։

I ԴԱՍԱՐԱՆ

Ուսուցման 1-ին տարում արտադպրոցական աշխատանքի միջոցով, վոր պետք է հանդիսանա դպրոցի ծրագրային աշխատանքի խորացումը, ազատ թեմաների շուրջը մի շարք աշխատանք կարելի յե կատարել, վորոնք գլխավորապես պետք է բղխեն այդ տարիքի յերեխայի խաղի պահանջներից։ Այստեղ յերեխաներին հնարավորություն կտրվի այս կամ այն աշխատանքի համար ազատ ընտրություն կատարել այն նյութերից (թուղթ, թելավոր նյութեր, փայտ, կավ), վորոնց մշակման հետ նրանք գործ են ունեցել դպրոցին կից աշխատանքի սենյակում։ Շատ

կարևոր է աշխատանքի այդ նյութերը — ռանդած տախտակ, չ։ ռվլիկ, կտրտած կարտոնի շերտ, թուղթ—պատրաստի վիճակում տալ։ Այս բանը հնարավորություն կտա ընդլայնել յերեխաների կատարած աշխատանքների շրջանը։

Այդ տարիքի յերեխաների համար ամենից մատչելի և հետաքրքիր աշխատանքները կլինեն խաղալիքներ, կենցաղի իրեր, զարդարանքներ պատրաստելը։

Աշխատանքի կոնկրետ թեմաներ կարելի յե մատնանշել— օդապարիկ, փռռան (թղթե օձ), պլանյոր, պլանկաներից՝ կահկարասիք, գունավոր թղթից՝ նաշխեր, կտրված թղթերից՝ խորագրեր և այլն։

Բոլոր այդ աշխատանքները պետք է կատարվեն թեմաների ազատ ընտրության կարգով և պետք է օգտագործվեն յերեխաների խաղերի ու զվարճությունների ընթացքում։ Աշակերտների պատրաստած իրերի օգտագործման այդ մոմենտի վրա ամենամեծ ուշադրություն պետք է դարձնել, վորովհետև այդ իրերի հետագա օգտագործման հնարավորությունն անհրաժեշտ հետաքրքրություն է ստեղծում դեպի աշխատանքը։

II ԴԱՍԱՐԱՆ

Դպրոցական ծրագրերում նյութերի մշակման գծով մենք ունենք կարողությունների ընդլայնում և նոր նյութերի օգտագործում։ Այդ հնարավորություն է տալիս ընդլայնել արտադպրոցական բնույթ ունեցող աշխատանքների թեմատիկան։ Պատրաստվելիք իրերի շրջանը հիմնականում մնում է նույնը, ինչ 1-ին տարվա համար, ավելացվում են միայն կարտոնի վորոշ աշխատանքներ և խորացվում են կառուցողական աշխատանքները։ Այսպես, օրինակ՝ տեսակավոր և թափթփված նյութերից հնարավոր է կառուցողական աշխատանքներ կատարել հետևյալ թեմաների շուրջը—ծանրության բարձրահան մեքենա, փոխադրության միջոցներ՝ սայլ, «յերկաթուղի» և այլն։

Բոլոր այդ չինածո իրերը զանազան կառուցողական կոմբինացիաների համար հնարավոր է օգտագործել յերեխաների խաղի պրոցեսում։

Արտադպրոցական գործունեյության ընթացքում (այդ տարիքի համար) կարող են տեղի ունենալ վորոշ ուտիլիտար աշխատանքներ, օրինակ՝ թաշկինակ, պիոներական վզկապ, գոգնոց և այլ բաներ պատրաստելու աշխատանք։

III ԴԱՍԱՐԱՆ

Այս տարիքի աշխատանքների շրջանը կարելի յե բավականաչափ լայնացնել։ Այստեղ աշխատանքի սենյակի պայմաններում հիմնական նյութերի մշակման խնդրում մենք յերեխաների մեջ մեծ փորձ ենք տեսնում—գործիքների շրջանի ընդլայնման հետ միասին՝ ռանդա, չերխերել և այլն։ Այս հնարավորություն է տալիս նյութերը լայն կերպով օգտագործել աշխատանքի համար և ավելի լայն կերպով բավարարել յերեխաների կառուցողական մտահղացումները։

Վորպես գործնական աշխատանքի օրինակներ՝ կարելի յե մատնանշել հետևյալ իրերը. սավառնակ, ավտոմոբիլ, բարդ ձևի պլանյոր, տրանսպորտյոր և այլն։ Իհարկե՝ այստեղ բարդ կոնստրուկցիաներ տալու խնդիր չի դրվում, այլ դրվում է նրանց տարրական սխեմատիկ արտահայտությունը՝ ռետինե մոտորի լայն օգտագործումով, վորպեսզի դրանք գործող մոդելներ և խաղալիքներ դառնան։ Այստեղ հնարավոր է յերեխաների հետ սկսել մի շարք աշխատանքներ՝ ռազմական տեխնիկայի բնագավառից և պատրաստել հետևյալ իրերը՝ աղեղ, նետ, թրնդանոթ, հակագազ և այլն։ Այդ տարվա համար ուտիլիտար իրեր կարող են լինել կազմարարական գործին վերաբերող իրերը (դասագրքեր, ընդհանուր տետրեր, գրադարանի գրքեր), բլոկնոտներ, ալբոմներ պատրաստելը, տուփեր, մայկաներ, ճամփորդական պայուսակ կարելը, գամակի, վալեյբոլի, բասկետբոլի ցանցեր գործելը և այլն։

IV ԴԱՍԱՐԱՆ

Այս տարիքի աշխատանքները բավականաչափ ընդլայնվում են շնորհիվ այն բանի, վոր նոր նյութեր՝ թիթեղ ու մետաղալար են մտցվում։ Փայտի մշակման կարողությունների շրջանն ավելի յե մեծանում։ Այստեղ արտադպրոցական աշխատանքների գծով ամենալայն արտահայտություն են գտնելու տեխնիկական

վորոնումները՝ տարբեր նյութերի կոմբինացիաների կիրառմամբ, պատրաստ իրերն ավելի ճշգրիտ մոնտաժի յենթարկելով։

Վորպես հրահանգչական աղբյուր, կարելի յե լայն կերպով օգտագործել մանկական տեխնիկական գրականությունը («ինքդ պատրաստիր», «ինքդ քեզ վարպետ» և այլն)։ Այս բանը բավականաչափ ընդլայնում է պատրաստվելիք իրերի շրջանը և հնարավորություն է տալիս գյուտարարության զարգացմանը։ Վորպես օրինակ կարող են ծառայել՝ տեխնիկական մոդելացումը, ջրի, քամու, ելեկտրական շարժիչները և նրանց օգտագործումը՝ խաղերի ընթացքում, հրապարակներում և մակետներում (Փաբրիկայի, կոլխոզի, սովխոզի, եներգետիկ ուստանովկայի մակետը, ամբարտակը և այլն) սիգնալիզացիան (հեռախոս, հեռագիր, ռադիոընդունիչը և այլն)։

Խաղալիք, սպորտիվ և եքսկուրսիոն սարքավորում—դահուկի փայտեր, սահնակներ, մարմնամարզական փայտյա իրեր, եքսկուրսիոն պայուսակներ, լագերի կահավորում և այլն։

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Տարրական և միջնակարգ դպրոցում կերպարվեստի հիմնական խնդիրն է՝ տալ աշակերտին տարրական գրաֆիկ գրագիտություն, իբրև ընդհանուր, գեղարվեստական, պոլիտեխնիկ կրթության միջոց, վորի համար աշակերտների մեջ անհրաժեշտ է զարգացնել դիտողականություն, տեսնելու կարողություն, տեսածն անալիզի յենթարկելու և պատկերելու հմտություն։ Կերպարվեստի դաստիարակությունը մանուկներին պետք է տա կերպարվեստի տարրական գրագիտություն։

Նկարչությունն ու ձեվն աշակերտին պետք է օգնեն, վոր գեղարվեստական պատկերի միջոցով իր մտքերն արտահայտի թե գրաֆիկորեն և թե գույների միջոցով, օգտագործելով ձեռք բերած ունակությունները։

Աշակերտների ավելի լրիվ գեղարվեստական դաստիարակությունն ու ընդհանուր կուլտուրական զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է կազմակերպել դպրոցի մասսայական կերպարվեստային աշխատանքը և ինքնագործ խմբակների գործունեյությունը։

Խմբակային աշխատանքը նպաստում է դպրոցում կերպարվեստի ակտիվ ստեղծելուն։ Այս ակտիվը դասարանական աշխատանքի առաջատարն է հանդիսանում, վորով նպաստում է դպրոցի բոլոր աշակերտների մեջ գիտակից վերաբերմունք դաստիարակելուն՝ դեպի կերպարվեստի աշխատանքները։ Դասարանի աշխատանքը պետք է լրացնի և խորացնի դասարանական աշխատանքը և, միաժամանակ, տարբեր տարիքային խմբերին մատչելի աշխատանքի նոր յեղանակներին ծանոթացնելու և նոր նյութեր գործադրելու միջոցով ընդարձակի նրանց ստեղծա-

գործական հնարավորությունները—իրենց ստացած կերպարանական ունակությունները դեկորատիվ արտադրական աշխատանքներում գործադրելու:

Կերպարվեստի խմբակում կարող է տեղի ունենալ նաև պլակատի, պատի լրագրի, դպրոցական յելույթների ձևավորումը, սակայն այն պայմանով, վոր նման աշխատանքներով աշակերտները չծանրաբեռնվեն:

Մասսայական աշխատանքի ձևով կարող են կազմակերպվել դպրոցական կոնֆերենցիաներ, վորտեղ վերլուծման և յենթարկվում ցուցահանդեսների—դպրոցի հասարակական յելույթների գեղարվեստական ձևավորումը, ինչպես և արվեստի ընթացիկ հարցերի լուսաբանումն է կատարվում (2-րդ կոնցենտր):

Տարրական դպրոցը մաքսիմալ չափով օգտագործելու յե յերեխաների կողմից իրականության սինթետիկ ըմբռնումն, ուստի և անհրաժեշտ է սիստեմատիկ աշխատանք կատարել՝ առարկաների ձևի ու գույնի վրա յերեխաների կատարած դիտողությունները ճշտելու, ինչպես և ներկերի, մատիտների և պլաստիկ նյութերի հետ վարվելու կարողության անհրաժեշտ ունակությունները ստեղծելու համար: Այս բոլոր ունակություններն անհրաժեշտ և ամուր հիմք են տալիս վոչ լրիվ միջնակարգ դպրոցի ամբողջ ծրագրային նյութը յուրացնելու և մշակելու համար:

Տարրական դպրոցի նկարչության աշխատանքի բովանդակությունը կազմում է.

ա) նկարչությունը, բ) շրիֆտի վրա աշխատելը, լոզունգն ու պլակատը, գ) ծավալային կոնստրուկտիվ աշխատանքները (ծեփ և մակետ, անպետք ու բնական նյութերի գործածությամբ): Գլխավոր տեղը բռնում է նկարչությունը:

Տարբեր դասարաններում գործադրվում են նկարչական աշխատանքի տարբեր տեսակները, ինչպես, որինակ՝ ազատ նկարչություն, թեմատիկ նկարչություն, նկարչություն պատկերացմամբ և հիշողությամբ, իլյուստրատիվ նկարչություն, առանձին առարկաների նկարչություն հիշողությամբ, նկարչություն բնականից:

Ազատ նկարչության թեմաները պետք է աստիճանաբար լրացնեն, խորացնեն և զարգացնեն աշակերտության մեջ մասսայական

հետաքրքրություն դեպի դպրոցական կոլեկտիվի կյանքը, վերացնելով նեղ անհատական մոտեցումը:

Շրիֆտի—լոզունգի և պլակատի աշխատանքը մտցված է 1-ին կոնցենտրի կերպարվեստի ծրագրի մեջ, իբրև անհրաժեշտ մինիմում յերեխաների կողմից ծրագրի ուսումնական և հասարակական աշխատանքում դիտողական ագիտացիայի և պրոպագանդի հիմնական միջոցներին տիրապետելու գործում և իբրև մի աշխատանք, վոր յերեխաներին գծագրելու տարրական ունակություններ է տալիս:

Ծավալային և կոնստրուկտիվ աշխատանքները (ծեփ, մակետներ) յերեխաներին տալիս են ռեալ տարածության ըմբռնման համար անհրաժեշտ վարժություններ և դրանով հեշտացնում են աստիճանական անցումը դեպի ձևի և տարածության գրաֆիկ վերարտադրությունը: Նրանք զարգացնում են նաև յերեխաների տարածական մտածողությունը, նպաստում են նրանց կոնստրուկտիվ գյուտարարության զարգացմանը, կերպարանական աշխատանքներն օրգանապես կապում են պոլիտեխնիկ աշխատանքի հետ:

Տարրական դպրոցի կերպարվեստի ծրագիրն այնպես է կառուցված, վոր ապահովվի յերեխաների՝ պատկերացմամբ՝ ազատ նկարչությունից դեպի հիշողությամբ և դիտողությամբ նկարչությունն անցնելը, հետո՝ բնականից նկարելուն, առարկաներն իրենց սովորական վողջ շրջապատի մեջ պատկերելուց դեպի առանձին առարկաները դիտելն ու նրանց ուսումնասիրությունը (2, 3, 4 դասարան):

Առարկայի տեսողական պատկերը ճշտելու նպատակով՝ առանձին առարկաները դատելուն և ուսումնասիրելուն (առանձին առարկաների նկարելը հիշողությամբ և հետո՝ բնականից) զուգընթաց, յերեխաների հետ պիտի կատարվի նաև այնպիսի աշխատանք, վոր նրանց հնարավորություն տա արտահայտելու առարկայի և յերևույթների մասին իրենց ունեցած գիտելիքներն ու պատկերացումներն ամբողջությամբ, նրանց ամբողջ շրջապատի հետ միասին, վորոնք միացած են բովանդակությամբ, (թեմատիկ և իլյուստրատիվ նկարչություն 3-րդ և 4-րդ դասարանում):

Ամբողջ աշխատանքը պետք է հետապնդի մի հիմնական նպատակ՝ աշակերտների տեսողական հիշողության, նրանց պատկերավոր մտածողության, տեսնելու, դիտելու, կարողության սիստեմատիկ զարգացումը, նրանց ինքնագործունեության ու ստեղծագործական ինիցիատիվան մաքսիմալ չափով օգտագործելու հիման վրա ճշտել իրենց տեսողական պատկերացումները:

Այս նպատակով՝ պետք է գործադրվեն զանազան մեթոդներ, համապատասխան տարբեր տարիքային խմբերի, այն է՝ հուշող հարցերի միջոցով պատկերների ճշտում (օրինակ՝ տարբեր շենքեր՝ բնակարան, գործարան, կրպակ և այլն, ինչո՞վ են միմյանցից տարբերվում)՝ դասարանում և էքսկուրսիայի ժամանակ զանազան առարկաներ ցույց տալու միջոցով յերեխաների ուշադրությունը բևեռելով այդ առարկաների նշանակության, ձևի, կառուցվածքի, գույնի, չափերի հարաբերության վրա: Այս դեպքում հսկայական նշանակություն են ստանում էքսկուրսիաները, վորոնք յերեխաներին հնարավորություն են տալիս տեսնելու շատ բազմազան և հետաքրքիր առարկաներ իրենց ամբողջության, իրենց վողջ շրջապատի մեջ, ինչպես և հնարավորություն են տալիս շատ արժեքավոր համեմատություններ անելու:

Բարձր դասարաններում (3-րդ և 4-րդ) աշակերտների տեսողական պատկերացումները հարստացնելու և ճշտելու համար, բացի դրանից, կարող է գործադրվել ռեպրոդուկցիաների, դիապոզիտիվների, լուսանկարների ցուցադրում: Ցուցադրության նյութը բնավ արտանկարման նյութ չպիտի դառնա:

Թույլատրելի չէ՝ արտաքին արդյունավետության նպատակով՝ աշակերտներին դրդել արտանկարելու պատկերներից, գրատախտակի վրա ուսուցչի նկարածից. անթույլատրելի յե նույնպես յերեխաների նկարների ուղումն ուսուցչի ձեռքով. ուսուցչի խնդիրն է՝ աշակերտներին գիտակցել տալ իրենց աշխատանքներում յեղած պակասներն ու սխալները, ինչպես անհատական զրույցի միջոցով առանձին յերեխաների հետ, այնպես էլ աշխատանքների կոլեկտիվ դիտումի և քննության միջոցով (աշխատանքները դիտելու և քննության առնելու ժամանակ խմբին

անհամաչափ բարձր պահանջներ առաջադրելուց միշտ էլ պետք է խուսափել):

Թե՛ նկարչության և թե՛ մյուս դասերին աշակերտների կատարած նկարները դասատուն պետք է սիստեմատիզացիայի յենթարկի. նրանք հնարավորություն են տալիս դատելու յերեխաների առաջադիմության մասին և կարող են օգտագործել հաշվետու ցուցահանդեսների համար:

Թեմատիկան կարելի յե վերցնել հանրակրթական առարկաների բովանդակությունից, հաշվի առնելով այն առանձնահատուկ պահանջները, վոր բղխում են նկարչության դասավանդման վողջ սիստեմից:

Աշխատանքի մատնանշած տեսակները պետք է միմյանց հաջորդեն, ինչպես ունակություններ ձեռք բերելու սիստեմատիկայի իմաստով, այնպես էլ յելնելով թեմայի և օգտագործվող նյութի պահանջներից: Պլակատի և լոզունգի աշխատանքը չի կարող կատարվել մի պարապմունքով: Շրիֆտի աշխատանքը, վոր տալիս է ունակությունների սիստեմ, պետք է պլանավորվի 2—3 հերթական պարապմունքների համար: :

Այնպիսի աշխատանք, ինչպես ազատ նկարն է, պետք է ընդգրկել մի պարապմունքի մեջ և վոչ մի դեպքում իրար հետևից հաջորդական պարապմունքներ չպետք է ունենալ:

Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել ուսումնական նյութը ժամանակի մեջ բաշխելու վրա: Դասատուն պետք է հաշվի առնի զրույցին և աշակերտների անմիջական աշխատանքին ըստ հարկի հատկացրած ժամանակի տևողությունը, ինչպես և կոլեկտիվ դիտումին հատկացրած ժամանակը: Օրինակ՝ ազատ թեմայով աշխատելու ժամանակ, վորտեղ նախնական զրույցը մեծ ժամանակ չի խլում, կարելի յե դասից հետո անցկացնել կոլեկտիվ դիտում:

ԾՐԱԳԻՐ

I ԴԱՍԱՐԱՆ

Աշխատանքի տեսակներն ըստ տարեկան ժամերի

1. *Ազատ նկարչություն* (8 *ժամ*)

2. Նկարչություն հիշողությամբ և պատկերացմամբ՝ ուսուցչի առաջադրած թեմաներով (20 ժամ)

3. Ծեփ. կավի, անպետք և բնական նյութերի աշխատանք (12 ժամ):

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղեկավարի հիմնական խնդիրն է՝ այնպես անել, վոր աշակերտը կարողանա ի հայտ բերել իր գիտելիքները, պատկերացումները և զարգացնել վորոշ ունակություններ՝ կիրառելու համար:

Առաջին դասարանում անհրաժեշտ է զարգացնել կերպարվեստի հետևյալ ունակությունները.

1. Սովորեցնել դասավորել նկարը, թերթի վրա հաշվի առնելով թղթի ձևը և մեծությունը:

2. Տիրապետել սև ու գունավոր մատիտներին:

3. Ըմբռնել գծերի տարբեր տեսակները և յերկրաչափական մի քանի ֆիգուրներ (շրջագիծ, քառակուսի, յեռանկյունի):

4. Ճանաչել գլխավոր գույները և իմանալ նրանց անունները (սպիտակ, սև, կանաչ, կապույտ, դեղին, կարմիր, նարնջագույն):

5. Ըստ հնարավորության յերեխաներին վարժեցնել գրատախտակի վրա կավճով նկարելուն:

6. Ծեփել պարզ, ծավալային մարմիններ, տալով նրանց հիմնական ձևերը (պտուղներ):

7. Յերեխաներին սովորեցնել ըստ հնարավորության առարկան ծեփել մի կտորից, կավը տրորել մատերի ծայրով:

8. Ներկել ըստ ուրվագծերի (կոնտուրներ):

1. ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Նկարչությունը ամենամատչելի միջոցն է ի հայտ բերելու յերեխաների մտապատկերները, ուստի նրանք շատ են սիրում նկարել:

Նկարչությունը զարգացնում է տեսողական հիշողությունն ու դիտողությունը և նրանց մեջ առաջ է բերում ձգտում դեպի ստեղծագործական աշխատանքները:

Նկարչությունն ամենամատչելի միջոցն է ի հայտ բերելու ըստ հնարավորության բազմատեսակ մատերիալներ (նյութեր):

ա) ազատ նկարչություն.

բ) նկարչություն համաձայն վորոշ թեմայի.

գ) իլյուստրատիվ նկարչություն՝ կուրսի հետ կապակցված:

Մոտեցումն այդ յերեք միջոցներին տարբեր է:

Ազատ նկարչության ժամանակ խորհուրդներով և հարցերով պետք է ղեկավարել աշխատանքը: Ըստ տված թեմայի՝ նկարելուց առաջ անհրաժեշտ է յերեխաների հետ զրույց ունենալ թեման կոնկրետացնելու համար, իսկ իլյուստրատիվ նկարչության ժամանակ պետք է.

ա) պատկերավոր կերպով պատմել և բացատրել իլյուստրացիայի համար առաջադրած սյուժեն:

բ) Կոնկրետ կերպով վորոշել այն մոմենտները, վոր կարելի լինի պատկերել գրաֆիկ միջոցներով:

գ) Վորոշել արտադրական մատերիալը (սև մատիտ, գունավոր մատիտ, ջրաներկ, գունավոր կավիճներ և ածուխ) և հետո սկսել աշխատանքը:

Առաջադրությունն ավարտելուց հետո պետք է անցկացվի աշխատանքների դիտում և նրանց քննություն: Քննությունը յերեխաների համար պարզելու յե, թե վո՛ր աշխատանքներումն է թեման հաջող տրված, դասավորված և ինչո՛ւ յերեխաներին հնարավորություն պետք է տրվի պարզ և տեսանելի կերպով համեմատել իրենց նկարած առանձին առարկաների գույնի, ձևի բնորոշումը տալու աստիճանը:

Դիտումի և քննության ժամանակ պետք է ուշադրծվին վոչ թե բոլոր նկարները, այլ նրանց ամենաբնորոշ մասը (առավել կամ պակաս հաջող):

2. ԾԵՓ

Ծեփ՝ կավից, պաղյե մաշեյից (թղթախմորից), ձյունից, ավազից: Բաց մակետ:

Ծեփը, վորպես առարկաների ձևն ու ծավալը ուսումնասիրելու լավագույն միջոց, առաջին աստիճանի դպրոցում պետք է

1247—8

դրակի կարևոր տեղերից մեկը: Ծեփը պիտի կատարվի յերեք մեթոդով:

ա) Ազատ ծեփ.—Ըստ յերեխաների ցանկության. թեմաների ընտրության ժամանակ վորոշ ազատություն տալով յերեխաներին՝ դասատուն պետք է հետևի և կարգավորի յերեխաների աշխատանքը և համապատասխան ուղղություն տվող հարցերով ու խորհուրդներով աստիճանաբար նրանց ընտելացնի ըմբռնելու առարկաների ձևերն ու համաչափությունները:

բ) «Ծեփ ըստ վորոշ թեմայի».—Այս աշխատանքն սկսելուց առաջ դասատուն թեմայի բովանդակությունն ու նրա կատարումը պարզաբանելու համար սկզբում պետք է համապատասխան զրույց ունենա:

գ) Ծեփ բնականից.—Առաջին և յերկրորդ խմբերի յերեխաներից շատ դժվար է պահանջել, վոր նրանք մոդելը կարողանան պատկերել ճշգրիտ կերպով, ուստի ցույց տալով նրանց մոդելը (առարկան), բացատրական զրույցից հետո անհրաժեշտ է այն հեռացնել: Յերեխաները կարտահայտեն իրենց տպավորությունը և այն ամենը, ինչ նրանք ձեռք են բերել այդ առարկայի մասին: Ծեփն ու կառուցումը կատարվում են.

դ) Անհատորեն.—Կավից առանձին իրեր (բույս, պտուղ, կենդանի, մարդ) ծեփելը և զանազան նյութերից կառուցումներ (տրանսպորտ, բնակարանի տեսակներ և այլն) պատրաստելը:

ե) Կոլեկտիվ կերպով.—Ընդհանուր թեմայով մակետներ պատրաստելը, ըստ վորում յուրաքանչյուր յերեխա պատրաստում է վորևէ առանձին առարկա, վոր մտնում է մակետի մեջ: Մակետի թեմաներ կարող են լինել՝ կոլխոզ, քաղաք, յերկաթուղային տրանսպորտ, թատրոն և այլն:

Կոլեկտիվ աշխատանքի կարգը—թեմայի քննություն և առաջադրությունների բաշխում աշակերտների մեջ: Առաջադրությունները բաշխելիս անհրաժեշտ է ճիշտ հաշվի առնել առաջադրությունների էլեմենտները, աշակերտների թիվը և նրանցից յուրաքանչյուրի ուժերը: Պատրաստված առարկաները ներկում են և հետո հավաքում, դասավորում, ամրացնում են ֆաներայի, կարտոնի կամ թղթի վրա: Այդ աշխատանքի համար անհրաժեշտ է էքսկուրսիաների ժամանակ և տանը հավաքել փա-

ների, փայտի, թղթի, թիթեղի կտորտանք, զանազան տուփեր, կոճեր, ճյուղեր, մամուռ, փայտյա ձողիկներ, ֆաներայի և կարտոնի ողակներ, ուղղանկյուն ձևեր, զանազան տուփեր:

II ԴԱՍԱՐԱՆ

Աշխատանքի տեսակները

1. Ազատ նկարչություն (6 ժամ)
2. Նկարչություն՝ հիշողությամբ (10 ժամ)
3. Ծեփ (6 ժամ)
4. Որնամենտային աշխատանք (5 ժամ)
5. Իլյուստրատիվ (պատմածի և կարդացածի—8 ժամ)
6. Առանձին առարկաներ նկարելը (5 ժամ):

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին դասարանում կերպարվեստական աշխատանքների նկատմամբ յուրացրած ունակություններին պետք է ավելացնել.

1. Կարողանալ ջոկել գծերը, համաձայն իրենց դրության (հորիզոնական, ուղղաձիգ, թեք և զուգահեռ):
2. Ունենալ հասկացողություն՝ յերկրաչափական հիմնական մարմինների մասին (գունդ, խորանարդ, կոն, գլան և այլն):
3. Իմանալ հարթությունը ջրաներկով, գույնով ծածկելը.
4. Կարողանալ գծել ձողիկով, պլակատների համար պարզեցրած շրիֆտով:
5. Մակետը ներկելիս կարողանալ տալ առարկաների և նրանց մասերի բնորոշ գույնը, տալով հավասար գունագեղությամբ մակերես:
6. Կարողանալ կազմել պարզ ռիթմիկ նախշ:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Նկարչություն, ծեփ և որնամենտային աշխատանք

Հիշողությամբ և պատկերացմամբ նկարելիս աշակերտներն օգտվում են գունավոր մատիտով և անիլինի բացած ներկերով ու ջրաներկով:

Հիշողությամբ աշխատելիս կերպարվեստի դասերին պետք

է օգտագործվեն թե հանրակրթական և թե հատուկ նպատակով կազմակերպված էքսկուրսիաները։ Այդ էքսկուրսիաների նպատակն է՝ ճշտել յերեխայի տեսողական պատկերացումները, զարգացնել նրա տեսողական հիշողությունը, կազմակերպել աշակերտի ըմբռնումը՝ բնորոշ հատկանիշները պարզելու նպատակով՝ միատեսակ առարկաները համեմատելու (օրինակ՝ ծառերի առանձին տեսակները, գետային տրանսպորտի տեսակները, քաղաքային շենքերի տիպերը և այլն) և տարբեր առարկաների համեմատության միջոցով (մարդ, շենք), ըստ վորում ամբողջի վրա դիտողություն կատարելուց հետո, պիտի անցնել այդ ամբողջի մեջ մտնող առանձին առարկաների դիտողությանը։ Տրված նյութի մշակումը էքսկուրսիոն նյութից վերցրած թեմատիկ նկարների ձևով դասարանում անց է կացվում հիշողությամբ։

Նկարչության համար (իլյուստրատիվ) թեմա վերցվում է կարդացած, յերեխաներին ծանոթ, գեղարվեստական յերկերից կամ դասատվի պատմածից։ Պատկերացմամբ իլյուստրատիվ նկարչության նպատակը պետք է լինի յերեխայի պատկերավոր մտածողությունը զարգացնելը։

Մակետի վրա աշխատելիս մանկավարժը պետք է հետևի առանձին պարզ պրոցեսներին, վոր անհրաժեշտ են մակետի վրա տարբեր նյութով աշխատելու համար, պետք է յերեխաներին դրդի աշխատանքից ձեռք բերած ունակություններն ստեղծագործորեն օգտագործելու համար։

Ծեփի ժամանակ անհրաժեշտ է յերեխաներին ցույց տալ մի ամբողջական կտորից ձևի վրա աշխատելու հնարավորությունը, պարզել նրանց համար տեսանելի կերպով, այդ յեղանակի առավելությունը (դիմացկունություն և ամբողջականություն)։

Որնամենտի աշխատանքը, վոր յերեխաների համար դառնում է հիմնական խնդիր, նախ զարգացնում է յերեխայի գեղարվեստական ստեղծագործական (դեկորատիվ) զգացումը (ըմբռնել ռիթմը, գույնը, կոմպոզիցիան) ապա՝ զարգացնում է ձեռքի վարժությունները, վոր անհրաժեշտ են՝ հետագա նկարչական ունակությունների համար։ «Նախշերը» նկարել ուղղակի ձեռքով՝ անիլինի ներկերով—առօրյա իրերի վրա (տետրի և գրքի շապիկ, շրջանակ և այլն)։

III ԴԱՍԱՐԱՆ

1. *Ազատ նկարչություն* (3 *ժամ*)
2. *Նկարչություն հիշողությամբ, դիտողությամբ և առանձին առարկաների* (18 *ժամ*)։
3. *Իլյուստրատիվ նկարչություն* (6 *ժամ*)
4. *Ծեփ*—(17*ժամ*)
5. *Մի քանի բառերից կազմված հասարակ լոզունգներ* (6 *ժամ*)։

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՑԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարողանալ տալ առարկաների մասերի չափերի բնորոշ հարաբերությունները. հիշողությամբ առանձին առարկաներ նկարելիս կարողանալ առարկան գիտակցորեն դասավորել թղթի վրա, նույնպես կարողանալ տալ նախնական թեթև ընդհանրացրած բնույթի ճեպանկար (набросок), *ապա մշակել առարկաների հիմնական կոնստրուկտիվ մասերը. կարողանալ կազմել գույները և օգտվել նրանցով (նկատի ունենալով խառնուրդի միջոցով ստացված նոր գույները, նաև նույն գույնի տարբեր յերանգները։*

Իլյուստրատիվ նկարչության ժամանակ կարողանալ ընտրել թեման ավելի լավ պարզաբանող մոմենտները։

Կարողանալ մի կտոր կավից ծավալային ձև ծեփել։

Կարողանալ լոզունգի համար թղթե ժապավեններով տառեր կազմել, նրանց մեջ թողնելով հավասար տարածություն։

Կարողանալ լոզունգի տառերը գրելու ժամանակ ձեռքով, առանց քանոնի, ուղիղ և հավասար գծեր տանել։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

(Նկարչություն, ծեփ, լոզունգներ գրելը)

Առանձին առարկաները հիշողությամբ նկարելիս անհրաժեշտ է ցույց տալ այն առարկաների խումբը, վորոնք պետք է նկարել։

Ցուցադրմանը պիտի ուղեկցի զրույցը, վորի նպատակը պետք է լինի՝ յերեխայի ուշադրությունը գրավել առարկայի կառուցվածքի, նրա մասերի չափերի հարաբերության վրա,

այսինքն յերեխային մոտեցնել առարկաների անալիտիկ ըմբռնմանը. ցույց տալու ժամանակ յերեխան պետք է հնարավորություն ունենա դիտել առարկան մի քանի անգամ՝ բոլոր կողմերից:

Առարկաները բնականից չպետք է նկարել, այլ գլխավորապես հիշողությամբ (լավ զննելուց հետո). առարկան ներկա մոմենտում հանդիսանում է դիտողության օբյեկտ և վոչ թե նատուրա, ուստի առարկաները դիտելուց հետո կարող են հեռացվել տեսադաշտից:

Կրկնության դեպքում աշակերտները հաշվի յեն առնում նախորդ նկարի վերլուծման ժամանակ հայտաբերված սխալները և ուղղումներ են անում, բայց նկարները վոչ մի դեպքում ղեկավարն ինքը չի ուղղում:

Յերբ ժամանակ կա, մի պարապմունքի ընթացքում աշակերտները կարող են նկարել վոչ թե մեկ, այլ մի քանի (յերկու կամ յերեք) առարկա, վորի ժամանակ պետք է պահպանվի աշխատանքի նկարագրված մեթոդը: Նկարելու համար առարկաներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը. առարկաները իրենց ձևով պետք է լինեն պարզ, անպայման ծավալային: Բացի այդ, առանձին առարկաներ նկարելիս, առարկայի ընտրությունը վորոշվում է պարզությամբ և չափ ֆունկցիոնալ արտահայտությամբ, ինչպես և սրանք միացնող բովանդակությամբ, այն հաշվով, վոր հետագայում առանձին առարկաների գծագրումը կարելի լինի օգտագործել վերամշակման համար (ամենապարզ պլակատներ—աղյուսակներ) օրինակ «տաք նախաճաշը դպրոցում» թեմայի համար կարելի յե նկարել բաժակ, ափսե, գդալ: «Ուսումնական պիտույքներ» թեմայի կապակցությամբ կարելի յե նկարել գիրք, թանաքաման, գունավոր մատիտների տուփ. բանջարաբուծության պլակատի համար՝ դդում, բադրիջան, բանջարեղենի պահածոյի բանկա, բանջարեղենի կողով.

«Հանուն սանիտարիայի» պլակատ աղյուսակի համար՝ ատամնափոշու տուփ, օճառ, բաժակ, ատամի խոզանակ. այս բոլոր մատնանշած առարկաները, իբրև ուսումն. պիտույքներ, նախօրոք պետք է հավաքել կամ գնել:

Առաջադրության մշակումից հետո պետք է անցկացնել աշխատանքների դիտում և կոլեկտիվ քննություն:

Դասատուն ջոկում է ավելի բնորոշ նկարներ (դրական թե բացասական)՝ քննության ժամանակ ցույց տալու համար:

Աշակերտները դասատուի ցույց տված բնորոշ աշխատանքների օրինակով պետք է վերլուծման յենթարկեն իրենց աշխատանքը. իլյուստրատիվ նկարչությունը պետք է նախորդի գեղարվեստական կարճ պատմվածքի ընթերցումն ու վերլուծումը:

Աշակերտների հետ միասին պետք է պարզաբանել այն հիմնական մոմենտները, վոր ամենալրիվ չափով ի հայտ են բերում պատմածի կամ կարդացածի բովանդակությունը:

Ծեփի աշխատանքները վերջացնելուց հետո ցանկալի յե անցկացնել նրանց դիտումը և քննությունը, նպատակ ունենալով հայտաբերել առարկաների բնորոշության հաղորդման աստիճանը և նրա կախումը մասերի համաչափություններից: Ծեփի թեման—վայրենի և ընտանի կենդանիներն ու մարդը:

Ծեփի աշխատանքին պետք է նախորդի հրահանգչական զրույցը, զննական կերպով ցույց տալով նյութի (կավի) և հասարակ գործիքների հետ վարվելու յեղանակները:

Ծեփի աշխատանքը կատարվում է ըստ պատկերացման և դիտողության (ցույց տալով առարկաները):

Լոզունգների մշակման ժամանակ անհրաժեշտ է աշակերտներին ցույց տալ ժապավենաձև և ձողաձև շրիֆտ (վորպես ավելի ցայտուն ու պարզ), զրույց ունենալ շրիֆտի բնույթի, նրա ազդեցության և դյուրընթեռնելիության մասին: Այս դեպքում օգտակար է համեմատելու համար ցույց տալ դժվար ընթեռնելի լոզունգներ:

Աշխատանքի համար դասատուն պետք է պատրաստի մի կարտոնի կտոր՝ ուղղանկյունաձև տառերի վանդակները գծելու և կարտոնի պլանկաներ՝ տառեր գծելու համար, հաշվի առնելով լոզունգի մեծությունը և թղթի չափը, գծելով նաև տողերը:

Աշխատանքի ձևը.

ա) Ժապավենաձև կտորներից վանդակների մեջ պետք է կպցնել տառերը:

բ) Տառերը վանդակների մեջ գրվում են ազատ, ձեռքով ջրաներկերով կամ անիլինի ներկերով։

գ) Տառերը գրվում են վանդակների մեջ, ազատ, ձեռքով (առանց պլանկայի կամ ուղղանկյան), որի նպատակն է աչքաչափի վարժությունը։

IV ԴԱՍԱՐԱՆ

Աշխատանքի տեսակները

1. Նկարչություն բնականից՝ մի խումբ առարկաներ (18 ժամ)
2. Նկարչություն էքսկուրսիոն թեմաների հիշողությամբ (10 ժամ)։
3. Շրիֆտի, լոզունգի, պատի լրագրի ձևավորում (6 ժամ)․
4. Պլակատ (6 ժամ)։

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իմանալ բոլոր հիմնական և բաղադրիչ գույները։
2. Իմանալ կարկին և անկյունաչափ գործածելը։
3. Իմանալ ջրաներկն ու սոսնձաներկը կանոնավոր օգտագործելը։
4. Կարողանալ խմբավորման մեջ առանձին առարկաների չափերի և առարկայի մեջ հիմնական մասերի համաչափությունը տալ։
5. Կարողանալ հաշվի առնել և տալ առարկաների մեջ յեղած տարածությունը (տարբեր պլանները)։
6. Կարողանալ մի խումբ առարկաներ թերթի վրա տեղավորելիս նախնական թեթև ճեպանկար տալ՝ հաշվի առնելով առարկաների հիմնական մեծությունները։
7. Կարողանալ մոտիկ առարկաներն ավելի խոշոր պատկերել, քան հեռավորները։
8. Կարողանալ լոզունգի բառերը դասավորել առանց տողադարձի, հաշվի առնելով բովանդակությունը։
9. Կարողանալ անհրաժեշտ նշումներ կատարել (տառերի չափերը տալիս է ուսուցիչը)։
10. Կարողանալ ձողաձև շրիֆտի տառեր կառուցել։
11. Կարողանալ բնականից և հիշողությամբ նկարած իր նկարները վերամշակել պլակատի մեջ գործածելու համար, այսինքն՝ մեծացնել աչքաչափով, վառ ներկել և տեքստի հետ միասին դասավորել թղթի վրա։
12. Կարողանալ պլակատի աշխատանքի մեջ գործածել տառեր գրելու զանազան յեղանակները (պլանկայով գծելը՝ հետադա ներկումով, ինչպես նաև՝ ծակելու միջոցով քառանկյունիներից կտրելը)։
13. Կարողանալ առարկաների լոկալ գույները տալ։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Նկարչություն, պլակատի և շրիֆտի աշխատանք

Աշխատանքի բոլոր տեսակները պետք է մեկը մյուսին հաջորդեն և հավասարաչափ դասավորվեն ամբողջ ուսումնական տարվա մեջ։

Բնականից նկարելը պետքե կատարվի գույներով, առարկաների խմբերում պետք է լինեն յերկու յերեք առարկայից ոչ ավելի։

Թղթի վրա առարկաների խմբի նախնական դասավորումը կարելի յե անել կամ մատիտով, կամ ուղղակի վրձինով՝ ներկելով, նայած առարկաների ձևի բարդության։

Բնականից նկարելուց առաջ դասատուն նախապատրաստական զրույց պետք է անցկացնի։ Զրույցի նպատակն է՝ առարկաների անալիզը, նրանց չափը, գունային և տարածական համաչափությունները (մեծ է, փոքր է, հեռու յե, մոտ է, լուսավոր է, մութն է)։ Անալիզը պիտի տանել կռահեցնող հարցերի ձևով, յերբ քննվում է բնականից նկարելու համար դրված առարկաների խումբը։

Անհրաժեշտ է, որ յերեխաները սիստեմատիկ կերպով քննության առնեն աշխատանքները, որպեսզի յերևան բերվեն հիմնական բացերն ու առաջադիմությունը։ Բնականից նկարելու համար առարկաներ ընտրելիս ղեկավարվել յերրորդ խմբի համար տված ցուցումներով (հիշողությամբ առանձին առարկաներ նկարելը)։

Էքսկուրսիայի թեմաներով՝ հիշողությամբ նկարելը բաժանվում է յերկու մասի. 1. էքսկուրսիա—դիտողություններ և

տանկը, 2. էքսկուրսիոն նյութի մշակում դասարանում՝ թեմատիկ կոմպոզիցիոն նկարների ձևով:

Էքսկուրսիայի ժամանակ յերեխաների դիտողությունները պիտի ընթանան հետևյալ ուղղությամբ. ա) շրջապատող միջավայրի բովանդակության ուսումնասիրություն. բ) տարածության մեջ մարդու կողմից գործողության ընթացքում ու շրջապատի համապատասխան առարկաների մեջ առաջացած փոփոխությունների դիտողություն: Այս նպատակով պիտի օգտագործել ոչ միայն տարբեր դիսցիպլինների գծով կատարած զանազան էքսկուրսիաները, այլև հատկապես կերպարվեստի գծով կազմակերպված—էքսկուրսիաները:

Էքսկուրսիաների համար թեմա կարող են ծառայել՝ քաղաքը, հրապարակը, պուրակը (սկվեր), հասարակական շենքերի խումբը, տրանսպորտը. գյուղում՝ բանջարանոցը, պիոներլագերը, գետը, կամուրջը և այլն:

Նյութը—մատիտներ և ներկեր:

Շրիֆտի վրա աշխատելիս յերեխաներին անհրաժեշտ է ծանոթանալ ձողաձև ու ժապավենաձև շրիֆտին, ցույց տալով ձողաձև շրիֆտի պատրաստի շաբլոնը (ամբողջ այբուբենը), կատարել նրա անալիզը: Անհրաժեշտ է ցույց տալ լոզունգ՝ տառերի ճիշտ դասավորումով և սխալ դասավորումով: Յերեխաներին պիտի ծանոթացնել ինչպես տառային վանդակների նշումների սխեմին, այնպես էլ սանտիմետրավոր քանոնի օգնությամբ տառեր գծելուն: Առանձին տառեր գծելու ժամանակ անհրաժեշտ է անալիզ կատարել, ցույց տալով տառերի հիմնական հարաբերությունները՝ լայնության ու բարձրության և ձողիկների հաստության հարաբերությունը՝ տառի հիմքին և այլն: Խմբակով շրիֆտը յուրացնելիս անհրաժեշտ է այբուբենը բաժանել առանձին խումբ տառերի, ըստ նրանց կառուցվածքի բարդության:

Պլակատի աշխատանքը պետք է սկսել համառոտ զրույցով՝ պլակատի նպատակի և խնդիրների և դրանից բղխող պլակատի առանձնահատկությունների մասին (խոշորությունը, պայծառությունը, տեքստի անհրաժեշտությունը, գույների սահմանափակումը, 2—3 բնորոշ առարկաների պատկերացումով):

Ցանկալի յե ցուցադրել յերեխաների պատրաստած առավել հաջող պլակատները: Աշխատանքը կարելի յե կատարել սոսնձաներկերով և ապլիկացիայի յեղանակով, ամեն տեսակի թղթի վրա (փաթաթելու պաստառի և լրագրի):

Լրագրի թուղթը պիտի նախորոք պատրաստել պլակատի համար գործադրելու նպատակով: Օրինակ՝ պետք է ներկած լինի սոսնձաներկով կամ կլեյստերով բացված անիլինի ներկով, որը թղթին լավ գույն և խտություն է տալիս, ինչպես և փակում է ֆոտոնկարներն ու իլյուստրացիաները, որոնք խանգարում են պլակատի կոմպոզիցիոն լուծմանը:

Պլակատային աշխատանքում անհրաժեշտ է լայն չափով գործադրել բնականից և հիշողությամբ նկարելը, յերեխաներին սովորեցնելով համապատասխան ձևով նրանց վերամշակելը:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԵԿԱՆ ԺԱՄԵՐԻ

I դասարան

Ազատ նկարչություն	Դասատուի առաջադրած թեմաներով նկարչ. հիշողությամբ և պատկերացումով	Ծեփ և կոնստրուկտ. աշխատանք	Ընդամենը	—	
8	20	12	40		

II դասարան

Ազատ նկարչություն	Նկարչ. հիշողությամբ և իլյուստրատ. նկարչութ.	Ծեփ	Նկարել առանձին առարկաների գնությամբ	Որնամենտ	Ընդամենը
6	18	6	5	5	40

III դասարան

Ազատ նկարչություն	Գծագրում՝ հիշողությամբ և առանձին առարկաների գնությամբ	Իլյուստրատիվ նկարչ.	Ծեփ	Լոզունգ	—
1ժ. (1 կիսամ) 2ժ. (2 ») 3	8 10 18	3 3 6	5 2 7	2 4 6	20 20 40

IV դասարան

Բնականից նկարել	Էքսկուրսիոն թեմաներ	Շրիֆտ	Պլակատ	Ընդամենը	
3 10 18	6 4 10	4 2 6	2 4 6	20 20 40	

Ծանոթություն.—Տարեկան ժամերի օգտագործման և տարբեր աշխատանքների դասավորման նկատմամբ։

1-ին դասարան. պահպանել աշխատանքների հետևյալ հաջորդականությունը.

1. ազատ նկարչություն (մեկ առաջադրություն).

2. ծեփի աշխատանք (մեկ առաջադրություն) ուսուցչի առաջադրած թեմաների համաձայն.

3. նկարչություն՝ հիշողությամբ, պատկերացմամբ.

4. կոնստրուկտիվ աշխատանք (յերկու առաջադրություն).

5. ազատ նկարչություն, որից հետո նույն հաջորդականությամբ շարունակել աշխատանքները։

2-րդ դասարան. ազատ նկարչություն (1). տարեսկզբին, կիսամյակի միջում (1) և վերջում, իբրև հաշվառման աշխատանք։

Աշխատանքների մյուս տեսակները հաջորդում են ըստ առաջին խմբի։

3-րդ դասարան. ազատ նկարչություն տարեսկզբին (1), կիսամյակի վերջում (1) և ուս. տարվա վերջում (1)։ Հիշողությամբ նկարելը հավասարապես հաջորդում է մյուս աշխատանքներին։

Կոմպոզիցիոն աշխատանքներին նախորդելու յեն առանձին առարկաներ հիշողությամբ նկարելը։ Շրիֆտի աշխատանքներին կարելի յե հատկացնել յերկու հաջորդական պարապմունք։

4-րդ դասարան.—Աշխատանքների ընդհանուր հաջորդականության զուգընթաց պետք է տարվեն շրիֆտի աշխատանքները. նատուրայից (բնականից) և ըստ էքսկուրսիոն թեմաների նկարելուն պետք է նախորդեն պլակատային աշխատանքները, վորոնք մեծ չափով նախապատրաստում են թե ունակությունների տիրապետման և թե նյութի անմիջականորեն օգտագործման։

Ծանոթություն.—Բոլոր դասարանների համար հաշված է 40-ական ժամ տարեկան. ավելի ժամեր ունենալու դեպքում պահել նույն հարաբերությունը, օրինակ՝ յեթե 80 ժամ է, կրկնապատկել, յեթե 60 ժամ է, վերցնել ½ անգամ ավելի ժամերը՝ ըստ աշխատանքի տեսակների։

Ծրագիրը մշակել են՝
Ա. Սարգսյան, Մ. Ցուրինյան, Վ. Գայֆեջյան.

Վերանայել են ու լրացրել՝
Ա. Ղարիբյան, Մ. Դուրգարյան։

ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Համկոմկուսի Կենտկոմի վորոշումները՝ դպրոցական աշխատանքների վերակառուցման մասին՝ պահանջում են վերակառուցել նաև յերաժշտության դասավանդումը դպրոցում:

Նկատի առնելով գեղարվեստական կրթության խոշոր նշանակությունը մատաղ սերնդի կոմդաստիարակության խնդրում՝ անհրաժեշտ է առանձին հոգատար մոտեցում ունենալ թե յերաժշտական նյութերի ընտրության և թե նյութի դասավանդման մեթոդներին: Դպրոցում յերաժշտությանն առաջադրվող խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է կիրառել աշխատանքի բազմազան ձևեր՝ յերգեցողություն, ունկնդրություն, շարժում (նվագակցությամբ), յերաժշտական զրույցներ, թեորետիկ և պատմական գիտելիքներ, նոտաներով յերգելու վարժություն, ցուցադրական համերգներ, մասսայական աշխատանք և այլն:

Այս ծրագրում ունկնդրությանը խոշոր տեղ է տրված: Գյուղական դպրոցներում, վորտեղ մասնագետ ուսուցիչներ չկան, պետք է աշխատել ունկնդրությունը կապել ռադիոհաղորդումների հետ, և նրա միջոցով ծանոթացնել յերաժշտական յերկերին:

Անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնել յերաժշտական գրագիտությանը, վորովհետև յերաժշտական գիտելիքները հնարավորություն են տալիս աշակերտներին ավելի լայն և մտածված օգտագործելու անցած նյութերը:

Յերաժշտական կուլտուրայի յուրացումը պետք է տեղի ունենա թե կատարողական կարողությունները բարձրացնելու և թե անցյալի ու ներկա յերաժշտական կուլտուրաների լավագույն նմուշներին ծանոթացնելու միջոցով:

Ծրագիրը, սկսած առաջինից մինչև չորրորդ դասարանը ներառյալ, նպատակ ունի աստիճանաբար և հետևողականորեն զարգացնել յերեխաների ունակություններն ու գիտելիքները: Նյութերը դասավորված են սիստեմատիկ կերպով, ներքոհիշյալ կարգով:

Առաջին և յերկրորդ դասարաններում յերաժշտական նյութեր են տրվում: Աշակերտներին հնարավորություն է տրվում գիտակցելու յերաժշտության կապը հասարակական կյանքի և կենցաղի հետ:

Յերկրորդ և յերրորդ դասարաններում տրվում են դարձյալ նյութեր, բայց ավելի բարդ բնույթի, օրինակ՝ անցյալի ժողովրդական յերգը, հեղափոխական յերգը, անցյալ և ներկա յերաժշտագետները և այլն: Հենց այստեղից էլ սկսվում է յերաժշտության գրագիտությունը, այսինքն՝ յերաժշտության ըմբռնումը վոչ միայն ըստ բովանդակության, այլև ըստ իր արտաքին ձևավորման—ձայնանիշ, այն գրի առնելու յեղանակ և այլն:

Ծրագրի մեջ նշված յերաժշտական ռեպերտուարը համարվում է օրինակելի և կարող է փոխարինվել նոր լույս տեսնող գեղարվեստական յերաժշտական այլ համարներով:

Հանրօգուտ աշխատանքները, վոր յերաժշտական դաստիարակության կարևոր մասն են հանդիսանում, սերտ միանում և յենթարկվում են դպրոցի ուսումնական և դաստիարակչական խնդիրներին:

Դաստիարակչական աշխատանքները տեղի յեն ունենում իդեոլոգիական հարազատ յերաժշտական նյութերի օգտագործման և անցյալի հարուստ ժառանգության՝ մեզ համար ընդունելի մասի յուրացման միջոցով:

1-ին և 2-րդ դասարանների յերաժշտական աշխատանքների հիմնական խնդիրներն են՝ աշակերտներին տալ մատչելի գեղարվեստական, դասակարգայնորեն հարազատ, էմոցիոնալ հագեցած յերաժշտական նյութեր:

Առաջին յերկու տարվա ընթացքում աշակերտները պետք է կարողանան յուրացնել և ակտիվ կերպով արտահայտել անցած նյութերը:

Աշխատանքների ընթացքում բնութագրելով յերաժշտության՝

աշակերտները պետք է գիտակցեն յերաժշտության կապը հասարակական կյանքի և շրջապատող յերևույթների հետ, կարողանան օգտագործել ձեռք բերած ունակությունները ու գիտելիքները հանրօգուտ աշխատանքների և կենցաղի մեջ։ 1-ին և 2-րդ դասարաններում անցնելիք նյութերի մեջ մտնում են մանկան կենցաղի վերաբերյալ զանազան յերգեր, խաղեր, պարերգներ, աշխատանքային, հոկտեմբերյան և այլ յերգեր։

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

Թեմատիկա

1. Քաղաքական տոներ և կամպանիաներ.
ա) Հոկտեմբերյան և նոյեմբերյան տոներ։
բ) Լենինյան օրեր։
գ) Մարտի 8-ը։
դ) Կարմիր բանակ։
ե) Հակակրոնական։
զ) Մայիսի մեկը։
2. Բնություն—աշուն, ձմեռ, գարուն, ամառ՝ կապված աշխատանքի և կենցաղի հետ։
3. Մանկական կազմակերպություններ—հոկտեմբերիկներ, պիոներներ, լաղեր։

Նյութեր յերգեցողության համար

Անցնել միաձայն մեղեդիայով և ռիթմով, նվագակցությամբ և առանց նվագի, 20—25 պարզ յերգ, այն կապելով շարժումների հետ։

ՕՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Բերքի տոն
2. Եքսկուրսիա
3. Տրակտոր
4. Հոկտեմբերիկներ

(1–4:) Յերաժշտ. Միք. Միրզոյանի (Նախադպրոցականի յերգերն ու խաղերը)։

5. Մենք ունենք դրոշ («Պիոներ յերգեր»)։

6. Պիոներ Մասին — յերաժշտ. Ստ. Դեմուրյանի.
7. Աշուն — Դ. Ղազարյանի
8. Գարուն.

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Յերգ

1. Մշակել ձայնը. յերգ՝ առանց ճչոցի. մշակել թեթև, ճկուն հնչյուններ, ուժեղ և մեղմ յերգեցողություն. 2. յերգի ֆրազների հաջորդականության ժամանակ կանոնավոր շնչառություն. 3. յերգ՝ առանց նվագի, մշակել մաքուր ինտոնացիա։ 4. յերգն սկսել և վերջացնել միասին և միաժամանակ. 5. աշխատանք տեքստի վերաբերյալ. ա. բառերի ճիշտ արտասանություն, բ. տեքստի պարզ և արտահայտիչ կատարում թե ամբողջ կոլեկտիվով և թե խմբակներով. 6. յերգ մեներգային մասով, որ կազմակերպում է յերեխաների ուշադրությունը, զարգացնում է նրանց ունակությունը, հասկացողություն տալով մեներգային յերգերի մասին. 7. անցած յերգերի կատարումն անհատօրեն և խմբակներով։

Շարժում

1. Ռիթմիկական և մետրիկական ունակություններ—քայլերթ, ծափ.
2. Յերգեր՝ խաղերով, բեմադրություններ, պարեր, (տես «Նախադպրոցականի յերգերն ու պարերը» կազմեց Միք. Միրզոյան)։

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Կրկնել առաջին տարվա թեմաները։

Նյութեր յերգեցողության համար

Համեմատաբար ավելի բարդ յերգեր՝ առաջին խմբում նշված թեմաների շուրջը։

1247—9

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Մեծ Հոկտեմբերը, յերաժշտ. Գալիկյանի:
2. Ձոն բանակ » Մ. Մազմանյանի
3. Զա՛րկ թմբուկ »
4. Ե՛յ, հե՛յ, պիոներ («Պիոներ յերգեր»):
5. Վորսորդը (մշակեց Միք. Միրզոյան):
6. Գարուն յեկավ } («Նախադպրոց. խաղեր և յերգեր»):
7. Սարյակները }
8. Գարնանը՝ յերաժշտ. Ան. Տ. Ղևոնդյանի:
9. Մեր կոլխոզի արտերը . . յեր. Տ. Տ. Ավետիսյանի
10. Հե՛յ ջան, Հոկտեմբեր՝ յեր. Կ. Զաքարյանի (Պիոն. ժող.):
11. Զորագես . . . . Դ. Ղազարյանի:

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Յերգ

1. Խորացնել առաջին տարվա ունակությունները ավելի բարդ յերգերի միջոցով. 2. մաքուր յերգեցողություն՝ յերկարաձիգ հնչյուններով. 3. կարողանալ արագացնել և դանդաղեցնել յերգի տեմպը, յուրացնել յերգի—ուժեղ և թույլ կատարումը, 5. տարբերել բարձր, ցածր, կարճ և յերկար ձայները. 5. Մշակել ձայնը, կատարել լեգատո և ստակկատո:

Շարժում

1. Խորացնել առաջին տարվա աշխատանքները.

2. Կազմակերպչական ունակություններ. 1. խորացնել նախորդ տարվա աշխատանքները. 2. խաղեր, ինսցենիրովկաներ, պարեր, բեմադրություններ (տես Միք. Միրզոյանի կազմած «Նախադպրոցականի յերգերն ու խաղերը»):

ՅԵՐՐՈՐԴ ՅԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հասկացողություն անցյալի և ներկայի յերաժշտական ստեղծագործությունների տարբեր տեսակների մասին, այն

կապելով առօրյա կյանքի յերևույթների հետ, վորպեսզի յերեխաները գիտակցորեն կատարեն իրենց մատչելի գեղարվեստական ստեղծագործությունները:

2. Յերեխաները պետք է յուրացնեն գեղարվեստական արժեք ունեցող յերաժշտական նյութերը, նրանց միջոցով զարգացնեն իրենց լսողական ու կատարողական ունակությունները և ըմբռնեն յերաժշտական գրագիտության տարրական հիմունքները (յերաժշտական գրագիտություն 3-րդ դասարանի յերկրորդ կիսամյակից):

3. Հասարակական աշխատանքների գծով նրանցից պետք է պատրաստել գիտակից ակտիվիստներ, վորպեսզի մասսայական աշխատանքներով իրենց յերգերի կատարումներով հանդես գան դպրոցական հավաքույթներում, ցերեկույթներում, եքսկուրսիայի ժամանակ և ամառը՝ լագերում:

Յ Ե Ր Ր Ո Ր Դ Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Թեմատիկա

1. Անցյալի ժողովրդական և հեղափոխական յերգերը. 2. արդի հեղափոխական յերգերը (Հարևան ազգությունների յերգերը):

Նյութեր յերգեցողության համար

Ըստ մեղեդիայի և ռիթմի ավելի բարդ միաձայն յերգեր՝ նվագակցությամբ և առանց նվագի: Ժամանակակից մասսայական յերգեր, մեր և հարևան ազգերի ժողովրդական յերգեր: Հայ և մյուս ազգերի հեղինակների գեղարվեստական ստեղծագործությունները (յերեխաներին մատչելի յերգեր):

Որինակներ յերգեցողության համար

1. Յեկավ գարուն . . . . . յեր. Ալ. Մանուկյանի
2. Մայիսի 1-ը (վրացերեն) . . . Գուրգեն Միրզոյանի
3. Իմ մատրոս տղա (Պիոներակ. յերգերի ժողովածու):
4. Շտուրմ մարշ . . . . . յեր. Կարո Զաքարյանի
5. Անվախ ընկեր
6. Դե չո՛ւտ, մեր շարքերը . . .(Պիոներ. յերգեր). մշ. Ռ. Մելիքյան:

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Յերգ

1. Կարողանալ բառերը կանոնավոր դասավորել ձգվող հընչյունների տակ. 2. յերգ՝ առանց նվագակցության. 3. կանոնավոր շնչառություն՝ յերաժշտական յերկար նախադասությունների ժամանակ. 4. Նոտային նշաններ, տևողություն, (ամբողջ կես, քառորդ), նոտային սիստեմ, սոլի բանալի, չափ՝ $2/4$, $3/4$ տակտի գիծ: Ձայնանիշեր առաջին oկտավայի դո-ից մինչև յերկրորդ oկտավայի դո-ն: Յերգերի կատարմանը տալ գեղարվեստական յերանգավորում:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կառավարել $2/4$ և $3/4$ չափով. խմբակներով յերգել մեներգային մասով յերգեր: Վոչ բարդ յերգերի ինքնուրույն կատարումն առանձին և խմբակներով: Ուսման տարվա ընթացքում առանձին խմբակներով հանդես գալ դպրոցական յելույթներում:

Շարժում

1. Խորացնել նախորդ տարվա աշխատանքները, յերգի մասերի ռիթմիկան մշակել քայլերթով, վազքով և ծափերով:

Կազմակերպչական ունակություններ. շարժական խաղեր՝ ինսցենիրովկաներ, բեմադրություններ և պարեր:

ՆՅՈՒԹԵՐ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ձայնական և գործիքային յերաժշտական յերկեր. նույնը հակադրվող մասերով: Նվագներ պարի ձևերով:

1. Ն. Տիգրանյան—Հայկական պարեր:
2. Ա. Սպենդիարյան—«Ալմաստ»-ից պարեր: և
3. Ռ. Մելիքյան—«Զրիկ», «Կաքավիկ»:
4. Կ. Զաքարյան—Ետյուդներ և պիեսներ:
5. Բարխուդարյան—«Ակվարել», «Արևելյան պարեր»:
6. Գլինկա—Կամարինսկայա:
7. Գրիգ—Անիտրայի պարը:

8. Զ. Գալիաշվիլի—Լեզգինկա «Դաիսի» օպերայից:
9. Բեթհովեն—Տաճկական մարշ:
10. Մոցարտ—Մենուետ (մի մինոր):

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

1. Վորոշել յերաժշտական յերկերի ընդհանուր բնույթը (ուրախ, տխուր, հանդիստ, աշխույժ, թեթև, ծանր և այլն): 2. արտահայտության միջոցները. ա) հասկացողություն ռեգիստրների մասին, բ) տարբերել ուժեղ և թույլ հնչյունները, լեգատո, ստակկատո, դանդաղ և արագ ընթացք, 3. կարողանալ տարբերել յերգը քայլերգից և պարերգից, 4. հիշել անցած յերաժշտական հեղինակությունները:

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Թեմատիկա

1. Պայքարի և սոցշինարարության յերգերը խորհրդային կոմպոզիտորների ստեղծագործությունների մեջ:

Վերոհիշյալ նյութերի ուսումնասիրությամբ վերլուծել յերաժշտական լեզվի պարզ ելեմենտներն ու նրա զանազան ձևերը: Ծանոթացնել յերաժշտական արտահայտության միջոցների և անցյալի յերաժշտական յերկերի լավագույն նմուշներին:

ՆՅՈՒԹԵՐ ՅԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Միաձայն յերգեր, պարզ յերկձայն յերգեր. յերգեր մեներգային մասով. յերաժշտական գրագիտության տարրական գիտելիքներ:

Որինակներ յերգեցողության համար

1. Անուշ-անուշ—Ա. Դեմուրյանի.
2. Փոքրիկ թմբկահարը—մշակութ. Դավիդենկոյի.
3. Գարնան գութան—մշակում Կոմիտասի.
4. Իտալական բանվ. յերգը (յերկձայն).
5. Վոջույն Բաղու—Միք. Միրզոյանի.
6. Հանքերում—Ա. Տ. Ղեվոնդյանի:

ՆՅՈՒԹԵՐ ՑԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ռոմ. Մելիքյան—Սյուիտ ջութակի համար.
2. Ա. Բարխուդարյան—Սյուիտ դաշնամուրի համար:
3. Կ. Զաքարյան—Էտյուդներ և պիեսներ 4, 5, 6:
4. Գուրգեն Միրզոյան—Թուրքական երգեր (6 հատ).
5. Կոմիտաս—Պարերգեր դաշնամուրի համար.
6. Սպենդիարյան—Երևանի էտյուդներ.
7. Բիզե—«Կարմեն» օպերայի ուվերտյուրա.
8. Շուբերտ—«Երաժշտական մոմենտ».
9. Մենդելսոն—«Երգեր առանց բառերի».
10. Գրիգ—Նորվեգական ժողովրդ. երգեր.
11. Մշվելիձե—Վրաց. աշխատ. երգեր.
12. Բախ—պրելյուդներ.
13. Հ. Ստեփանյան—Սյուիտ ջութակի համար («Պիոներական ցիկլից»):

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ա) Երգ

Կարողանալ՝ 1. ձայնակցել երգին (երկձայն), 2. ինքնուրույն սկսել երգը, երբ երգն ու նվագը ընդհատումներով հաջորդում են միմյանց, 3. ինքնուրույն կատարել երգը, 4. հասկացողություն սովորած երգերի մեջ պատահող տևողությունների մասին (ամբողջը, կեսը կետով, քառորդը կետով, ութերորդը):

Անցած պարզ երգերի օրինակներից ռիթմիկական թելադրություն 1/4 և 1/8 տևողություններով (երկու կամ չորս տակտի սահմանում, նշելով ձայնի բարձրությունները). 5. ծանոթացնել երկրորդ օկտավայի դո-ից մինչև սոլի ձայնանիշների հետ: Պաուզա, ամբողջ, կես, քառորդ և ութերորդ: Ծանոթություն երաժշտ. տեմպերի մասին (արագ, դանդաղ, չափավոր). 7. կառավարել պարզ չափերով:

բ) ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Ցուրացնել երաժշտական երկերի մասերը. 2. վորոշել ծանոթ երգերի, պարերգերի, քայլերգի բնույթը. 3. համառոտ տեղեկություններ անցած նյութերի հեղինակների մասին: 5. Կազմակերպել էքսկուրսիաներ և երեխաներին տանել համերգ, կազմակերպել ռադիո ունկնդրություն:

Շարժում

1. Խորացնել 3-րդ դասարանում ձեռք բերած ունակությունները, 2. խաղեր, ինսցենիրովկաներ, բեմադրություններ, պարեր:

Մանկավարժական – մանկաբանական գիտահետազոտական ինստիտուտի պատվերով ծրագիրը կազմել են ընկ. ընկ. Սպ. Մելիքյան, Կ. Զաքարյան և Մ. Միրզոյան: Երկրորդ հրատարակությունը վերամշակել է Մ. Միրզոյան:

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Ֆիզկուլտուրան հանդիսանում է խորհրդային պոլիտեխնիկ դպրոցի ուսուցման-դաստիարակչական աշխատանքների սիստեմի օրգանական մասը և նպատակ ունի օժանդակել ընդհանուր կրթության և արտադրական ուսուցման հետ միասին աշակերտությանը սոցիալիստական աշխատանքի ու ԽՍՀՄ պաշտպանության մեծ գործի համար պատրաստելու:

1. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՊՈԼԻՏԵԽՆԻԿ ԴՊՐՈՑՈՒՄ

Ֆիզկուլտ աշխատանքների հիմնական նպատակները խորհրդային պոլիտեխնիկ դպրոցում հետևյալն են.

ա) Ապահովել աճող օրգանիզմի նորմալ զարգացումն ու ձևավորումը, աշակերտության առողջության ամրապնդումն ու դիմացկուն դարձնելը:

բ) Դաստիարակել գործադրական-շարժողական հիմնական ունակություններ:

գ) Օժանդակել—աշակերտությանը դաստիարակելու՝ ակտիվություն, նախաձեռնություն, համարձակություն, հաստատակամություն, համառություն, ճարպկություն, դիմացկունություն, անվրդովություն, շարժումների համակցություն ու ռիթմի կայունություն, ֆիզիկական աշխատանքների ժամանակ կանոնավոր շնչառություն, սեփական ուժերի և այլ հատկությունների ճշտորոշ հաշվառում, վորոնք անմիջական նշանակություն ունեն աշխատանքային և ռազմական գործունեյության մեջ:

դ) Օժանդակել՝ կարգապահություն, ընկերական համախմբվածություն, իր գործողություններում կոլեկտիվիստ լինելու, հասարակական պարտքի և պարտականությունների գիտակցության ու վարքագծի այլ հատկություններ դաստիարակելու գործին:

ե) Դաստիարակել ֆիզկուլտ-կազմակերպչական և սանիտարական-առողջապահական ունակություններ:

զ) Հաղորդել ֆիզկուլտուրայի բնագավառում սովորողներին տեսական և գործնական տարրական գիտելիքներ:

II ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖԻԶԿՈՒԼՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վերը թված հիմնական խնդիրների համաձայն, ֆիզկուլտուրան խորհրդային պոլիտեխնիկ դպրոցում ընդգրկում է հետևյալ միջոցառումները:

Ուսումնական աշխատանքների գծով

ա) Ֆիզկուլտ վարժությունների հատուկ ծրագրային պարապմունքներ (ֆիզիկական պատրաստության դասեր).

բ) Ֆիզկուլտուրայի տեսական պարապմունքներ:

Ֆիզկուլտ-մասսայական աշխատանքների գծով

(Արտադպրոցական աշխատանքներ)

ա) Ֆիզկուլտուրայի տարրերի օգտագործումն ուսումնադաստիարակչական և արտադրական աշխատանքների առանձին մոմենտների մեջ (մարզանք մինչև պարապմունքները, լիցք, ֆիզկուլտ. րոպե):

բ) Աշակերտական ֆիզկուլտ խմբակների կազմակերպում:

գ) Ֆիզկուլտ-սպորտական տոների և կոլեկտիվ յելույթների կազմակերպում:

դ) Երեխաների ժամանցի, առողջ հանգստի կազմակերպում՝ թե դպրոցի ներսում և թե դպրոցից դուրս (դասամիջոց, էքսկուրսիա և այլն):

ե) Մասնակցություն դպրոցի և արտադրական աշխատանքի միջավայրի (վորտեղ ընթանում է աշակերտության մանկավարժական աշխատանքն ու հասարակական գործունեյությունը) առողջապահական դրության լավացման ուղղությամբ ձեռնարկում-միջոցառումներին:

Ուսումնական և ֆիզկուլտ-մասսայական աշխատանքների հաշվառման գծով

ա) Պարբերաբար ստուգումներ կատարել աշակերտության բազմակողմանի ֆիզկուլտ պատրաստության ուղղությամբ։

բ) Մշտական բժշկական ստուգում և ֆիզկուլտ աշխատանքների հսկողություն. յերեխաներին ինքնաստուգման հիմունքները սովորեցնելը։

III. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵՋ

Ֆիզկուլտ (մասնագիտական) հատուկ պարապմունքների հետ միաժամանակ պոլիտեխնիկ դպրոցում ունենալիք նրա ճիշտ դրվածքի կարևոր մոմենտ է համարվում դպրոցական և ուսումնա-արտադրական միջավայրի ու մանկավարժական պրոցեսի առողջապահիկ դարձնելը։ Սրան են վերաբերում հետևյալ միջոցառումները։

ա) Ոդափոխություն, համապատասխան լուսավորություն և ուսումնական (աշխատանքի) շենքերը (ֆիզկուլտ դահլիճ, լսարան, կաբինետ, արհեստանոց, ցեխ և այլն) մաքուր վիճակում պահպանելը, կահավորության ընտրությունն ու հարմարեցումը յերեխաների հասակին, ուժին և առողջապահական վիճակին։ Ապահովությունը մեքենայի մոտ. փոքր և մեծ դասամիջոցների անցկացման համար համապատասխան շենքերի և հրապարակների կազմակերպում-սարքավորում։

բ) Ուսումնական-աշխատանքային բեռնվածության ռացիոնալ չափավորում և ուսումնական աշխատանքների պայմանների, բնույթի, ձևերի ու տեսակների հաջորդումն իրար (թեորիա, պրակտիկա, դասարան, հրապարակ, դաշտ, անտառ, մտավոր աշխատանք, ֆիզիկական աշխատանք, ֆիզ. վարժություններ և այլն՝ որվա, 6-որյակի, ամսվա և ուս. տարվա ընթացքում)։

գ) Պոլիտեխնիկ աշխատանքի դասատուի և բժշկի հետ միասին, ուսումնական-աշխատանքային, արտադրական պրոցեսների հարմարեցումը՝ տարիքային հոգեֆիզիկական առանձնահատկություններին։

դ) Ֆիզկուլտ պարապմունքները մաքսիմալ չափերով դեպի մաքուր ոդ փոխադրելը։

ե) Դասամիջոցների անցկացումը մաքուր ոդում։

զ) Դասարանական և արտադրական աշխատանքների ընթացքում առողջապահական մարզանքների (ֆիզկուլտ րոպե) լայն կիրառումը, վորպես առողջապահիկ և պրոֆիլակտիկ (կանխող) գործոն։

է) Ոժանդակություն համադպրոցական ռեժիմի և աշակերտության կենցաղի առողջապահության գծով աշխատող կազմակերպություններին ու ձեռնարկումներին (տաք նախաճաշ և այլն)։

Վերը թված բոլոր ձեռնարկումների անցկացման գործում դպրոցական բժիշկը դասարանավարի կամ ֆիզկուլտ դասատուների հետ միասին պետք է նախաձեռնողներ և կազմակերպիչներ հանդիսանան, ամեն կերպ աշխատելով կենսագործել այդ ձեռնարկումները դպրոցի ղեկավարությունը, մանկավարժական կոլեկտիվը, ինչպես և մանկական ինքնագործունեությունը և հասարակայնությունը կազմակերպելու միջոցով։

Ֆիզկուլտուրայի դրվածքը պոլիտեխնիկ դպրոցում ծրագրա-մեթոդապես պետք է սերտ կապակցված լինի մյուս առարկաների հետ, հատկապես պոլիտեխնիկ աշխատանքի, բնագիտության, գեղարվեստական դաստիարակության և ռազմագիտության ծրագրերի հետ։

Կապը պոլիտեխնիկ աշխատանքի հետ *կենսագործվում է հետևյալ միջոցներով.*

ա) Աշխատանքի մեջ փոխադրելն այնպիսի հատկությունների, վորոնք մշակվում են ֆիզկուլտուրայի միջոցով (աչքաչափի ճշտություն, ռիթմի զգացում, արագություն, ճարպկություն, իր ուժերը չափելու կարողություն (կարո՞ղ է արդյոք հաղթահարել տվյալ աշխատանքը)և այլն.

բ) Աշխատանքի ռացիոնալացման ոժանդակություն՝ պոլիտեխնիկ աշխատանքի դասատուի և բժշկի հետ միասին եներգիախնայող ու նպատակահարմար բանվորական կեցվածքի և շարժումների մշակումն ու դաստիարակումը, բանվորական (աշխատանքի) տեղերի հարմարեցումն աշակերտի հասակին և ուժերին,

առողջապահական միջոցառումների անցկացումը արշավներում և ցեխերում (ֆիզկուլտ րոպեյի և դադարների սահմաններում)։

գ) Այս կամ այն աշխատանքի բացասական հետևանքների կանխումը ֆիզկուլտ միջոցառումներով և մեթոդներով։

Կապը բնագիտության հետ պետք է կենսագործվի հետևյալ թեմաները մշակելու ժամանակ.

Առողջապահության պահպանումը, առողջ և հիվանդ մարմինը, բնական գործոնների նշանակությունը, պայքար վարակիչ հիվանդությունների դեմ, և այն տեսական գիտելիքները, վոր աշակերտները բնագիտությունից են ստանում։

Կապը գեղարվեստական դաստիարակության հետ (երաժշտություն, դրամխմբակ, կերպարվեստ) կենսագործվում է երգվող և նվագվող նյութի միջոցով, վոր հանդես է գալիս քայլերգերում (մարշ), պարերում, երաժշտական ձևավորում ստացած ֆիզկուլտ շարժումների ու ելույթների միջոցով (ֆիզկուլտ պարապմունքներին և ելույթներին երգելիք և նվագվող անհրաժեշտ նյութերը կարելի յե նախօրոք սովորել երգ-երաժշտության դասերին և դրամխմբակի պարապմունքների ժամանակ)։

Ֆիզկուլտ լոզունգների, պլակատների և ցուցահանդեսների գեղարվեստական ձևավորումը կատարվում է կերպարվեստի դասերի ընթացքում։

Ֆիզկուլտուրայի կապը ռազմագիտության հետ՝ միջնակարգ դպրոցում պետք է արտահայտվի շարքային պատրաստության հիմնական էլեմենտների և ռազմագործնական այն ունակությունների տիրապետումով, վորոնք մարտիկ պատրաստելու գործի հիմք պետք է հանդիսանան. ուստի և անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հոգեֆիզիկական հատկությունների դաստիարակության վրա—վճռականություն, համառություն, հավասարակշռություն, զսպվածություն և հաստատակամություն, կողմնորոշում (օրիենտիրովկա) և այլն։

IV. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍԻՍՏԵՄՆ ՈՒ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դպրոցական ֆիզկուլտուրան ԽՍՀՄ-ում անցկացվող ֆիզկուլտուրայի միասնական սիստեմի կարևոր օղակներից մեկն է.

Նրա բովանդակությունը, ծավալն ու մեթոդները բխում են այն հիմնական պահանջներից, վորոնք առաջադրվում են «Պատրա՛ստ աշխատանքի և պաշտպանության» կոմպլեքսի կենսագործման առնչությամբ։ Վերջինիս մեջ են մտնում.

1. Ֆիզիկական վարժություններ, վորոնք բնորոշում են ֆիզիկական բազմակողմանի զարգացման աստիճանը։

2. Տեսական տեղեկություններ, վորոնք բնորոշում են ֆիզկուլտուրնիկի ֆիզկուլտուրային գիտելիքների ընդհանուր մակարդակը։

3. Մի շարք պահանջներ, վորոնք բնորոշում են վերաբերմունք դեպի աշխատանքը. հարվածայնություն և սանիտարական առողջապահական ունակություններ (սան. մինիմումի կենսագործում)։ Սրա համեմատ էլ ֆիզ. դաստիարակության դպրոցական վողջ սիստեմը, յուրաքանչյուր դասարանի ծրագրային ամբողջ նյութը հետևյալ ստորաբաժանումներն ունի։

1. Ֆիզիկական վարժություններ.

2. Ֆիզկուլտուրայի գծով պահանջվող հիմնական տեսական տեղեկություններ։

3. Ֆիզկուլտ-կազմակերպչական և սանիտարական առողջապահական ունակություններ։

Ծրագրի առանցքը համարվում են ֆիզիկական վարժությունները։

Տեսական տեղեկությունները ծրագրի մեջ են մտցված նրա համար, վոր սովորողները ֆիզկուլտուրայի հիմնական դրույթներն ըմբռնեն։ Ֆիզկուլտ-կազմակերպչական և սանիտարական-առողջապահական ունակությունները դաստիարակվում են ֆիզիկական վարժությունների գծով անցնելիք նյութի և ֆիզկուլտ-տեսական տեղեկությունների կապակցությամբ ու հիմունքներով։

Ֆիզիկական վարժությունների սիստեմավորման հիմքը կազմում են աճող սերնդի ֆիզիկական բազմակողմանի զարգացման խնդիրները և վարժությունների գործնական էությունն ու նշանակությունը, այսինքն՝ այն, ինչ բնորոշ է «Պատրա՛ստ աշխատանքի և պաշտպանության» կոմպլեքսի համար։ Այս իսկ պատճառով, ֆիզիկական վարժությունների ամբողջ լայնածավալ բաժինը բաժանվում է հետևյալ յերկու հիմնական խմբի։

1. Վարժություններ, որոնք նպաստում են ֆիզիկական բազմակողմանի զարգացմանը, և ընդհանուր նախապատրաստական բնույթ կրող ֆիզիկական վարժություններ:

2. Վարժություններ, որոնք դաստիարակում-մշակում են աշխատանքի և ռազմական պայմաններում գործադրվող ունակություններ, այսպես ասած՝ գործադրական վարժություններ:

Գործադրական վարժություններ ասելով հասկանում ենք այնպիսի ֆիզ. վարժություններ, որոնք կյանքում անմիջականորեն կիրառվող նշանակություն ունեն [քայլք, վազք, թռիչք, նետում, լողալ, մագլցել, անցնել (մյուս կողմը) բարձրանալ, տեղափոխել, ըմբշամարտ, հավասարակշռություն, լող, դահուկ և այլն]. նաև ֆիզ. վարժություններից այնպիսիները, որոնք ավելի հեշտ կերպով և ավելի յեն օժանդակում տիրապետելու այս կամ այն վարժության տեխնիկային: Այն բոլոր մյուս վարժությունները, որ նպատակ ունեն բազմակողմանի ֆիզիկական զարգացում, ինչպես և աշակերտության մարմնական զարգացման այս կամ այն արատն ուղղել և այլն, մտնում են ընդհանուր նախապատրաստական վարժությունների խմբի մեջ:

Ֆիզիկական վարժությունների ծրագրի մեջ գործադրական վարժություններն առաջատար դեր ունեն. այդ վարժությունների հետ սերտ կապակցված են ընտրված նաև ընդհանուր նախապատրաստական բնույթ կրող ֆիզիկական վարժությունները: Պետք է, սակայն, ասել, որ նման բաժանումը պայմանական իմաստ ունի, քանի որ չի կարելի խիստ սահմանագծում մտցնել, մի կողմից՝ ընդհանուր նախապատրաստական վարժությունների մեջ, որոնք շատ հաճախ գործադրական, կենսական անհրաժեշտ նշանակություն ունեն և, մյուս կողմից՝ ավելի մեծ չափով, գործադրական վարժությունների մեջ, որոնք օժանդակում են ֆիզիկական բազմակողմանի զարգացմանը: Նման սիստեմավորումն ընդունված է գլխավորապես նրա համար, որ այն բավականաչափ կողմնորոշում է մանկավարժին իր գործադրած այս կամ այն վարժության նշանակությունն ըմբռնելու խնդրում, բևեռելով միաժամանակ նրա ուշադրությունը կենսական անհրաժեշտություն ներկայացնող գործադրական ֆիզիկական վարժությունների վրա: Բացի այդ, այս սիստեմավորումն ունի նաև գործնական նշանակություն թե տարեկան, քառորդային, վեցօրյակային

(ծրագրի բաժինների տեսակարար կշիռը որոշելու համար) ուսուման պլան կազմելու համար և թե դասի ամենօրյա պլան կազմելու իմաստով) անպայմանորեն յերկու բաժինն էլ մտցնել դասի սխեմի մեջ: Այս յերկու բաժիններն էլ իրենց հերթին ունեն ավելի մանր յենթաբաժիններ:

Ընդհանուր նախապատրաստական վարժությունների բաժինը տարրական դպրոցի համար ունի հետևյալ խմբավորումները.

1. Վարժություններ, որոնք ամրապնդում են մկանային սիստեմի առանձին խմբեր (ամրապնդող և թուլացնող վարժություններ).

2. Վարժություններ, որոնք ամրապնդում են հոդերը և կապերը. այս վարժությունները կատարվում են ավելի մեծ շարժումներով (շարժումների ամպլիտուդա)—(ճկունացնող վարժություններ).

3. Վարժություններ, որոնք ամրապնդում են ներքին օրգանները—շնչառության, արյան շրջանառության (դիմացկունության վարժություններ).

4. Վարժություններ, որոնք դաստիարակում են ներվամկանային ապարատը, մկանային լարվածությունը դիֆերենցիայի յենթարկելու կարողությունը, այս կամ այն շարժման համար անհրաժեշտ մկանային խմբերի գործադրումը (շարժումների համակցություն պահպանող վարժություններ).

5. Վարժություններ, որոնք դաստիարակում են ռիթմի զգացումը (ռիթմիկական վարժություններ, պարեր).

6. Վարժություններ, որոնք նպաստում են ընդհանուր շարժողությանը, արագաշարժությանը (շարժական խաղեր).

Բարձր դասարաններում թված խմբավորումներից առաջին 5-ը կարող են գործադրվել ավելի բարդ համակցությամբ (այսպես կոչված՝ «ազատ շարժումներ») և կապված՝ ադխատացիոն, արտասանելու և յերաժշտական ձևավորում ունեցող ֆիզկուլտ-յելույթների հետ [կենդանի լրագրեր, հասարակ ձևերի (ֆիգուրաների) կառուցում, բուրգ և այլն]:

Այսպես կոչված՝ «ուղղող և կանխող» վարժությունները, կանոնավոր շնչելուն տիրապետելը (այսպես կոչված «շնչառու-

թյան վարժություններ») և հատուկ նախապատրաստական վարժությունները (ուղիղ կանգնել, ցնման դրություններ և այլն) մտնում են միևնույն բաժնի մեջ, գտնելով իրենց արտահայտությունը ֆիզիկական վարժությունների համապատասխան ընտրության և գործադրման մեթոդիկայի մեջ:

Ընդհանուր նախապատրաստական վարժությունների վերջին խումբը—խաղերը—հանդիսանում են այս կամ այն ֆաբուլան ունեցող մի շարք վարժությունների (շարժական խաղեր) համակցություններ, որ գործադրվում են խաղի մեջ մտնող շարժումների տարբեր առնչությամբ (խաղեր, վազքով, նետումով, դիմադրությամբ և այլն):

Գործադրվող վարժությունների բաժինը, ըստ նման հատկանիշների, բաժանված է հետևյալ խմբերի·

1. Տեղափոխության միջոցներ. ա) քայլք, բ) վազք, գ) դահուկ·

2. Խոչընդոտներ հաղթահարելու միջոցներ. ա) թռիչք, բ) մագլցում, գ) կողմից կողմ մագլցելը, դ) հավասարակշռության վարժություններ, ե) սողալ, զ) լող:

3. Ծանրություններ բարձրացնելու և տեղափոխելու միջոցներ—մեռյալ ծանրություն:

4. Պաշտպանության և հարձակման միջոցներ. ա) նետում, բ) ըմբշամարտ և դիմադրության տարրեր:

5. Շարքի տարրեր (շարք կազմելը, վերակազմելը, տեղափոխվելը):

Այս բաժնի վերջին խումբը—շարքի տարրերը պարունակում են մի շարք գործադրական վարժություններ (քայլք, մասամբ՝ վազք): Շարային պատրաստությունը մտցված է առանձին խմբի մեջ և չի միացրած քայլելու հետ այն պատճառով միայն, որ աճող սերնդի ֆիզիկական պատրաստության վրա սիստեմի մեջ առանձնահատուկ նշանակություն ունի և դպրոցական ֆիզկուլտ աշխատանքների պրակտիկայում գործադրվում է որպես ինքնուրույն վարժություն:

V. ՖԻԶԿՈՒԼՏ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Կազմակերպչական բնույթ կրող հարցեր

Ֆիզկուլտուրայի ծրագիրը յուրաքանչյուր առանձին դասարանի համար տալով միայն շատ սխեմատիկ և խիստ սահմանադծված նյութ՝ չի սպառում այն ամբողջ բովանդակությունը, որ կարելի յե մտցնել այդ շրջանակների մեջ՝ մանկավարժական ձեռնարկների և ֆիզկուլտուրայի դասատուի փորձի ու գիտելիքների հիման վրա, ինչպես և տեղական պայմանների (կլիմայական, ազգային, պարապմունքի տեղի կանոնավորության և այլն) համեմատ:

1. Ոգտվելով այս ծրագրից՝ դասատուն ամենից առաջ պետք է պահպանի այն մինիմումը, որ ցույց է տրված ֆիզիկական վարժությունների հիմնական նյութի մեջ, ինչպես և ֆիզկուլտուրայի տեսության սանիտարական–առողջապահական և կազմակերպչական այն ունակությունները ու գիտելիքները, որոնք բնորոշում են յուրաքանչյուր առանձին վերցրած դասարանի պատրաստությունը նորմատիվ ցուցանիշների տեսակետից:

2. Լրացուցիչ նյութ կարելի յե անցնել միայն հիմնական նյութի մշակման լրիվ ապահովության պայմանով, հաշվի առնելով, որ տարրական դպրոցում վեցօրյակում ամեն մի դասարանին տրվում է 1 ժամ:

Ուսումնական պարապմունքների ընթացքում ձեռք բերած ունակությունների ամրապնդումը և լրացուցիչ նյութի մշակումը պետք է, սկսած 3-րդ դասարանից, դցել մասսայական ֆիզկուլտ աշխատանքների հաշվին, որոնք ողակների ինքնագործունեության և հետաքրքրության հիման վրա, մանկավարժի, դասարանավարի, կամ ֆիզկուլտ դասատվի ընդհանուր ղեկավարությամբ, տարվում են արտաուսումնական ժամերին՝ դպրոցական պարապմունքների ծրագրի և մեթոդիկայի սերտ կապակցությամբ:

3. Ուսման պլանով հատկացված ժամերը ոչ մի դեպքում չի կարելի ոչ կրճատել և ոչ էլ ուրիշ պարապմունքով փոխարինել (օրինակ՝ տոներ անցկացնելու նախապատրաստումով և այլն):

1247—10

Ակադեմիական մի քանի ժամերի միացում թույլատրվում է միայն դահուկներով զբաղվելիս կամ սահանքի, ձյան հրապարակը, լողանալու կամ լողի դուրս գալու ժամանակ:

4. Նախապատրաստական, 1-ին և 2-րդ դասարաններում ֆիզկուլտ դասերը լրիվ ժամի փոխարեն վեցօրյակում անց են կացվում յերկու կես ժամյա պարապմունքներով (25—30 րոպե):

5. Ծրագրային նյութերը տրված են այն նախապայմանով, վոր նախորդ դասարանների ծրագրային նյութերն արդեն լրիվ մշակված են: Իսկ յերբ այլևայլ պատճառներով (աշխատանքի թույլ դրվածքը կամ անցյալի աշխատանքի այլ բովանդակությունը) հակառակն է տեղի ունեցել, դասարանավարը, կամ ֆիզկուլտ դասատուն պարտավոր են համառոտ ձևով անցնել նախորդ տարիների ծրագրային նյութերը: Յուրաքանչյուր դասարանի ներսում տարված սիստեմատիկ ու հետևողական աշխատանքը պահանջում է, վոր ֆիզկուլտ դասատուն բոլոր դեպքերում էլ օգտագործի վոչ միայն տվյալ դասարանի ծրագրային նյութը, այլև կրկնելու և ունակությունները ամրացնելու նպատակով օգտվի նախորդ դասարանների նյութերից:

6. Բժիշկն աշակերտներից վորևէ մեկին վորոշ դեպքերում ֆիզկուլտ պարապմունքներից ազատելով՝ ճիշտ կերպով պետք է ցույց տա թույլատրելի բեռնվածության աստիճանը և վարժությունների այն տեսակները, վորոնցով տվյալ աշակերտը կամ չպետք է զբաղվի, կամ սահմանափակումներով պետք է զբաղվի: Ֆիզկուլտ պարապմունքներից ամբողջովին ազատել թույլ է տրվում միայն բացառիկ դեպքերում, վոր, սակայն, տեսական պարապմունքների վրա չի տարածվում:

Այն յերեխաներին, վորոնք կարիք են զգում մասնագիտական ֆիզկուլտուրային ներազդեցության (ողնաշարի ծռվածության, սրտի գործունեության թեթև խախտումների և այլ պատճառներով), ցանկալի յե նշանակել առանձին ֆիզկուլտ խմբեր և, բժշկի հսկողությամբ ու խորհուրդներով, նրանց հետ հատուկ պարապմունքներ ունենալ, կամ հատուկ բուժ-պրոֆիլակտիկ հիմնարկներ ուղարկել:

Թույլ կազմվածք ունեցող յերեխաները, վորոնք ֆիզիկա-

կան այս կամ այն վարժությունների նկատմամբ հակացուցանիշներ ունեն, պետք է նշանակվեն առանձին խմբակներ, իսկ նրանց հետ կատարվող ֆիզկուլտ պարապմունքները պետք է ընթանան դասատուի և բժշկի հատուկ ուշադրությամբ ու հսկողությամբ:

Ծրագրային նյութի պլանավորումը

Ֆիզկուլտ աշխատանքները դպրոցում ճիշտ դասավորելու և կանոնավոր կենսագործելու նպատակով, դասատուն տարվա համար պետք է ունենա աշխատանքների որիենտիր պլան, քառորդի համար՝ դասային պլան, ինչպես և ընթացիկ ամսվա պլան:

Ֆիզկուլտ աշխատանքների պլանը պետք է համաձայնեցնել դպրոցի վողջ ուսումնա-արտադրական պրոցեսի հետ, պոլիտեխնիկական աշխատանքի պլանի հետ, բնագիտության հետ և այլն, ինչպես և բժշկական-մանկավարժական կաբինետի պլանի ու արտադպրոցական վողջ աշխատանքների հետ:

Տարեկան պլանն ունի յերկու բաժին.

1. Ֆիզ-պատրաստության դասերի պլանավորում, ըստ ուսման տարիների՝ սիստեմատիկ կերպով բաժանած ուսումնական չորս քառորդի վրա՝ հաշվի առնելով սեզոնականությունն ու յերեխաների տարիքային առանձնահատկությունները:

2. Ֆիզկուլտ-մասսայական և աշակերտական ինքնագործ աշխատանքների պլան, բաշխած ըստ քառորդների, ցույց տալով յուրաքանչյուրի կատարման ժամկետը. ա) խմբակի աշխատանքներ, բ) ֆիզկուլտուրայի և մարզանքի անցկացում՝ մինչև դասերն սկսելը. գ) մասնակցություն հասարակական-քաղաքական կամպանիաներին, դ) ֆիզկուլտ տոների կազմակերպում, ֆիզկուլտ միջոցառումների կազմակերպում՝ դասամիջոցների ժամանակ, դ) էքսկուրսիաների և առողջացման գծով հանգստի օրերի կազմակերպում, ե) օժանդակություն բժշկին՝ բուժ-հսկողության և սանիտարական առողջապահական ունակություններ տալու գործում:

Վերջապես ֆիզկուլտուրայի ծրագրային նյութը պլանավորման յենթարկելու գործում դասատուին օժանդակություն ցույց

տրվի, այդ նյութի բաշխումը նշվում է ըստ ուսման տարիների ու քառորդների՝ սկսած 1-ին և վերջացրած 4-րդ դասարանով (աղյուսակը տես վերջում): Բաշխումը տրված է օրինակի կերպով, և ծրագրի այս կամ այն մասում կարելի յե տեղաբաշխում կատարել, նայած աշակերտության պատրաստականության ու տեղական կլիմայական և այլ պայմաններին:

Ծրագրում ժամերը նշված են ըստ քառորդների—վեցօրյակում մի դաս՝ դասը 50 րոպե տևողությամբ, և ամեն մի քառորդում 10 դաս:

Յուրաքանչյուր թվանշան ցույց է տալիս ժամանակի այն մասը (որպես միավոր վերցնելով դասը), որ ամբողջ քառորդի ընթացքում հատկացվում է ֆիզկուլտ պարապմունքի տվյալ տեսակին: Յեթե, օրինակ՝ 2-րդ դասարանում յերրորդ քառորդում մագլցելուն հատկացվում է «1», ապա այս նշանակում է, որ 50 րոպե տևող մեկ դասի այդ ժամանակը պետք է հատկացնել մագլցելուն, ըստ որում դասատուն այդ 50 րոպեն ոչ թե պետք է տանի 10 դասի ընթացքում (այդպիսի մանրացման դեպքում յուրաքանչյուր դասի ընթացքում մագլցելուն պետք է հատկացվի 5 րոպե, որը հազիվ թե նպատակահարմար լինի), այլ կարող է, օրինակ, վարժության տվյալ տեսակը բաշխել յերեք դասի վրա, այսպիսով յուրաքանչյուր դասին զբաղվել 15-ական րոպե, կամ անցնել 5 դասի ընթացքում, յուրաքանչյուր դասին 9—10 րոպե հատկացնելով նրան:

Յերբեք չի կարելի տվյալ վարժության վերաբերող ամբողջ նյութը մշակել միայն մի դասի ընթացքում: Բացառություններ են կազմում դեպի գետը, լիճը, կամ դահուկային վարժություններ կատարելու նպատակով կազմակերպած եպիզոդիկ, յելույթները· սակայն այստեղ էլ ժամանակի մի մասը պետք է հատկացնել շարքի տարրերին, խաղերին և այլն:

Ժամանակի բաշխումը կատարված է այն հաշվով, որ քառորդի ընթացքում դասատուի և աշակերտների ուշադրությունը կենտրոնացվի ոչ ավելի, քան ծրագրի մեկ բաժնի վրա:

Հաճախ այդ «չեշտված տեսակի» վրա համեմատաբար ավելի շատ ժամանակ է գործադրվում, մի բան, որ հնարավո-

րություն է տալիս ավելի մանրամասն կերպով մշակել այդ տեսակի տեխնիկան և դրա հիման վրա մշակել անհրաժեշտ գործադրական նշանակություն ունեցող ունակություններ: Այս խնդրին են ստորադասվում հետագա քառորդների և տարիների ընթացքում թե տվյալ տեսակի յեղած ողջ ուսումնական աշխատանքը և թե հատկապես, տվյալ քառորդում ընդհանուր նախապատրաստական և այլ վարժությունների ու խաղերի ընտրությունը: Նրանք պետք է նախապատրաստեն ներվա-մկանային ապարատը և ներքին օրգանները տվյալ ունակության լավագույն յուրացման համար և այդ ունակությունը գործադրեն արագ փոփոխության յենթարկվող (խաղի) պայմաններում, սակայն միանգամայն գիտակցորեն (տեսություն):

Նորմատիվ ցուցանիշների հաշվառումը ֆիզիկական վարժությունների չեշտված տեսակների նկատմամբ պետք է կատարվի առաջին հերթին: Սակայն այդ հանգամանքը չի բացառում ստուգումների անցկացումը նորմատիվ ցուցանիշների և մնացած տեսակների նկատմամբ, որոնք ծրագրով հաստատված են յուրաքանչյուր դասարանի համար: Ծրագրի որոշ բաժիններ, որոնք չեշտված են տվյալ քառորդում, չեշտված են համարվում և ողջ ուսումնական տարվա ընթացքում, և նրա վրա պետք է կենտրոնացնել ուշադրությունը տվյալ դասարանի տարեկան նյութի անցման ողջ ընթացքում:

Այդ բաժինները պլանում նշված են ** նշանով:

Բոլոր չեշտված տեսակների նկատմամբ հետագա պարապմունքները պետք է անցկացվեն ունակությունների ավելի ու ավելի կատարելագործման և ամրապնդման նշանաբանով:

Որոշ բաժիններ չեշտվում են ամբողջ ուսումնական նյութի ընթացքում (ուսման չորս տարիների ընթացքում) յերկու, յերեք և ավելի անգամ: Այդ անց է կացվում այն դեպքերում, յերբ տվյալ բաժինը, ըստ ուսման տարիների, տարբեր որակային բովանդակություն (հանգուցային մոմենտներ) ունի: Ըմբշամարտի և դիմադրության տարբեր անցկացմանը հատուկ ժամեր չեն տրամադրվում, չնայած ծրագրում նյութը նշված է. նրանք անց են կացվում որպես շարժական խաղեր՝ իրար ձգելու և հրելու ձևով:

Ֆիզկուլտ վարժությունների ծրագրում նշած բոլոր տեսակների անցկացումը դասատուից և դպրոցի վարչությունից պահանջում է համապատասխան հարմարություններ և հրապարակի ու ֆիզկուլտ դահլիճի կանոնավորություն:

Ծրագրի առաջադրանքներով էլ դասատուն հիմնավորում է իր պահանջները՝ իր պարապմունքների կազմակերպման համար:

Ծրագրային նյութի վորոշ մասի չանցնելը կարող է արդարացվել միայն առանձնահատուկ հարգելի պատճառներով: Այդպիսի պատճառներ են համարվում առաջին հերթին կլիմայական և տեղագրական պայմանները: Մասնավորապես դահուկներով ֆիզկուլտ աշխատանք հնարավոր չի կատարել, ինարկե՝ ձյուն չլինելու պատճառով: Ծրագրային նյութի թերի կատարումը, կազմակերպման պակասության հետևանքով, թույլատրելի յե միայն շատ ծայրահեղ դեպքում: Շենքի բացակայությունը կամ դպրոցի շրջակայքում նման հարմարություն չգտնելը կարող է պատճառ դառնալ ծրագրի միայն այն մասի թերակատարման, վորի համար դահլիճ է պահանջվում: Կազմակերպման, գույքի պակասը, ինչպես կանոն, չի կարող համարվել հարգելի պատճառ: Համարյա միշտ էլ հնարավոր է պակասող գործիքը փոխարինել մի ուրիշով, որինակ, թոկը՝ ձողով և այլն:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖԻԶԿՈՒԼՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Ընդհանուր մեթոդիկայի հարցերը

Դպրոցում ֆիզկուլտուրա ավանդելը, համեմատած այլ առարկաների հետ, մի շարք առանձնահատկություններ ունի: Գլխավորապես այդ պետք է տալ ֆիզ–վարժությունների պարապմունքներ անցկացնելու նկատմամբ: Այս վերջինիս դասավանդման ընթացքում կիրառվում են հետևյալ հիմնական մեթոդները. մարզանքի, խաղի, սպորտային–մրցական, ռիթմոպլաստիկ մեթոդները: Մեթոդներից յուրաքանչյուրը պրակտիկ աշխատանքներում պետք է հանդես գա վոչ թե մեկուսացած, այլ մեկը մյուսին փոխարինելով, մեկը մյուսին լրացնելով: Գլխավորապես այս կամ այն մեթոդից ոգտվելը կախված է անցկացրած պարապմունքների ձևից և այն խնդիրներից, վորոնք դրվում են նրանց առաջ:

Տարրական դպրոցում ֆիզ–վարժությունների դասերն անց են կացվում գլխավորապես խաղի մեթոդներով (նմանողական շարժումներ, շարժական խաղեր, պարեր):

3–րդ և 4–րդ դասարաններում մասամբ գործադրվում են նաև մարզանքի և մրցական մեթոդները: Վերջինս կիրառվում է, մեծ մասամբ, վորպես էստաֆետներ:

Խաղերի բովանդակությունն ու ֆաբուլան նախամտածված պետք է լինեն մանկավարժական տեսակետով: Ցանկալի յե յերեխաների ըմբռնմանը մոտիկ նոր խաղերի հնարում. ընդ սմին անպայման պետք է խուսափել հին խաղերի ձևական, անվանական փոփոխությունից ու նոր խաղերի անվան տակ յերեխաներին հրամցնելուց (որինակ՝ միայն խաղերի անունները փոխել և վոչ թե նրանց ներքին բովանդակությունը):

Այս նույն մեթոդական ցուցումները պետք է հաշվի առնել նաև պարերի անցկացման ժամանակ, վորոնք պետք է կառուցված լինեն առանց դժվարին շարժումների, և ոգտագործվեն իդեոլոգիապես ընդունելի յերաժշտական նյութեր: Պարերը նույնպես, ինչպես և խաղերը, դասի մեջ կիրառվում են՝ հաշվի առնելով շարժումների տարրերը, վորոնք մտնում են խաղերի կամ պարերի մեջ:

Տարրական դպրոցներում թեորետիկ զրույցների հաղորդումն ավելի լավ է անցկացնել 5—10 րոպե տևող զրույցի միջոցով, ֆիզ–պարապմունքների սկզբից կամ վերջից: Կազմակերպել հատուկ թեորետիկ պարապմունքներ չի թույլատրվում: Հիմնականում ֆիզկուլտուրան, աշակերտության համար ամենից առաջ պետք է լինի գործնական առարկա և թեորետիկ ուսմունքով չծանրաբեռնի: Ֆիզկուլտ կազմակերպչական և սանիտարական առողջապահական ունակություններ ձեռք բերելու վորոշ հատուկ մեթոդներ ծրագրում չեն նշվում. այդպիսիք ձեռք են բերվում և ամրապնդվում են պրակտիկ ու թեորետիկ պարապմունքներ անցկացնելու ընթացքում:

Ֆիզիկական վարժությունների դասի կառուցման մեթոդիկան.—Ֆիզիկական վարժությունների դասերը կառուցվում են միասնական պլանով, վոր պետք է ապահովի ամբողջ որգանիզմի վերամշակման համահավասարությունը, հետզհետե որգանիզմի

աշխատանքի մեջ քաշելը և դասի վերջում թարմ վիճակի պահպանումը՝ առանց հոգնածության նշաններ յերևալու և ավելորդ գրգռված դրության: Առանձին դեպքերում, նայած տեղական պայմաններին ու նախորդ կամ հետագա պարապմունքների բնույթին, պլանում թույլատրվում է այս կամ այն փոփոխություն:

Դասի կեսին բավականաչափ ժամանակ է հատկացվում օրգանիզմի հիմնական և բազմակողմանի վերամշակման համար, որը բարձր մակարդակի վրա յե դնում բնախոսական կարևորագույն պրոցեսները (արյան շրջանառություն, շնչառություն), ինչպես և հիմնական ունակությունների յուրացման համար:

Յելնելով այս նախադրյալներից՝ դասի պլանը պետք է կառուցված լինի հետևյալ ընդհանուր սխեմայի համեմատ. 1-ին սերիա—ներդրավող վարժություններ՝ 5—7 ր., 2-րդ սերիա—նախապատրաստական բաժին՝ 10—15 րոպե. 3-րդ սերիա—հիմնական բաժին՝ 25—30 րոպե, 4-րդ սերիա—ամփոփող բաժին՝ 5 րոպե, ընդամենը 50 րոպե:

Նախապատրաստական, 1-ին և 2-րդ դասարաններում կեսժամյա դասեր մտցնելով դասի սխեման փոխվում է:

1. Ներդրավող վարժություններ և նախապատրաստական բաժին՝ 5—7 րոպե.
2. Հիմնական բաժին՝ 15—17 րոպե.
3. Ամփոփող (հանգստացնող) բաժին՝ 3 րոպե.

Ընդամենը 25—30 րոպե:

Որպես ներդրավող վարժություններ, գործադրվում են փոքրիկ տեղաշարժումներ՝ տեղում կանգնած և տեղից շարժվելով (շարային տարրեր), քայլք և հանգիստ վազք: Սրանց նպատակն է՝ պարապողների ուշադրությունը կենտրոնացնել, դասի ընթացքում կարգ հաստատել և կազմակերպված տեղափոխությունների ունակություններ պատվաստել:

Նախապատրաստական բաժնի մեջ մտնում են՝ ֆիզկուլտրոպեյի, առավոտյան մարզանքի, ֆիզկուլտ լիցքի ուսուցում. (վարժեցում) և առանձին տարրեր ու համակցված (բարդ) վարժություններ, որոնք գալիս լրացնում են դասի հիմնական մասը—դոմենանտը:

Դասի հիմնական մասը (3-րդ սերիա) գլխավորապես պարունակում է այնպիսի վարժություններ, որոնք դյուրացնում են գործադրական վարժությունների և շարժական խաղերի տեխնիկայի յուրացումը:

Ամփոփող (հանգստացնող) բաժնի մեջ մտնում են՝ հանգիստ քայլք, քայլք ոտքերի ծայրերի վրա, դաստակի և մատների փոքր շարժումներ և հանգիստ շնչառություն, նպատակ ունենալով օրգանիզմը հասցնել հանգիստ դրության: Հատուկ շնչառական վարժություններ այս պարապմունքների ընթացքում չեն կիրառվում: Սակայն անհրաժեշտ է ուշադրությամբ հսկել, որ բոլոր վարժություններն ընթանան խոր և ըստ հնարավորին հավասարաչափ շնչառությամբ:

II և III սերիաների վերաբերյալ վարժությունների ներքին բաշխումը կատարելիս պետք է հետևել, որ ճշտության և շարժումների համակցության (նետում, հավասարակշռություն) վարժություններն ուժային բնույթ կրող վարժություններից առաջ լինեն, իսկ ուժային բնույթ կրող վարժությունները՝ թոքերի և սրտի գործունեությունը խիստ գրգռող (վազք, թռիչք) վարժություններից առաջ: Վարժությունների տեխնիկական ուսումնասիրությունը հիմնականում համապատասխան ունակություններ ամրապնդելու և մարզելու նախորդողը պետք է լինի: Պետք է աշխատել, որ դասը հնարավոր չափով խտացված լինի. զգալի ընդմիջումներ, սպասումներ, հերթեր չլինեն: Մի վարժությունից մյուսին անցնելը պետք է օգտագործվի որպես հանգիստ: Այդ տեղի կունենա այն ժամանակ, յերբ լարված շարժումներն ավելի թեթև, չլարված շարժումներով փոխարինվեն և, ընդհանրապես, յերբ դադարը կազմակերպվում է բավականաչափ տարբեր բնույթ ունեցող վարժությունների միջև. Դասն ամբողջությամբ այնպես պետք է տարվի, որ գիտակցական կարգապահություն, միասնաբար, կոլեկտիվ, ուրախ շարժումներ կատարելու սովորություն դաստիարակի՝ զարգացնելով յերեխաների ակտիվությունը և ստեղծագործական ինքնագործունեությունը:

Յուրաքանչյուր դաս պարզ ու կոնկրետ նպատակ պետք է ունենա: Այդ նշանակում է, որ մանկավարժն իրեն որոշակի

խնդիր է առաջադրում, վորը գլխավորապես լուծվում է դասի հիմնական մասում (դոմինանտում): Նայած յերեխաների տարիքին, դոմինանտն ունի տարբեր խնդիրներ, օրինակ՝

1. Հոգեֆիզիկական հատկությունների զարգացման դեպքում դոմինանտն է՝ արագ պատասխան (ռեակցիա), կողմնորոշում տարածության մեջ, կոլեկտիվիստական ունակությունների զարգացում:

2. Ֆիզիկական—առանձին վարժությունների ուսումնասիրության դեպքում դոմինանտն է՝ ցատկելը, մագլցելը տեխնիկայի ուսումնասիրություն և այլն. մարզումներ՝ դահուկով, արագ վազքի մեջ և այլն:

3. Դոմինանտ՝ ռիթմի և գեղարվեստական (էսթետիկական) շարժումների զարգացման դեպքում:

Տիպական դաս՝ տարրական դպրոցի դասարանների համար (I և II դասարան)

Ներդրավող վարժություններ և դասի նախապատրաստական մաս՝ 5—7 րոպե: Ողակներով շարքի կանգնելը, վորով անհրաժեշտ է յերեխաներին կազմակերպել դասը տանելու համար. քայլք, խաղ միջին շարժունության կամ շարժումների առանձին տարրեր՝ ոտների, ձեռների, իրանի համար. Ֆիզկուլտ րոպեյի տարրեր:

Հիմնական մաս՝ 10—15 րոպե:

Խաղեր՝ մեծ շարժունությամբ կամ նորմատիվ ցուցանիշների առանձին տեսակներ:

Դասի ամփոփող մասը՝ 5—7 րոպե:

Քայլք, պասիվ խաղ:

III և IV դասարան

I սերիա—ներդրավող վարժություններ՝ 3—5 րոպե.

2. Խաղերի և վարժությունների համար տարրական կառուցումներ, բ) քայլ:

II սերիա—նախապատրաստական բաժին. մարմնի առանձին մասերի համար վարժություններ, վորոնք ունեն նմանող վարժությունների, մարմնամարզական շարժումների, առանձին խաղերի բնույթ. Ֆիզկուլտ րոպեյի տարրեր, գնդակի դպրոց՝ 5—10 րոպե:

III սերիա—Հիմնական բաժին՝ 25—30 րոպե. ա) միջին շարժունության խաղեր, բ) մեծ շարժունության խաղեր (վազքով, թռիչքներով և այլն) գ) գործադրական վարժությունների առանձին տարրեր (վազք, թռիչք, նետում, մագլցում և այլն):

IV սերիա—ամփոփող բաժին՝ 2—5 րոպե. ա) հանգիստ խաղեր, բ) քայլք: Վարժություններից (դոմինանտ՝ վորևէ մեկի վրայի շեշտը թե՛ նախապատրաստական, և թե՛ ամփոփող սերիաներում իր արտացոլումն այնպիսի տարրական վարժություններ ընտրելու միջոցով պետք է գտնի, վորոնք շեշտված տեսակի հետ են կապված:

Դասի հիմնական բաժնում (3-րդ սերիան) կարելի յե տալ տարբեր տեսակի մեկ կամ յերկու վարժություն և պարտադիր կերպով՝ թեկուզ մեկ տեսակը խաղի մեթոդով (այս բղխում է խաղի մեթոդի արժեքավոր լինելուց, թե էմոցիոնալ լինելու և թե հոգեֆիզիկական հատկություններ մշակելու տեսակետից):

III սերիան հնարավոր է անցկացնել նաև կոմպլեքսային ձևով (տեղաշարժման համակցված միջոցներ, արգելքների հաղթահարում, թեթև առարկաների տեղափոխում, նետում): Նետումը, հավասարակշռությունը և վարժությունների ուրիշ տեսակները խաղի մեթոդով տալու ժամանակ մտցվում են հիմնական սերիայի մեջ՝ առանձին դասերի ընթացքում փոխարինելով վարժությունների վորևէ տեսակին:

Ֆիզկուլտ էքսկուրսիաներ.—Դասացուցակում պետք է անպայման ժամ հատկացնել էքսկուրսիայի համար, և այդ նկատի ունենալ ֆիզկուլտուրայի ուսման պլանը կազմելիս:

Էքսկուրսիա կազմակերպելու դեպքում ղեկավարը լավ պետք է իմանա (ճանաչի) էքսկուրսիայի վայրը, նախորոք ծրագրի մարշրուտը, ճշտորոշ պլան կազմի՝ հաշվի առնելով ժամանակը, աշակերտների կարողությունը և բեռնվածությունը, խուսափելով ծանրաբեռնումից — գերլարումից:

Եքսկուրսիայի խնդիրներն են․—1․ առողջացնող, 2․ ֆիզկուլտուրային, կազմակերպչական ունակությունների դաստիարակում, 3․ գործադրական ունակությունների դաստիարակում—դահուկներով ման գալու, լողալու տեխնիկայի ուսումնասիրություն, 4․ հարմարվելու շնորհք և տեղական պայմանների օգտագործում (վայրի հետ կապված ռազմականացված խաղեր)։ Եքսկուրսիաները պետք է տարվեն վորոշակի շեշտով—որինակ՝ դահուկներ, սահնակներ, լող, ամռան նորմատիվ ցուցանիշների ընդունում և մարզում (քայլք, նետում, վազք, թռիչք, մագլցել, սողալ, խաղեր նաև ագիտացիա՝ նոր կենցաղի և ֆիզկուլտուրայի նկատմամբ՝ կոլխոզում)։

Դասի սխեման

Շեշտ—դահուկներ (IV դասարանի համար)․

1․ Հագնելը (դահուկների ամրացնելը)․ կարելի յե սահել մինչև դահկային կայարանը՝ 10—15 րոպե։

2․ Քայլք դահուկներով․ քայլել կարելի յե դահուկի հետքով, կամ հարթ ձյունի վրայով, կտրտված վայրով․ վերելք և վայրեջք։ Խաղ դահուկներով՝ հետախուզական նպատակներով՝ 25—50 րոպե։

3․ Վերադարձ։ Դահուկների յուղելը և հավաքելը (կամ հանձնումը)՝ 15—30 րոպե։ Ընդամենը 50—95 րոպե։

Եքսկուրսիայի սխեման

Շեշտը—տեղափոխության և արգելքների հաղթահարման միջոցների ուսումնասիրություն․ վայրում ռազմականացված խաղեր։

1․ Շարք կանգնելը, քայլք—առաջ (մարշ)՝ 10—20 րոպե․

2․ Տեղաշարժ՝ զանազան միջոցներով—կապված արգելքների հաղթահարման հետ։ Խաղ՝ վայրի պայմաններում՝ 30—60 րոպե։

3․ Վերադարձ (դանդաղ քայլք, քայլք—մարշ)՝ 10—20 րոպե։

Ընդամենը 50—100 րոպե։

Վերը բերած եքսկուրսիաներից յուրաքանչյուրը կարելի յե

լայնացնել իր ժամանակի շրջանում։ Նման դեպքերում եքսկուրսիան կարող է լինել ավելի կամ պակաս տևողական, և դրա մեջ անհրաժեշտ կերպով պետք է մտնի նաև հանգիստը—անպայման մասնակիցների սննդի կազմակերպմամբ (ձմեռ ժամանակ—անպայման տաք սնունդ)։

Կարճատև եքսկուրսիաներ—1—2 ակադեմիական ժամ տևող․ կարելի յե անցկացնել դասերի ընթացքում։ Երկարատև եքսկուրսիաներ 4—6 ժամ տևողությամբ՝ տարվում են ֆիզկուլտ մասսայական աշխատանքների գծով։

VII․ ՖԻԶԿՈՒԼՏ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ)

Ֆիզկուլտուրան, վորպես պարտադիր առարկա մտցնելով ուսումնական պլանի մեջ՝ յերբեք չի կարելի բավականանալ վեցօրյակում մեկ ժամ դպրոցում դասավանդելով։ Ուսումնական-դպրոցական կարգով տարած ֆիզկուլտուրան պետք է ազդակ հանդիսանա յերեխաների ինքնագործունեությանը՝ դեպի ֆիզկուլտ շարժումը, դեպի աշակերտական աշխատանքի և կենցաղի լայն միջոցառումները, դեպի յերեխաների հանգստի և ժամանցի օգտավետ կազմակերպումը։ Դրա համար էլ, ուսումնական ժամերի հետ միասին, ֆիզկուլտ դասատուն պետք է յերեխաների նախաձեռնությունն ու ինքնագործունեությունը մղի դեպի ֆիզկուլտ մասսայական աշխատանքների անցկացումը․

1․ Դեպի ֆիզկուլտ խմբակի աշխատանքների ծավալումը,

2․ Դեպի դպրոցի և արտադրության ֆիզկուլտ-սպասարկումը—առավոտյան մարզանք և լիցք, ֆիզկուլտ րոպե, նախաճաշի և ճաշի ու դասերի ընդմիջումներին խաղեր և զվարճալիքներ․

3․ Դեպի կամպանիաների անցկացումը—սանիտարական և ֆիզկուլտարշավներ, տոնակատարություններ և մրցումներ, հարվածային ամսօրյակներ, առողջ կենցաղի միամսյակներ, առավոտյան կինո-ցուցադրումների և առողջության տոներ։

Ամբողջ ֆիզկուլտ մասսայական աշխատանքները անպայմանորեն պետք է յենթարկված լինեն դպրոցի ուսումնա-արտադրական նպատակներին։

Ֆիզկուլտ-մասսայական աշխատանքը պլանավորվում է ար-

տաղտկոցական հրահանգչի միջոցով՝ դասատուի հետ միասին, և կապվում է աշխույժ, հետաքրքրաշարժ հոգեվիճակներից աշխատանքների հետ։

Մասսայական ձեռնարկումների հիմնական ակտիվն ու անցկացնողն են հանդիսանում պիոներական կազմակերպությունները։ Ֆիզկուլտ ակտիվի պատրաստումը տեղի յե ունենում ուսումնական ժամերի, նույնպես և հատուկ արտադասարանական պարապմունքների միջոցով։ Ֆիզկուլտ մասսայական ձեռնարկումներին մասնակցելը յերեխաների մեջ մշակում է անհրաժեշտ ֆիզկուլտ կազմակերպչական ունակություններ. նա նպաստում է յերեխաների գիտցածի ստուգմանն ու այդ ունակությունները կենցաղի մեջ մտնելուն։

Ֆիզկուլտ մասսայական աշխատանքների միջոցով անհրաժեշտ է ուժանդակություն ցույց տալ դպրոցին առողջապահական միջոցառումներ անցկացնելու ժամանակ (պայքար մաքուր օդի համար, պայքար մարմնի, հագուստի, բնակարանի, պարապմունքի և աշխատանքի վայրերի մաքրության համար և այլն)։

ԽՄԲԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Վորպես խմբակային աշխատանքների բովանդակություն կարող է հանդես գալ ծրագրում ցույց տված և յուրաքանչյուր բաժնում նշած լրացուցիչ նյութը։ Խմբակային պարապմունքների ընթացքում անհրաժեշտ է մարզական աշխատանքներ տանել անցած նյութի վերաբերյալ և վերամշակել այն բոլորը, վոր ինչ-ինչ պատճառներով հնարավոր չի համարվում անցնելու ուսումնական պլանային պարապմունքների ընթացքում։ Ֆիզկուլտ խմբակի աշխատանքները տարրական դպրոցում կառուցվում են ինքնագործ աշխատանքների կանոնադրության հիման վրա։

ՄԱՐԶԱՆՔՆԵՐ ՄԻՆՉԵՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ

Մինչև պարապմունքներն սկսվելը կազմակերպած մարզանք կատարելը առողջապահական և կազմակերպչական ու կարգապահական նշանակություն ունի և նպաստում է դպրոցի ուսումնա-մանկավարժական աշխատանքներին։

Մինչև պարապմունքներն սկսվելը կազմակերպած մարզանքը կատարվում է հրապարակում, դահլիճում կամ վորևէ այլ շենքում՝ ֆիզկուլտ դասատուի, դասարանավարի կամ պատրաստված ֆիզկուլտուրնիկի ղեկավարությամբ։ Առավոտյան մարզանքը կատարելու համար մի քանի դասարան պետք է միացնել։ Յեթե դպրոցի պայմանները հնարավորություն չեն ստեղծում մինչ դասերի սկսելը մասսայական մարզանք կատարել, այդ դեպքում վերջինս դասարանում՝ ֆիզկուլտ կազմակերպչի ղեկավարությամբ, կամ մանկավարժի հսկողությամբ է կատարվում։ Ռադիոֆիկացիայի յենթարկված դպրոցներում նպատակահարմար է առավոտյան մարզանքները ռադիոյով կատարել։

Վարժությունները 10—12 *որը մի անգամ փոփոխվում են. և աշակերտությանը պետք է զբաղեցնել մինչ դասերն սկսելը, վոչ ավելի, քան* 7—10 *րոպե։*

Դասերից առաջ կազմակերպած մարզանքի տիպական սխեմա

1. *Վարժություններ, վորոնք նպատակ ունեն լայնացնելու կրծքավանդակը և ուղղել վողնաշարը.*
2. *Վարժություններ, վորոնք տեղական բնախոսական ներազդեցության նպատակ են հետապնդում (վոտքերի մկանների վարժություններ)։*
3. *Վարժություններ, վորոնք ընդհանուր բնախոսական արժեք են ներկայացնում (վազք, թռիչք, ցատկումներ)։*
4. *Վարժություններ, վորոնք աշխատանքի մեջ են ներգրավում մեծ մկանային խմբերը (հատկապես իրանի մկանները)։*
5. *Վարժություններ, վորոնք համակցում են շարժումները, հավասարակշռություն պահպանելու փորձեր են կատարում, հատկապես չեշտելով ուշադրությունը (դանդաղ աշխատանք)։*

Ծանոթություն.—*Ձեռքի մկանների վարժությունները կատարվում են այլ վարժությունների հետ կապակցված։*

Յեթե առավոտյան մարզանքը տեղի յե ունենում դասարանում, ապա անց են կացվում 1, 2, 3, 5 *վարժությունները։*

Լիցքը կատարվում է տանը—առավոտյան քնից արթնանալուն պես։

Ուսումնական տարեսկզբին աշակերտության հետ զրույց է անցկացվում՝ ֆիզկուլտուրան կենցաղի մեջ մտցնելու և առավոտյան լիցքի անհրաժեշտության մասին: Վարժությունների կոմպլեքսը ձեռք է բերվում ֆիզկուլտուրայի դասերի ընթացքում: Վարժությունը պետք է լինի պարզ, հեշտ և հասակային խմբերին համապատասխան: Ծնողական ժողովներում զրույց է անցկացվում աշակերտների առավոտյան լիցքի անհրաժեշտության շուրջը: Լիցքի ստուգումը կատարվում է աշակերտությանը հարցնելու միջոցով, բացատրություններով և ցույց տալով, վորոշ դեպքերում էլ՝ ծնողների հետ ունեցած գրագրությունների միջոցով: Տանը կատարած լիցքը 7—10 րոպեյից ավելի չի տևում: Վարիանտները տարվա մեջ 4—5 անգամ փոփոխության են յենթարկվում: Յերբ յերեխաները տանը կանոնավոր կերպով առավոտյան լիցք են կատարում, մինչ դասերն սկսելը մարզանքի անհրաժեշտությունը վերանում է:

ԱՌԱՎՈՏՅԱՆ ԼԻՑՔԻ ՏԻՊԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

1. Վարժություններ, վորոնք ուժեղացնում են շնչառության օրգանների աշխատանքը—նպաստում են կրծքավանդակի լայնացմանը և ողնաշարի ուղղվելուն:

2. Վարժություններ, վորոնք տեղական բնախոսական ներգործության արժեք են ներկայացնում (վոտքի մկանների վարժություններ):

3. Վարժություններ, վորոնք ներգրավում են մեծ մկանային խմբերը, գլխավորապես իրանի մկանները:

4. Վարժություններ, վորոնք կանխող (պրոֆիլակտիկ) նշանակություն ունեն՝ շեշտը դրված մեջքի մկանների վրա:

5. Վարժություններ՝ շարժումների համակցության նպատակով (հավասարակշռություն):

6. Վարժություններ, վորոնք ընդհանուր բնախոսական արժեք են ներկայացնում (վազք, թռիչքներ, ցատկումներ):

7. Վարժություններ, վորոնք հանգստացնող նշանակություն ունեն (դանդաղ քայլք):

8. Շնչում, լվացում կամ դուշ:

Ծանոթություն.—Ձեռքի մկանների վարժությունները կատարվում են մյուս վարժությունների կապակցությամբ: Ամեն անգամ վարժությունների կոմպլեկսը կազմելիս, ամեն մի խմբից վերցվում է մեկական վարժություն:

ՖԻԶԿՈՒԼՏ-ՐՈՊԵ

Ֆիզկուլտ-րոպեն ֆիզիկական վարժությունների մի շարք է, վոր կատարվում է անմիջապես նույն պայմաններում, վորտեղ աշակերտների սովորական պարապմունքներն են կատարվում—դասարանում, ժողովում, արհեստանոցում:

Ֆիզկուլտ-րոպեների իմաստն այն է, վոր պայքար մղվի հոգնածության, յերեխաների վատ սովորությունների (կռացած մեջք, վորովայնի թույլ սեղմվածք, մակերեսային շնչառություն) դեմ, շարժվեն, թարմանան մարմնի անդամները, վորոնք դասարանում յերկար ժամանակ անշարժ դրության մեջ են յեղել, ուժեղանա արյան շրջանառությունը և բարձրանա յերեխաների աշխատունակությունը:

Ֆիզկուլտ րոպեյի անցկացման ժամանակը կարգավորում է մանկավարժը, ավելի նպատակահարմար է այն անցկացնել վերջին դասերի յերկրորդ կեսին, այսինքն՝ յերեխաների աշխատունակության սովորական անկման ժամանակ: Վարժությունները սովորում են ֆիզկուլտ դասերի ընթացքում, և սովորաբար կիրառվում են ֆիզկուլտ կազմակերպիչների, կամ մանկավարժների միջոցով: Վարժությունները պետք է իրար հաջորդեն 10—12 օրը մի անգամ: Ֆիզկուլտ րոպեն սկսելու հրահանգն ստանալուց մինչև աշխատանքի անցնելը 2—3 րոպեյից ավելի չպետք է տևի:

ՖԻԶԿՈՒԼՏ-ՐՈՊԵՅԻ ՏԻՊԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

1. Վարժություն.—Հոդերի, կապերի, մեջքի և վզի մկանների վերաբերյալ («ձգվել» խոր շնչումով):

2. Վարժություն.—Իրանի մկանների համար և փորովայնային մասում առաջացած միապաղաղ (ճահճացած) վիճակի վերացում:

3. Վարժություն.—Ողնաշարի ուղղման նպատակով:

Ծանոթություն.—Ֆիզկուլտ րոպեն անցկացնելուց առաջ լուսամուտները կամ օդանցքները պետք է բացել: Այնպիսի սենյակներում, վորտեղ մաքուր օդը քիչ է (քիմիական լաբորատորիա), ֆիզկուլտ-րոպեն անցկացնելուց պետք է խուսափել:

8. ՖԻԶԿՈՒԼՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Ֆիզկուլտուրայի սիստեմի միասնությունը պահանջում է ֆիզկուլտ ունակությունների և գիտելիքների պլանային հաշվառում, յուրաքանչյուր քառորդում վորոշակի առաջադրանքների կատարում աշակերտության կողմից և ունի հետևյալ 5 հիմնական բաժինը.

1. Ուսումնական աշխատանք.
2. Ֆիզկուլտ կազմակերպչական ունակություններ,
3. սանիտարական առողջապահական ունակություններ,
4. բժշկա-մանկավարժական տվյալներ,
5. Ֆիզկուլտ-մասսայական աշխատանք:

1. I բաժնի—ուսումնական աշխատանքի—հաշվառումն ամփոփում է հետևյալ կետերը. ա) հաճախում, բ) նախապատրաստական վարժությունների յուրացման հաշվառում. գ) գործադրական վարժությունների և ունակությունների հաշվառում—նորմատիվ ցուցանիշների կատարումը, դ) թեորետիկ գիտելիքների հաշվառում:

Հաճախման և ուշացման հաշվառումը—պատճառները պարզաբանումով, կատարվում է ամեն մի դասին հաշվառման ընդհանուր տետրակում դրած պայմանական նշանների միջոցով:

Ընդհանուր — նախապատրաստական վարժությունների հաշվառումը, յուրաքանչյուր դասի ընթացքում տարած հսկողության հետ միասին անց է կացվում քառորդի, կամ ամսվա վերջին դասերին (նայած թե վորքան ժամանակով է տրված առաջադրանքը)՝ պարզելու համար, թե ինչ աստիճան ճիշտ և յուրացրած խմբի անցած նյութը, իսկ յերբ խնդիր է դրված ստուգելու, թե ինչպես է յուրացված առավոտյան մարզանքը, ապա ստուգվում է, թե ինչ աստիճան անսխալ ու ճիշտ, անգիր կեր-

պով են կատարվում առավոտյան մարզանքները: Յեթե դասարանում յետ մնացողներ են պատահում, նրանց վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնել: Նորմատիվ—ցուցանիշների հաշվառումը կատարվում է յուրաքանչյուր դասի ընթացքում: Տվյալ դասարանի, ինչպես և դասատուի գնահատականը պետք է կախված լինի այն բանից, թե աշակերտության հիմնական մասսան, տարեվերջին ինչ աստիճան է մոտեցել առաջադրած ցուցանիշները կատարելուն և ինչպես է կատարում այդ ցուցանիշները: Ստուգումները պետք է կազմակերպել այնպես, վոր չափից դուրս լարվածություն (ազարտ) չստեղծվի, անհատական մաքսիմալ վարժությունների ու բռնվածություն ցույց տալու հետևից ընկնել (погоня) չլինի, յերեխաները չհոգնեն և այլն. ընդամենը պետք է նկատի ունենալ, վոր նորմաների այսօրինակ հաշվառումը յերբեք չպետք է մեխանիկորեն տարվի:

Հիմնական նյութերն ու ունակությունները համարեցրած են միջին առողջ յերեխայի պահանջներին, վորը նախադպրոցական հիմնարկից անցել է դպրոց, հետը բերելով ֆիզկուլտ ունակությունների վորոշ մինիմում և գիտելիքներ, և տարեցարի մասնակցել է ֆիզկուլտ պարապմունքներին: Այս նշանակում է, վոր դասատուն, ինչպես հարկն է, իր պահանջները պետք է պակասեցնի այն յերեխաների նկատմամբ, վորոնք նորմալ առողջություն չունեն, կամ ինչ-ինչ պատճառներով սիստեմատիկ ֆիզկուլտ պատրաստություն չեն ստացել, իհարկե՝ անպայման աշխատելով այդ յերեխաներին հասցնել ընդհանուր մակարդակին:

Այն յերեխաները, վորոնք իրենց դասարանի հետ համեմատած մեծ հասակ ունեն և լավ ցուցանիշներ են տալիս, ավելի վողևորելու համար, նրանց տված ցուցանիշները պետք է համարել հաջորդ հասակային խմբակի ցուցանիշներ:

Նորմատիվ ցուցանիշների հաշվառումը մտնում է դպրոցական հաշվառման միասնական սիստեմի մեջ՝ մյուս առարկաների համեմատությամբ հավասար սկզբունքով՝ տվյալ աշակերտի ուսումնական աշխատանքի առաջադիմությունը և մի դասարանից մյուսն անցնելու հնարավորությունը վորոշելու համար:

Թեորետիկ գիտելիքների հաշվառումը կատարվում է քա-

ռորդի վերջին դասերից մեկում՝ կամ գրավոր, կամ բանավոր պատասխանների միջոցով, վոր յերեխաները տալիս են ուսուցչի մի քանի հարցերին։

2. Ֆիզկուլտ-կազմակերպչական ունակությունները կարող են հաշվառման յենթարկվել հետևյալ ձևով. քառորդի սկզբում աշակերտությանը տրվում է ֆիզկուլտ կազմակերպչական առաջադրանք, վորը կարող է կատարվել և դասերից դուրս՝ էքսկուրսիաների ընթացքում, դասամիջոցներին, ճաշարանում, կոլեկտիվում կամ տանը։ Քառորդի ընթացքում դասատուն ծանոթանում է առաջադրության կատարման ընթացքին, տեղ-տեղ գլխի գցում, ոգնում, իսկ քառորդի վերջում արդեն տալիս է իր գնահատականը, ինչպես և այս կամ այն աշակերտն իրեն հանձնարարած առաջադրանքը կատարել։

Ֆիզկուլտ կազմակերպչական ունակությունների հաշվառումը կատարվում է տարվա ընթացքում։ Արդյունքային գնահատականը տրվում է ուսումնական տարեվերջին։

